Կրթության կազմակերպման գործում կարևորելով համադրական վերլուծությունը, առաջավոր փորձի ուսումնասիրումը՝ համագործակցության հուշագիր կնքվեց Գավառի պետական համալսարանի և Սանկտ Պետերբուրգի պետական տնտեսագիտական համալսարանի միջև՝ համատեղ գիտական կոնֆերանսների կազմակերպման, գիտական աշխատանքների իրականացման, ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավման, գիտաարտադրական պրակտիկաների անցկացման, պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստումների կազմակերպման նպատակներով, ինչպես նաև հնարավորություն ընձեռելով ուսանողներին և անձնակազմին՝ օգտվելու համալսարանի տեղեկատվական նյութերից, գրադարանային ֆոնդից:

Հաշվետու ուսումնական տարում համալսարանն իր պատրաստականությունը հայտնեց անդամակցելու հանրապետությունում բարձրագույն մասնագիտական կրթության կառա-

վարման համակարգին և մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի մշակման ու ներդրման նպատակով Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում «Կրթական ծրագրերի կենտրոնին», և «Synergy Ինթերնեյշնլ Սիսթեմզ» ընկերության միջոցներով համալսարանում տեղադրվեց ծրագրային փաթեթ՝ պահանջվող տեխնիկական հատկորոշիչներով: Այս գործընթացը հնարավորություն կընձեռի համալսարանում ունենալու տեղեկատվության հավաքագրման և պահպանման առավել արդյունավետ համակարգ, որն էլ իր դրական ազդեցությունը կունենա կրթության կազմակերպման, կրթության որակի վերահսկման, կրթական ծրագրերի մշտադիտարկման, որակի ներքին գնահատման և ակադեմիական գործընթացների էլեկտրոնային կառավարման գործում:

Գավառի պետական համալսարանի և Սերբիայի Նիշի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի միջև կնքվեց համագործակցության հուշագիր՝ իրավաբանական կլինիկայում ուսանողների վերապատրաստումների կազմակերպման, երկու ակադեմիական կիսամյակ տևողությամբ միջազգային և եվրոպական իրավական համակարգերի վերաբերյալ ընդհանուր ներածական դասընթացների կազմակերպման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հուշագիր կնքվեց նաև Գավառի և Թելավիի պետական համալսարանների միջև՝ հումանիտար, բնագիտական, սոցիալական, տնտեսագիտական բնագավառներում համագործակցության, հետազոտողների, աշխատակազմի, ուսանողների փոխանակման ծրագրերում, ինչպես նաև ուսանողների, աշխատակազմի շրջանում օտար լեզուների, համակարգչային գիտելիքների, կրթության, հետազոտությունների, վարչական ծառայությունների ուղղությամբ լավագույն փորձի փոխանակման նպատակներով:

Տարբեր կրթական համակարգերում առկա լավագույն փորձի ուսումնասիրման, կրթության ոլորտում ակադեմիական և մշակութային համագործակցությունը զարգացնելու նկատառումներով համագործակցության հուշագիր է կնքվել նաև Մոսկվայի պետական տարածաշրջանային հումանիտար ինստիտուտի հետ:

Եվրոպական միության «Erasmus Mundus» ծրագրի նորմատիվ փաստաթղթերի վրա հիմնված, «Անդրեվրոպական շարժունության ծրագիր՝ կրթությունը կայուն զարգացման համար» խորագրով փոխհամաձայնության հուշագիր է կնքվել համալսարանի և TEMPO-ի միջև՝ ճարտարագիտության, բիզնեսի կառավարման, տեխնիկական և բնական գիտությունների ոլորտում Անդրեվրոպական փորձի, գիտելիքի, կառավարման սկզբունքների փոխանակումներին նպաստելու նպատակով:

Հաշվետու ուստարում Գավառի պետական համալսարանը և Բուլղարիայի Դոբրիչի միջազգային համալսարան - քոլեջը փոխհամագործակցության հուշագիր են կնքել՝ ուսանողների և անձնակազմի ակադեմիական շարժունակության, ուսանողների, շրջանավարտների, գիտական նյութերի, հրատարակությունների և տեղեկատվության, մշակութային փոխանա-

կումների, ինչպես նաև համատեղ հետազոտական գործունեության իրականացման նպատակով:

Առաջնորդվելով եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման, Բոլոնիայի գործընթացի ընթացակարգային պահանջների կատարման անհրաժեշտությամբ, ինչպես նաև ուսումնասիրելով այլ առաջատար բուհերի փորձը՝ հաշվետու ուստարում բուհում մշակվեց և գիտխորհրդի հաստատմանը ներկայացվեց «Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման համակարգում բակալավրի կրթական աստիճանում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման» կարգը:

ԳՊՀ-ում իրականացվող կրթական ծրագրերի վերաբերյալ հանրությանը տեղեկատվություն տրամադրելու, բուհում իրականացվող ուսումնական, կրթական գործընթացների հրապարակայնությունը ապահովելու նպատակով մշակվեց և գիտխորհրդի հաստատմանը ներկայացվեց «Գավառի պետական համալսարանում հանրային նշանակությամբ միջոցառումների կազմակերպման և դրանց մասին իրազեկման ու հասարակության հետ տարվող աշխատանքների կանոնակարգը», տպագրվեցին ԳՊՀ դիմորդի, ԳՊՀ բակալավրիատի ուսանողի, ԳՊՀ մագիստրատուրայի ուսանողի ուղեցույցները, որոնք համառոտ տեղեկատվություն են պարունակում ընդունելության պահանջների, կանոնների, համալսարանի ֆակուլտետների կողմից առաջարկվող կրթական ծրագրերի, ուսանողների իրավունքների և պարտականությունների, ԳՊՀ վարչական և ուսումնական կառույցների վերաբերյալ: Բոլոր մասնագիտությունների գծով մշակվեցին բակալավրի ու մագիստրոսի կրթական աստիճանների ուսանողների ուսումնառության ուղեցույցը և դասընթացների տեղեկագիրքը, կրթական ծրագրերի հայեցակարգերը, որոնք բովանդակում են կրեդիտային համակարգի հիմնադրույթները, ուսումնական գործընթացի կազմակերպման ու ուսանողների գնահատման կարգերը, առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքը, բովանդակությունը, ակնկալվող կրթական վերջնարդյունքները, գնահատման մեթոդները ու չափանիշները, շրջանավարտների կարիերայի և աշխատանքի անցնելու հնարավորությունները:

Չհաշվետու ուստարում կրթության որակի ապահովման նպատակով, կարևորելով իրականացվող կրթական ծրագրերի ուսումնամեթոդական ապահովվածությունը, ինչպես նաև ուսանողների և դասախոսների էլեկտրոնային հաղորդակցությունն ակտիվացնելու համար Գավառի պետական համալսարանում մշակվեց և ներդրվեց էլեկտրոնային ուսուցման համակարգը: Չամակարգը հնարավորություն է ընձեռում համացանցային տիրույթում տեղադրելու ուսուցման փաթեթներ, անցկացնելու տեսադասախոսություններ, հետադարձ կապի միջոցով պատասխանելու օգտվողների կողմից ներկայացվող հարցերին, իրականացնելու առցանց խորհրդատվություններ: Չամակարգի միջոցով իրականացվում է վիճակագրական տվյալների վերաբերյալ հաշվետվությունների կազմում և տրամադրում Ակա-

դեմիական քաղաքականության վարչությանը, Որակի ապահովման բաժնին: Ընթացքի մեջ են համակարգի զարգացմանն ուղղված նոր ծրագրերի մշակումը, նոր մոդուլների ներդրումը, համակարգի ծրագրային ապահովման և սերվերի աշխատանքային վիճակի պարբերաբար ստուգումները, անվտանգությանն ուղղված աշխատանքների կատարումը ու վերահսկումը:

Համակարգի կիրառումը նպաստելու է դասախոսների, ուսանողների, աշխատակիցների շրջանում աշխատանքի նոր մշակույթի ձևավորմանն ու կատարելագործմանը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետման մակարդակի բարձրացմանը, որն էլ իր էական ազդեցությունն կունենա կրթության որակի բարձրացման գործում: Համակարգի ռեսուրսներից օգտվելու, ինչպես նաև համակարգի ուսումնական փաթեթների ներբեռնման վերաբերյալ օգտվողների համար պարբերաբար կազմակերպվում են սեմինար-խորհրդատվություններ:

Ուսումնական փաթեթը բաղկացած է դասընթացի ընդհանուր նկարագրից, դասախոսություններից՝ դասախոսությունների շնորհանդեսների ֆայլերի կցագրման հնարավորությամբ, առաջարկվող մասնագիտական գրականության ցանկից, էլեկտրոնային գրքերից՝ ֆայլերի կցագրման հնարավորությամբ, օգտակար համացանցային կայքերից, օգտակար տեսանյութերից, անհատական և կուրսային աշխատանքների թեմաներից, միջանկյալ, ամփոփիչ քննական հարցաշարերից, տեսաձայնագրված դասախոսությունների տեսանյութերից, հայտարարություններից:

Համալսարանի քաղաքացիական պաշտպանության համակարգի կառավարման, ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման, ռազմական դրության ժամանակ պահանջվող գործունեության, համալսարանի աշխատողների և սովորողների պաշտպանության կազմակերպման, համալսարանական գործունեության կայունության ապահովման, փրկարարական անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման, ինչպես նաև ռազմական դրության ժամանակ համալսարանի վրա դրված խնդիրների կատարման կարգի, ռեժիմի, միջոցների հստակեցման նպատակով ՀՀ Գեղարքունիքի մարզի փրկարարական վարչության հետ համատեղ մշակվեց և հաստատվեց համալսարանի քաղաքացիական պաշտպանության պլանը:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են ԳՊՀ շրջանավարտների միության և կարիերայի կենտրոնի (պաշտոնական կայքէջը՝ www.career.gsu.am) աշխատանքները՝ հետադարձ կապի ապահովման նպատակով բացված info@gsu.am պաշտոնական էլեկտրոնային հասցեով ուղարկված, շրջանավարտներին հետաքրքրող ցանկացած հարցի ստույգ պատասխան տալով, ներկայացված առաջարկությունները դարձնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման համար քննարկման և եզրակացությունների կատարման, որոշումների կայացման առանցքային նյութ և նպատակ ունենալով աջակցելու նորա-

վարտ շրջանավարտներին, կայքի միջոցով ծանոթացնելու աշխատանքի տեղավորման գործակալությունների առաջարկած թափուր տեղերին:

Կրթության որակը համարելով գերնպատակ՝ համալսարանը ապահովել է մշտական մասնակցություն հանրապետությունում, ինչպես նաև արտերկրի գործընկեր բուհերում կազմակերպվող տարբեր համաժողովների, սեմինարների, գիտաժողովների՝ նվիրված բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումներին, ակտիվորեն մասնակցել ծավալված քննարկումներին, ներկայացրել առաջարկություններ:

Համալսարանը սերտորեն համագործակցել է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կերտրոնի, Բաց հասարակության հիմնադրամի, Հայաստանում «ՏԵՄՊՈՒՄ» ծրագրի ազգային գրասենյակի, հանրապետության բոլոր պետական բուհերի հետ:

Համալսարանի կրթական միջավայրը բարենպաստ է կրթական ծրագրերի իրականացման համար, և այն մշտապես արդիականացվում, վերանայվում ու համալրվում է: «Օրանժ Հայաստանը»՝ որպես ոչ միայն հեռահաղորդակցության ոլորտում կայացած ընկերություն, այլև որպես կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն կրող սուբյեկտ, բարձր առաջադիմություն ունեցող և սոցիալապես անապահով ուսանողներին կրթաթոշակներ տրամադրելուց բացի, Գավառի պետական համալսարանում բացեց Wi-Fi անկյուն՝ հնարավորություն ստեղծելով ուսանողներին և անձնակազմին առավել արդյունավետորեն օգտվելու համացանցի ընձեռած հնարավորություններից:

Հաշվետու ուստարում համալսարանում կազմակերպվեց ամենամյա 15-րդ գիտաժողովը՝ նվիրված Գավառի պետական համալսարանի հիմնադիր ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ՀՀ վաստակավոր մանկավարժ Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 85-ամյակին: Գիտաժողովի ընթացքում զեկույցներով հանդես եկան և՛ համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, և՛ համագործակից բուհերի ներկայացուցիչներ: Երկօրյա գիտաժողովին ներկայացվեցին 117 գիտական զեկույցներ (6-ը ներկայացվել են Վրաստանի Թելավիվի համալսարանի դասախոսների կողմից):

Հաշվետու ուստարում համալսարանի 171 դասախոսներից 89-ը ունեն գիտական աստիճաններ. 75-ը գիտությունների թեկնածուներ են, իսկ 14-ը՝ դոկտորներ:

Դասախոսական կազմի մանկավարժական որակների կատարելագործման, առաջավոր փորձի փոխանակման և լավագույն փորձի տարածման նպատակով հաշվետու ուստարում պարբերաբար իրականացվել են սեմինար-խորհրդատվություններ՝ նոր կրթական տեխնոլոգիաների, ինտերակտիվ, փոխներգործուն մեթոդների, ուսուցման ու ուսումնառության ժամանակակից մեթոդների, դասընթացների արդյունավետ պլանավորման և այլ ուղղություններով:

Բուհի առաքելության, իրականացրած կրթական ծրագրերի բովանդակության, կրթության կազմակերպման գործընթացների, ուսումնաօժանդակ ծառայությունների, ակադեմիական միջավայրի բարելավման, ներքին և արտաքին գնահատումների արդյունքում վերհանված խնդիրների լուծման նպատակով հաշվետու ժամանակահատվածում համալսարանում կազմակերպվել են խորհրդատվությունների, վերապատրաստումների, սեմինար-խորհրդակցությունների շարք՝ տեղական, ինչպես նաև Բելգիայից ժամանած բարձրագույն կրթության միջազգային խորհրդատուների մասնակցությամբ՝ հետևյալ թեմաներով.

➤ Մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգերի մշակում և բարելավում,

➤ Բուհի ինքնագնահատման գործընթացի մեթոդաբանությունը և գործիքները,

➤ Բուհի առաքելությանը և նպատակներին բուհի կառավարման համակարգի, վարչական կառույցների գործունեության կառուցակարգերի համապատասխանության գնահատում,

➤ Բարձրագույն մասնագիտական կրթության որակի ապահովման գործընթացի կառավարման և վերահսկողության հիմնահարցեր,

➤ Բուհի հետազոտական և ստեղծագործական գործունեության արդյունավետության գնահատման կառուցակարգերն ու գործիքները,

➤ Բուհի ուժեղ և թույլ կողմերի գնահատման կառուցակարգերը՝ ըստ եվրոպական ուղենիշների, SWOT վերլուծությունների կատարում,

➤ Հանրությանը բուհի գործունեության վերաբերյալ իրազեկում,

➤ Դասավանդման մեթոդների, ուսումնառության ձևերի և դասընթացի կրթական վերջնարդյունքների հասանելիության գնահատում,

➤ Էլեկտրոնային հարցումների կազմակերպում և արդյունքների մշակում,

➤ Հետադարձ կապի մեխանիզմների մշակում,

➤ Որակ և որակի ապահովում. ընդհանուր հասկացություններ,

➤ Մասնագիտական կրթական ծրագրերի մշակում, ուսանողակենտրոն մոտեցում և որակի ապահովում,

➤ Բուհի ինքնագնահատման գործընթացի մեթոդաբանություն,

➤ Բուհի տրամադրած կրթական ծառայությունների և օգտագործած ռեսուրսների վերաբերյալ շահակիցների կարծիքների գնահատում,

➤ Ուսանողների գնահատման գործընթացի արդյունավետության որոշման մեթոդաբանություն:

Դասախոսները, ուսանողները տարբեր գիտակրթական հաստատություններում մասնակցել են վերապատրաստումների ծրագրերի, միջազգային և հանրապետական գիտաժո-

ղովների, սեմինարների, սակայն դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումները պարբերական բնույթ չեն կրում:

Համալսարանի դասախոսների և վարչական աշխատակիցների համար շարունակվել են անգլերեն լեզվի անվճար ուսուցման դասընթացները, իսկ ուսանողների համար կազմակերպվել են լրացական դասընթացներ «Նկարչական ստուդիա», «Տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի հիմունքներ» մոդուլների շրջանակում, իրավաբանական կլինիկայում, տնտեսագետների և այլ ակումբներում:

Համալսարանը վարում է աշխատակիցներին, գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներին խրախուսելու քաղաքականություն: Հաշվետու ուստարում համալսարանի հիմնադրման 20-ամյակի կապակցությամբ համալսարանի կայացման գործում ունեցած ավանդի համար բուհի մի խումբ աշխատակիցներ ԳՊՀ խորհրդի նախագահ, ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի կողմից պարգևատրվեցին շնորհակալագրերով:

Հայաստանի «Ֆրիտյոֆ Նանսեն» հիմնադրամի նախագահ Ֆելիքս Բախչինյանը հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անունից կրթության ոլորտում ծավալած ակտիվ գործունեության համար Գավառի պետական համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր Ռուզաննա Հակոբյանին շնորհեց մեծ մարդասեր, խաղաղության նոբելյան մրցանակի դափնեկիր Ֆրիտյոֆ Նանսենի ոսկյա հուշամեդալ:

Բնագիտական ֆակուլտետի Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ՌԴ բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Արմեն Սիմոնյանին ԳՊՀ գիտխորհրդի կողմից շնորհվեց ԳՊՀ պատվավոր պրոֆեսորի կոչում:

Հաշվետու ուստարում տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի հիմնադիր ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ՀՀ վաստակավոր մանկավարժ Հրանտ Խաչատուրի Հակոբյանի կիսանդրու բացման արարողությունը՝ նվիրված պարոն Հակոբյանի ծննդյան 85-ամյակին:

Կիսանդրու բացման արարողությանը ներկա էին ՀՀ սփյուռքի նախարար, ԳՊՀ խորհրդի նախագահ Հրանուշ Հակոբյանը, ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը, Ազգային ժողովի պատգամավորներ, ռեկտորներ, Գեղարքունիքի մարզպետը, Գավառի քաղաքապետն ու մարզի մտավորականության ներկայացուցիչներ: Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տեր Մարկոս Եպիսկոպոս Հովհաննիսյանը կատարեց կիսանդրու բացման արարողությունը: Հայաստանի Հանրապետության գիտական, կրթական ու մշակութային ոլորտի ներկայացուցիչները, նրա գործընկերները, հարազատներն ու ուսանողները հուշեր ներկայացրին բացառիկ անհատ, վաստակաշատ մանկավարժ, մարդկային բարձր արժանիքներով օժտված գիտնական ու դասախոս Հրանտ Հակոբյանի մասին:

Գավառ քաղաքի ավագանու որոշմամբ համալսարանի հարակից փողոցն անվանակոչվեց Յրանտ Յակոբյանի անվամբ:

Հաշվի առնելով համալսարանի սոցիալապես անապահով ուսանողների նկատմամբ ցուցաբերած հոգածությունը՝ «Օրանժ Հայաստան» ՓԲԸ-ի տնօրեն ժելիբուեր Ֆրանսիսին շնորհվեց ԳՊՀ պատվավոր բարերարի կոչում:

Դպրոց-բուհ համագործակցությունը ակտիվացնելու, շարունակական դարձնելու նպատակով մշտապես շարունակվել են համալսարանականների այցելությունները մարզի հիմնական և ավագ դպրոցներ, համալսարանի կողմից հայտարարվել են աշակերտական շարադրությունների մրցույթներ, ամփոփվել են արդյունքները, հաղթողները ստացել են հավաստագրեր և հուշանվերներ:

Շարունակվել են ուշադրության կենտրոնում մնալ մագիստրոսական ծրագրերում գիտական սեմինարն ու գիտահետազոտական պրակտիկաները, ապահովվել է ուսանողական գիտական կոնֆերանսներին մագիստրոսների գիտական զեկուցումներով հանդես գալը: Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի Կրթական բարեփոխումների հանձնաժողովը Որակի ապահովման ազգային կենտրոնի աջակցությամբ կազմակերպել էր սեմինար՝ «Որակյալ կրթություն բոլորի համար: Որակի ապահովման համակարգ: Ուսանողի մոդել» թեմայով: Սեմինարի կազմակերպման նպատակն էր բացահայտել ուսանողների մոտեցումները ՀՀ որակի ապահովման համակարգի, դրանում ուսանողների ներգրավվածության, այնտեղ առկա խնդիրների և առավելությունների վերաբերյալ: Սեմինարի ընթացքում ներկայացվեցին Գավառի պետական համալսարանի ունեցած ձեռքբերումները այդ ուղղությամբ, որն էլ մասնակիցների կողմից արժանացավ բարձր գնահատականի, արժևորվեց որպես օրինակելի փորձ:

Շարունակվել են ԳՊՀ դասախոսների հեղինակությամբ ուսումնական, մեթոդական աշխատանքների տպագրումը: Հաշվետու ժամանակաշրջանում ԳՊՀ գիտխորհրդի կողմից տպագրության երաշխավորության են ներկայացվել հետևյալ ուսումնամեթոդական ձեռնարկները.

1. Վաչագան Գրիգորյանի «Յրանտ Մաթևոսյան» մենագրությունը,
2. Նորիկ Ղազարյանի «Նարեկացի-Սիամանթո-Մեծարենց-Չարենց կապը» խորագրով ուսումնամեթոդական ձեռնարկը,
3. Արմենակ Խաչատրյանի «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրները և ժողովրդագրական գործընթացները» թեմայով ուսումնամեթոդական ձեռնարկը:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հաշվետու ժամանակահատվածում հետևողական աշխատանքներ են կատարվել բուհում կրթության որակի ուսումնասիրման, վերահսկման և շարունակական բարձրացման, եվրոպական բարձրագույն կրթության տարած-

քի որակի ապահովման չափանիշներին ու ուղենիշներին համապատասխան որակի ապահովման բուհական համակարգի ստեղծման, ինքնավերլուծության անցկացման, բուհի կրթական ծրագրերի ենթակառուցվածքային և ծրագրային հավատարմագրմանը նախապատրաստվելու նպատակով: «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում ԿԳ նախարարության կողմից հայտարարված «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրում կամ դրանց հետագա բարելավում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում զգալի նյութական, ուսումնամեթոդական ռեսուրսներ ձեռք բերվեցին ինչպես կահույքի, համակարգիչների ու սարքավորումների, գրեմական պիտույքների, ուսումնամեթոդական գրականության, համակարգչային ծրագրերի ու էլեկտրոնային ռեսուրսների տեսքով, այնպես էլ տեղական և միջազգային խորհրդատվական ծառայությունների գնման, սեմինարների, խորհրդակցությունների, վերապատրաստումների կազմակերպման, բուհի իրականացրած կրթական ծրագրերի որակի, ուսումնական այլ գործընթացների վերաբերյալ հանրության շրջանում տեղեկատվության տարածման, հրապարակայնության ապահովման նկատառումներով տպագրության, էթերաժամի կամ տպագիր մամուլում տարածքի գնման ու համապատասխան աշխատանքների իրականացման ձևերով: Համալսարանի որակի ապահովման բաժնից բացի՝ որակի ապահովման ֆակուլտետային ենթաբաժիններ ստեղծվեցին բնագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետներում՝ մնացած ֆակուլտետներում պլանավորելով ստեղծել 2013-2014 ուսումնական տարում:

Կրթության որակի ապահովման նպատակով համալսարանի և ուսանողների, դասախոսների, շրջանավարտների, գործատուների, ծնողական համայնքի միջև հետադարձ կապերի ապահովման, ԳՊՀ-ում որակի մշակույթի ձևավորման նպատակով մշտապես կատարվել են հարցումներ ուսանողների, շրջանավարտների շրջանում, ամփոփվել են արդյունքները, ներկայացվել ԳՊՀ գիտխորհրդի քննարկմանը, ենթակառուցվածքային ստորաբաժանումներին գիտխորհրդի կողմից տրվել են հանձնարարականներ՝ համապատասխան ուղղություններով ցուցանիշների բարելավման նպատակով: Հետադարձ կապի ապահովման առավել արդյունավետ եղանակների և միջոցների ներդրման նպատակով համալսարանում մշակվել և ներդրվել է ուսանողների շրջանում հարցումների, թիրախային այլ խմբերի կարծիքների հավաքագրման և արդյունքների մշակման համակարգչային ծրագիր, որը հնարավորություն է ընձեռում բարձրացնելու գործընթացի օպերատիվությունը, արդյունքների ամփոփման օբյեկտիվությունը, ուսանողների պատասխանների արժանահավատությունը, ինչպես նաև թույլ է տալիս խնայելու ժամանակը, այլ ռեսուրսներ:

2012-2013 ուստարում հանրության հետ կապերի և լրատվության բաժնի, ուսանողական խորհրդի, ինչպես նաև ուսանողական գիտական ընկերության կողմից իրականացվել են բազմաբնույթ աշխատանքներ: Ուսանողական ինքնակառավարման մարմինները համագոր-

ծակցել են տարածաշրջանի և հանրապետության երիտասարդական կառույցների, հասարակական կազմակերպությունների հետ: Բուհում կազմակերպվել են ուսանողական գիտաժողովներ, ինչպես նաև գեղարվեստական միջոցառումների շարք՝ նվիրված ՀՀ անկախության 21-ամյակին, ազգային տոներին, անվանի գրողներին, քաղաքական գործիչներին, բուհի հիմնադրման 20-ամյակին: Ուսանողները ակտիվորեն մասնակցել են հանրապետության այլ բուհերում կազմակերպվող ուսանողական գիտաժողովներին, մասնավորապես Վանաձորի Հովի. Թումանյանի անվան, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտներում, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում կայացած ուսանողական գիտաժողովներին:

ԳՊՀ ուսանողների թիվը, մասնակցելով Ծաղկաձոր քաղաքում անցկացված «Բազե-2013 թ.» համահայկական երիտասարդական հավաքին, Հայաստանի, Արցախի և Սփյուռքի 18-ից 30 տարեկան շուրջ 500 երիտասարդների հետ մարզական տարբեր խաղերում, ինտելեկտուալ ու մշակութային մրցույթներում ուժերը չափելով, վերադարձավ մեկ ոսկե, երեք արծաթե և մեկ բրոնզե մեդալներով:

***2013-2014 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի
ուսումնագիտական զարգացման հայեցակարգ***

2013-2014 ուսումնական տարին հայտարարված է «Արդյունավետ աշխատանքի և ուսումնառության» տարի:

ԳՊՀ զարգացման և բարեփոխման (2011-2016թ.) հայեցակարգին համապատասխան՝ 2013-2014 ուստարում ծրագրում ենք իրականացնել հետևյալ աշխատանքները:

1. Շարունակել աշխատանքները կրթական ծրագրերի բովանդակային և կառուցված-քային փոփոխությունների իրականացման, կրթական ծրագրերի արդիականացման ուղղությամբ՝ հաշվի առնելով ուսանողների, շրջանավարտների, գործատուների շրջանում նախորդ ուստարում կատարված հարցումների արդյունքները, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կողմից արված առաջարկություններն ու նկատառումները:
2. Ներդնել և կիրարկել ԳՊՀ ուսանողների գնահատման նոր ձևեր, գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման արդի մեթոդներ՝ ըստ կրթական ծրագրերում, ինչպես նաև առարկայական ծրագրերում նախապես սահմանված կրթական վերջնարդյունքների:
3. 16-րդ ամենամյա գիտաժողովը նվիրել համալսարանի հիմնադրման 20-ամյակին, իրականացնել հետևողական աշխատանք՝ հանրապետության և արտերկրի բուհերից գիտնականների մասնակցությունն ապահովելու նպատակով:

4. Բարելավել դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական որակների շարունակական բարձրացման քաղաքականության մշակման ու իրականացման կառուցակարգերը, իրականացնել դասախոսների վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագրեր՝ անձնակազմի անդամների լայն աշխարհայացքի, մասնագիտական, ինչպես նաև լեզվական, տեխնիկական, համակարգչային գրագիտության մակարդակի բարձրացման, մանկավարժական հաղորդակցման, արդի տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հնտությունների զարգացման նպատակով:
5. Շարունակել համագործակցությունը տարածաշրջանում գործող ավագ և հիմնական դպրոցների հետ, ակտիվացնել աշակերտների կապը համալսարանի հետ, լուսաբանել համալսարանում իրականացվող կրթական ծրագրերը, օգնել աշակերտներին՝ մասնագիտական կողմնորոշման հարցում:
6. Շարունակել որակի մշակույթի արմատավորման, որակի ապահովման ենթակառուցվածքի հնարավորությունների ընդլայնման նպատակով՝ ռեսուրսային, մեթոդական, խորհրդատվական ծառայությունների մատուցման գործընթացները:
7. Գործարկված ԳՊՀ ուսանողական պորտալը մշտապես համալրել նոր ուսումնական նյութերով, օգտակար հղումներով, հասանելի դարձնել առկա և հեռակա համակարգերում սովորող բոլոր ուսանողներին:
8. Շարունակել դասավանդվող առարկաների ծրագրերին համապատասխան դասագրքերի և լրացուցիչ նյութերի հրատարակման և էլեկտրոնային ուսումնական ռեսուրսների ստեղծման աշխատանքները:
9. Իրականացնել փոխշահավետ համագործակցային ծրագրեր տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ՝ ուսանողների պրակտիկաները ավելի արդյունավետ անցկացնելու նպատակով:
10. Բանասիրական և Բնագիտական ֆակուլտետներում ստեղծել որակի ապահովման ֆակուլտետային ենթաբաժիններ, ապահովել նրանց գործունեության համար անհրաժեշտ պայմաններ, ընդլայնել ԱԲՎ որակի ապահովման բաժնի գործառույթները՝ ընդգրկելով ֆակուլտետային բաժինները, առանձնացնել որպես ինքնուրույն գործող ստորաբաժանում՝ Որակի ապահովման ներբուհական կառույց՝ ռեկտորի անմիջական ենթակայությամբ:
11. Մշակել և գործարկել համալսարանում կրթության որակի ապահովման ձեռնարկ:
12. Արդյունավետ գործարկել ԳՊՀ ուսանողների, շրջանավարտների, գործատուների շրջանում համալսարանի կրթական ծրագրերից բավարարվածության վերաբերյալ հարցումների անցկացման և արդյունքների մշակման համակարգչային ծրագիրը, ամբիոնային ու ֆակուլտետային գործունեության ընթացքում հաշվի առնել հարցում-

ների արդյունքները և ներկայացնել հաշվետվություններ՝ հարցման արդյունքների բարելավման նպատակով:

13. Ամփոփել համալսարանի ենթակառուցվածքային և ծրագրային հավատարմագրման նպատակով իրականացված ինքնավերլուծությունը, ներկայացնել հայտադիմում՝ 2014 թ. արտաքին փորձաքննության նպատակով:
14. Արդյունավետորեն գործարկել կրթության որակի վերահսկման, մշտադիտարկման, որակի ներքին գնահատման, ակադեմիական կառավարման և միասնական տեղեկատվական էլեկտրոնային համակարգը:
15. Հաշվի առնելով ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթական համակարգի առանձնահատկությունները, ինչպես նաև եվրոպական բարձրագույն կրթության տարածքին հանրապետության բուհական համակարգի ինտեգրման պահանջները՝ մշակել եվրոպական առաջատար բուհերի հետ համագործակցության նոր ձևեր և ուղիներ:
16. Ներկայացնել կրթական ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման, ինքնավերլուծության, ինչպես նաև տնտեսական ծախսերի, ֆինանսական ռեսուրսների վերահսկողության նոր մեխանիզմներ:
17. Լրամշակել և բարելավել համալսարանում կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովման և ուսումնամեթոդական բազայի բարելավման, ինչպես նաև համալսարանում ուսանողների ակադեմիական ինտեգրման ընթացակարգերը, համալսարանում ակադեմիական խորհրդատուների աշխատանքի ձևերը:
18. Հասարակությանը լիարժեք և պատշաճ իրազեկել մասնագիտական կրթական ծրագրերի որակի, դրանցում սահմանված ելքային արդյունքների, ակադեմիական ծանրաբեռնվածության և այլ ցուցանիշների, ինչպես նաև ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության, համալսարանի միջազգային համագործակցության ծրագրերի վերաբերյալ:

Ն.Ա. Կուտուզյան՝

Ուսումնագիտական գծով պրոռեկտոր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Կատվայան Վիկտոր Լիպարիտի,*
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ պրոֆեսոր

Դեկանի տեղակալ՝ *Բաղայան Մարինե Միքայելի*

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Դասիչ	Մասնագիտություն
031000	Հայոց լեզու և գրականություն
032400	Ռուսաց լեզու և գրականություն
031300	Անգլերեն լեզու և գրականություն

Մասնագիտացումներ՝

բակալավր՝ բանասիրության բակալավր

մագիստրոս՝ բանասիրության մագիստրոս

Ուսանողների թիվը՝ 249

Շրջանավարտների թիվը՝ 109

ԳՎՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
2012-2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ 2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ՉԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Հաշվետվությունը անցած ճանապարհի հանրագումարն է, գործունեության ամփոփումը, որը հնարավորություն է տալիս գնահատելու արածն ու չարածը, ձեռքբերումներն ու բացթողումները, քննարկելու և վերլուծելու իրավիճակը, հետևություններ անելու՝ նպատակ ունենալով խորացնել ձեռքբերումները և վերացնել թերությունները: Գործունեության սթափ վերլուծությունը ապագա հաջողությունների գրավականն է:

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2012-2013 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգում նախատեսվում էր գործունեության ծավալում տարբեր ուղղություններով: Հայեցակարգը թերությունները շտկելու, նոր ծրագրեր ու մտահղացումներ կյանքի կոչելու, ֆակուլտետի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, բարձրորակ ուսումնակրթական ծառայություն մատուցելու առումով նոր քայլեր ձեռնարկելու խնդիրներ էր առաջադրում: Մասնավորապես, խոսքը վերաբերում է ուսումնական պլանների և ծրագրերի վերանայմանն ու ըստ անհրաժեշտության բարելավմանը, ամբիոնային գործունեության արդյունավետության բարձրացմանը, նորագույն մեթոդների կիրառմանը, արտաֆակուլտետային գործունեության ակտիվացմանը, համալսարանական միջոցառումներին և զարգացման գործընթացներին մասնակցությանը, ուսանողների հետ տարվող աշխատանքների արդյունավետ կազմակերպմանն ու անցկացմանը:

Հայեցակարգային խնդիրները հիմնականում դրական լուծումներ են ստացել: Այսպես, 2012-2013 ուսումնական տարվա ընթացքում ֆակուլտետի խորհրդում, դեկանատում, ամբիոններում տեղի են ունեցել նիստեր, քննարկումներ, ուսումնական գործընթացի վերլուծություններ, կազմակերպվել են գիտական սեմինարներ, դասալսումներ, խորհրդատվություններ, ի վերջո, արվել են ուշագրավ առաջարկություններ, որոնք արտացոլվել են աշխատանքային պլաններում:

Այնուամենայնիվ, մտահոգություններ էլ ունենք, որոնք չվերացնելու դեպքում կարող են խաթարել ֆակուլտետի ներդաշնակ աշխատանքը:

1. Ֆակուլտետի դեկանատի աշխատանքն ուսանողների հետ կրում է ամենօրյա բնույթ, սակայն թույլ է կապը ուսանողական ինքնակառավարման կառույցների հետ:

2. Դեկանատն արագ արձագանքում է մյուս ստորաբաժանումների դիմումներին, ապահովում է ուսումնական պլանների լիարժեք կատարումը, լուծում է դասացուցակի հետ կապված խնդիրները, սակայն տեսադաշտից մասամբ դուրս են մնում ամբիոնների աշխա-

տանքները համակարգելու հարցերը, թույլ է վերահսկողությունը դասատվության բուն գործընթացի վրա:

3. Ուսումնագիտական աշխատանքների ծանրության մեծ մասն ընկած է ամբիոնների վրա: Ֆակուլտետի 4 ամբիոնները կազմակերպել և իրականացրել են ուսումնական գործընթացը, կատարել են որոշակի ուսումնամեթոդական, գիտահետազոտական և կազմակերպչական աշխատանքներ, դասալսումներ ու դրանց քննարկումներ, գիտական սեմինարներ և այլն, սակայն այստեղ էլ դեռ խնդիրներ կան, որոնք լուծման կարիք ունեն: Այսպես՝ ուսանողների հետ տարվող աշխատանքները բավարար մակարդակի վրա չեն, կազմակերպվող միջոցառումները ժամանակային առումով հավասար բաշխվածություն չունեն, չեն կազմակերպվում ամբիոնի աշխատակիցների գիտական աշխատանքների քննարկումներ, հանդիպումներ, չեն ցուցաբերում նախաձեռնողականություն, թույլ է միջամբիոնային համագործակցությունը:

Կառույցի բոլոր բաղադրիչների ներդաշնակ, համագործակցված աշխատանքն է, որ արդյունք է տալիս, ուրեմն նման աշխատանքային մթնոլորտ պետք է ապահովել ֆակուլտետում, որպեսզի դեկանատ-ամբիոն-ուսանող համագործակցությունը արդյունավետ լինի:

Կատարված ու չկատարված աշխատանքների անդրադարձը այս կամ այն կերպ արտահայտվում է ուսանողների առաջադիմության ցուցանիշներում քննաշրջանների ընթացքում: Այս առումով ունենք հետևյալ պատկերը.

Բակալավրիատում ձմեռային քննաշրջանին մասնակցելու թույլտվություն ունեցել են 186 ուսանող, որոնցից 47-ը (1-ը՝ հարգելի) չեն ներկայացել ամփոփիչ ստուգմանը: Բոլոր առարկաներից դրական գնահատական են ստացել 137-ը, որից 46-ը՝ միայն «գերազանց», 70-ը՝ «գերազանց» և «լավ», 19-ը ստացել են խառը գնահատականներ, իսկ 2-ը՝ միայն «բավարար»: Առաջադիմությունը կազմել է 71,73%:

Ըստ բաժինների առաջադիմության ցուցանիշները հետևյալ պատկերն են ներկայացնում.

<i>Բաժին</i>	<i>Կուրս</i>		
	<i>1-ին</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
Չայոց լեզու և գրականություն	80%	64%	68,57%
Ռուսաց լեզու և գրականություն	85,71%	75%	81,25%
Անգլերեն լեզու և գրականություն	70,37%	68%	70,83%
<i>Ընդամենը</i>	<i>75,93%</i>	<i>67,74%</i>	<i>72,00%</i>

Տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ բարձր առաջադիմություն ունեցել է «ռուսաց լեզվի և գրականության» բաժինը, իսկ ամենացածրը՝ «հայոց լեզվի և

գրականության» բաժնի 3-րդ (64%) և 4-րդ (68%) կուրսերը: Բարձր առաջադիմությամբ աչքի են ընկել 1-ին կուրսերը, ցածր առաջադիմությամբ՝ 3-րդ կուրսերը:

Մագիստրատուրայի համակարգում հետևյալ պատկերն է եղել. քննություններին մասնակցելու իրավունք են ունեցել 53 ուսանող: Քննության ներկայացել են 32-ը, հարգելի պատճառով չեն ներկայացել 21-ը: «Գերազանց» գնահատական են ստացել 22-ը, 9-ը՝ «գերազանց» և «լավ», 1-ը՝ խառը: Առաջադիմությունը կազմել է 55,17 %:

<i>Բաժին</i>	<i>Կուրս</i>	
	<i>1-ին</i>	<i>3-րդ</i>
Հայոց լեզու և գրականություն	50%	63,64%
Ռուսաց լեզու և գրականություն	50%	23,27%
Անգլերեն լեզու և գրականություն	45,45%	90,91%
<i>Ընդամենը</i>	48%	60,61%

Լավագույն արդյունքը անգլերենի բաժնի 2-րդ կուրսինն է, վատագույնը՝ ռուսաց լեզվի և գրականության բաժնի 2-րդ կուրսինը: Հակասություն կա. ռուսաց լեզվի և գրականության բաժնի բակալավրիատը ֆակուլտետի լավագույն ցուցանիշն ունի, իսկ մագիստրատուրան՝ վատագույն:

Ինչևէ, ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը ձմեռային քննաշրջանում կազմել է ընդամենը 67,87%: Արդյունքը, մեղմ ասած, այնքան էլ գոհացուցիչ չէ և մտորումների տեղիք է տալիս:

2-րդ կիսամյակում իրավիճակը առաջադիմության ցուցանիշների առումով որոշակիորեն փոփոխություններ է կրում:

<i>Բաժին</i>	<i>Կուրս</i>		
	<i>1-ին</i>	<i>3-րդ</i>	<i>Մագիստրատուրա 1-ին</i>
Հայոց լեզու և գրականություն	90%	80,00%	72,73%
Ռուսաց լեզու և գրականություն	100%	54,55%	50,00%
Անգլերեն լեզու և գրականություն	96,00%	60,00%	81,82%
<i>Ընդամենը</i>	94%	67,21%	75,00%

Տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ առավել բարձր առաջադիմություն ցուցաբերում են 1-ին կուրսերը: Ցածր առաջադիմություն ունեն ռուսաց լեզվի և գրականության բաժնի 3-րդ կուրսը և նույն բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսը:

Ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 78,68%: 2-րդ կիսամյակում առաջադիմությունը աճել է 10%-ով: Սակայն նշենք, որ այս շրջանում չեն ներառվում 4-րդ կուրսի արդյունքները:

Գարնանային քննաշրջանում ընդհանուր առմամբ քննություններին մասնակցելու թույլտվություն են ունեցել 133 ուսանող, հարգելի պատճառով բացակայել են 19-ը: Բոլոր առարկաներից քննություն հանձնել են 107 ուսանող: Միայն «գերազանց» ստացել են 33 ուսանողներ, միայն «գերազանց» և «լավ»՝ 44-ը, խառը գնահատականներ՝ 30-ը: «Անբավարար» են ստացել 7-ը, որոնցից 6-ը՝ մեկ, 1-ը՝ երկու առարկաներից: Միայն «գերազանց» ստացածներից 10-ը առաջին կուրսեցի են, 14-ը՝ երրորդ, իսկ 9-ը՝ մագիստրատուրայից:

Այսպիսով, բակալավրիատում առաջադիմությունը կազմել է 79, 46%, իսկ մագիստրատուրայում՝ 75,00: Ամենաբարձր ցուցանիշը 1-ին կուրսերինն է՝ 94,00%, նրանց հաջորդում է մագիստրոսների 1-ին կուրսը՝ 75%, վերջում 2-րդ կուրսերն են՝ 67,21% առաջադիմությամբ:

Ձմեռային և գարնանային քննաշրջանների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ բակալավրիատի 1-ին կուրսերի և մագիստրատուրայի 1-ին կուրսի մոտ տեղի է ունեցել առաջադիմության աճ (համապատասխանաբար՝ 75,93% -ից 94,00% և 55,17% -ից 75,00%), իսկ 3-րդ կուրսերում՝ մնացել է նույնը՝ 67,74%-ից 67,21%, նույնիսկ աննշան հետընթաց կա: Դա նշանակում է, որ բոլոր երեք բաժինների 3-րդ կուրսերը համալրված են ակադեմիապես թույլ պատրաստվածություն ունեցող ուսանողներով: Բոլոր դեպքերում 4-րդ կուրսում նրանց հետ տարվող աշխատանքները պետք է ակտիվացնել, անհատական խորհրդատվություններ իրականացնել և այլն, այլապես ավարտական ամփոփիչ ատեստավորման ժամանակ կկանգնենք տիպիկ փաստի առաջ:

2012-2013 ուսումնական տարում ընդհանուր առմամբ բարեհաջող էր ամփոփիչ ատեստավորման ընթացքը: Ատեստավորվող ուսանողների մեծ մասը ստացել է «գերազանց» և «լավ» գնահատականներ: Այսպես, հայոց լեզվի և գրականության մասնագիտությամբ քննություն հանձնող 35 ուսանողներից «գերազանց» ստացել են 12-ը, ռուսաց լեզվի և գրականության մասնագիտության գծով 16 շրջանավարտներից «գերազանց» են ստացել 8-ը, անգլերեն լեզվի մասնագիտացմամբ 25 շրջանավարտներից գերազանց առաջադիմությամբ համալսարանն ավարտել են 5 ուսանողներ: Ի վերջո, բակալավրի կրթական ծրագրի ավարտական կուրսի 76 ուսանողներից բուհը գերազանցությամբ ավարտել են 25-ը:

Մագիստրոսական կրթական ծրագրով 2012-2013 ուսումնական տարում Բանասիրական ֆակուլտետն ուներ 33 շրջանավարտ, որոնցից բուհը գերազանցությամբ ավարտեցին 20-ը (հայոց լեզու և գրականություն՝ 9, ռուսաց լեզու և գրականություն՝ 8, անգլերեն լեզու՝ 3): Ամփոփիչ ատեստավորման արդյունքներից հուսադրողն այն է, որ ոչ մի «անբավարար» գնահատական չի եղել: Ի հարկե, դա չի նշանակում, թե նման գնահատականի թեկնածուներ չեն եղել: Պարզապես ուսումնական տարվա երկրորդ հատվածում, գիտակցելով իրենց վի-

ճակի լրջությունը, նրանք իրենց ուշադրությունը կենտրոնացրին քննական գործընթացի վրա, և մեր դասախոսները կարողացան նրանց հետ արդյունավետ աշխատել: Կազմակերպված խորհրդատվությունները, հարցաշարերի և ավարտական աշխատանքների ուղղությամբ տարվող ջանադիր աշխատանքները տվեցին իրենց պտուղները: Արդյունքում մեր առարկայական հանձնաժողովների նախագահները փաստեցին, որ շրջանավարտները ցուցաբերեցին գիտելիքների պատշաճ մակարդակ: Քննությունների ավարտին նախագահների արած դիտողությունները հիմնականում վերաբերում էին ոչ թե ուսանողների գիտելիքների գնահատմանը, այլ հարցաշարերի, ավարտաճառերի թեմաներին, ձևավորմանը և ուրիշ այլ հարցերի:

ԳՊՀ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

2012-2013 ուսումնական տարվա գործունեության համակողմանի վերլուծությունը ցույց է տալիս, որ 2013-2014 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգը պետք է ներառի ոչ թե վերացական ինչ-ինչ ձևակերպումներ, այլ կոնկրետ, որոշակի խնդիրներ, որոնք չեն լուծվել նախորդ ուսումնական տարում, պետք է լուծվեն նոր ուսումնական տարում: Միաժամանակ, անհրաժեշտ է առաջ քաշել այնպիսի նոր հարցեր, որոնք բխում են ԳՊՀ և ֆակուլտետի զարգացման հնգամյա հայեցակարգերից:

Ելնելով այս հանգամանքներից՝ Բանասիրական ֆակուլտետի 2013-2014 ուսումնական տարվա ընթացքում նախատեսում ենք իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Թարմացնել, նորացնել ուսումնական պլաններն ու ծրագրերը: Սա հայեցակարգային այն դրույթներից է, որ մշտական գրանցում ունի մեր աշխատանքային ծրագրերում: Հատկապես, եթե հաշվի առնենք, որ այս դրույթի կիրառումը հասարակական գիտությունների դեպքում պարտադիր է:
2. Մշտապես վերանայել միջանկյալ քննությունների, ամփոփիչ ստուգումների, ամփոփիչ ատեստավորման քննությունների հարցաշարերը, անհատական, կուրսային, ավարտական աշխատանքների թեմաները դարձնել ավելի բազմազան, դրանք համալրել՝ ուսանողների հետաքրքրությունների հաշվառմամբ: Ներառել գրականության և լեզվի ոլորտներում հանդես եկած նոր ստեղծագործությունների և գրողների վերաբերող թեմաներ:
3. Ակտիվացնել ամբիոնների աշխատանքը հատկապես ամբիոն-ուսանող կապի շրջանակներում: Կազմակերպել խորհրդատվություններ, սեմինարներ, հատկապես կուրսային, ավարտական աշխատանքների տեխնիկական թերությունները վերացնելու, դրանց կառուցվածքային յուրահատկությունները, մասերի տրամաբանական հաջորդականությունը ապահովելու նպատակով:

4. Գիտական հետաքրքրություններ ունեցող ուսանողներին ներգրավել հետազոտական աշխատանքներում, պարբերաբար հայտարարել ռեֆերատների, էսսեների, գրական այլ ժանրերով նյութերի մրցույթներ, արդյունքներն արժևորել՝ խրախուսելով հեղինակներին:
5. Ապահովել դեկանատ-ամբիոններ ներդաշնակ համագործակցությունը, ապահովել աշխատանքային կարգապահությունը:
6. Օգտագործել e-Learning.gsu կայքի հնարավորությունները՝ առարկայական ծրագրերի վերաբերյալ նյութերը ներբեռնելով: Ապահովել մագիստրոսական կրթական ծրագրերին վերաբերող նյութերի ներբեռնումը:
7. Կազմակերպել հանդիպումներ գրողների, գիտնականների, ՁԼՄ-ների ներկայացուցիչների, ծնողների հետ:
8. Կազմակերպել գրական-գեղարվեստական միջոցառումներ, բանավեճեր և քննարկումներ:
9. Անցկացնել ուսանողական գիտաժողովներ՝ նվիրված Մայրության և գեղեցկության տոնին, Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին և պատմական այլ իրադարձությունների:

Թ. Ա. Ասոյան՝

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար

**ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՉՍԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ**

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար զնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Հայոց լեզու և գրականություն 1-ին	20	-	8	80.00
3-րդ	25	-	6	64.00
4-րդ	35	-	7	68.57
Ռուսաց լեզու և գրականություն 1-ին	7	1	1	85.71
3-րդ	12	-	3	75.00
4-րդ	16	-	5	81.25
Անգլերեն լեզու և գրականություն 1-ին	27	1	4	70.37
3-րդ	25	-	5	68.00
4-րդ	24	-	7	70.83
ԸՆԴԱՄԵՆՆԸ	191	2	46	71.73
Մագիստրատուրա				
Հայոց լեզու և գրականություն 1-ին	12	-	1	50.00
2-րդ	11	-	1	63.64
Ռուսաց լեզու և գրականություն 1-ին	2	-	-	50.00
2-րդ	11	-	-	27.27
Անգլերեն լեզու և գրականություն 1-ին	11	-	3	45.45
2-րդ	11	-	4	90.91
ԸՆԴԱՄԵՆՆԸ	58	-	9	55.17

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Հայոց լեզու և գրականություն 1-ին	20	1	5	90.00
3-րդ	25	-	8	80.00
Ռուսաց լեզու և գրականություն 1-ին	6	-	1	100
3-րդ	11	2	2	54.55
Անգլերեն լեզու և գրականություն 1-ին	25	-	4	96.00
3-րդ	25	3	4	60.00
ԸՆդամենը	112	6	24	79.46
Մագիստրատուրա				
Հայոց լեզու և գրականություն 1-ին	11	1	4	72.73
Ռուսաց լեզու և գրականություն 1-ին	2	-	1	50.00
Անգլերեն լեզու և գրականություն 1-ին	11	-	4	81.82
ԸՆդամենը	24	1	9	75.00

2012/2013 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԶՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	8	-	4	55	4

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 4

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Համբարձումյան Վազգեն Գուրգենի, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Կատվայան Վիկտոր Լիպարիտի - ԲՖ դեկան, բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
2. Ասոյան Թաթուլ Արտիկի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
3. Խանդանյան Սիրանուշ Կառլենի - ասիստենտ
4. Վարդանյան Գայանե Լևիկի - ասիստենտ
5. Սարգսյան Ռուզաննա Մարատի - ասիստենտ
6. Իսկանդարյան Լիլիթ Հրաչիկի-դասախոս
7. Ղազարյան Օլգա Ալբերտի - դասախոս
8. Խաչատրյան Վիկտորյա Դավթի-դասախոս

ՀԱՍԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Ալեքսանյան Թամարա Կարապետի - մանկավարժական գիտ. թեկնածու, ասիստենտ
2. Ասատրյան Ծովինար Ժորայի - բանասիրական գիտ. թեկնածու
3. Իսկանդարյան Նահրա Մանվելի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
4. Ներսիսյան Վարսիկ Արմենի - բանասիրական գիտ. թեկնածու

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Գրավոր և բանավոր խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների ապահովում:
2. Գրաբարի, միջին հայերենի, գրական արևմտահայերենի նպատակային ուսուցում՝ բնագրերի ընթերցման, թարգմանություններ կատարելու նպատակով:
3. Գրական լեզվից կատարվող անհարկի շեղումների, աղավաղումների մերժման տեսական հիմնավորում՝ լեզվի պատմության հիման վրա:

4. Լեզվական սխալներից և վրիպակներից խուսափելու վարժությունների մշակում՝ գործնական պարապմունքների համար:
5. Բարբառների, ժամանակակից հայերենի կառուցվածքին, ինչպես նաև հայոց լեզվի դասավանդման ընթացքում նորագույն մեթոդների կիրառությանը առնչվող հարցերի ուսումնասիրություն:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ծեռնարկ	Ուսումնամեթոդական ծեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	3	-	2	16	1

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Համբարձումյան Վ. Գ., Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրություններ // Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, Երևան, 2012, 223 էջ:
2. Համբարձումյան Վ. Գ., Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը // «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2013, 171 էջ:
3. Կատվայան Վ. Լ., Տարբերակայնությունն իբրև բարբառի կարևոր հատկանիշ // Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, Ձեկուցումների դրույթներ, Երևան, 2013, էջ 131 – 133:
4. Կատվայան Վ. Լ., «Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ» // «Պատմա-բանասիրական հանդես», 2, Երևան, 2013, էջ 25 - 31:
5. Կատվայան Վ. Լ., Արդի լեզվաքաղաքականության հիմնախնդիրներ // Գիտաժողովի նյութեր. (հանձնված է տպագրության):
6. Կատվայան Վ. Լ., Բայազետի բարբառի ձայնավորների ընդհանուր բնութագիրը // «Ձահուկյանական ընթերցումներ» (հանձնված է տպագրության):
7. Կատվայան Վ. Լ., Բայի սեռը Բայազետի բարբառում // Բանբեր Մատենադարանի, 19, Երևան, 2012, էջ 379 – 387:
8. Կատվայան Վ. Լ., Բայածանցները Բայազետի բարբառում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, հ.14, Երևան, 2012, էջ 357 – 360:
9. Կատվայան Վ. Լ., Որոշյալ դերանունները Բայազետի և նրան մերձավոր բարբառներում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, հ.15, Երևան, 2013, էջ 482-485:
10. Ասոյան Թ. Ա., Հրաչյա Սարուխանի բառաստեղծման առանձնահատկությունների շուրջ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, հ.15, Երևան, 2013, էջ 485-490:

11. **Ասոյան Թ. Ա.**, Նկատառումներ Մխիթարյանների հայերենագիտական գործունեության վերաբերյալ // «Ձահուկյանական ընթերցումներ» (հանձնված է տպագրության):
12. **Ներսիսյան Վ. Ա.**, Հովհաննես Օձնեցու երկերի լեզուն // ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2012, 148 էջ:
13. **Ներսիսյան Վ. Ա.**, Նորակազմ մակբայների գործածությունը և նրանց բառակազմական կաղապարները Հովհաննես Օձնեցու երկերում // Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ 90-ամյակին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, 5 էջ (հանձնված է տպագրության):
14. **Ալեքսանյան Թ. Կ., Նիկողոսյան Մ.**, Ատեստավորման ենթակա հայոց լեզվի և գրականության ուսուցիչների վերապատրաստման դասընթացի ծրագիր և ուղեցույց // «Տիգրան Մեծ» հրատ., 2013թ., 200 էջ:
15. **Ալեքսանյան Թ. Կ., Հակոբյան Գ.**, Ատեստավորման ենթակա դասվարների վերապատրաստման դասընթացի ծրագիր և ուղեցույց // «Տիգրան Մեծ» հրատ., 2013թ., 200 էջ:
16. **Ալեքսանյան Թ. Կ.**, Ոչ դիվանագիտական հայրենասիրություն // «Անկախ» շաբաթաթերթ, 25-26 / 2013:
17. **Ալեքսանյան Թ. Կ.**, Վասն գիտելիքի կամ կրկին շտեմարանների մասին // «Անկախ» շաբաթաթերթ, 52 / 2013, 8 էջ:
18. **Ալեքսանյան Թ. Կ.**, Բանավոր խոսքի զարգացումը միջին դարոցում (5-6-րդ դասարաններ) // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, հ.15, Երևան, 2013, էջ 497-502:
19. **Իսկանդարյան Ն. Մ.**, Գեղարվեստական մտածողության տարրերը 5-րդ դարի հայկական վկայաբանություններում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, հ.15, Երևան, 2013, էջ 491-497:
20. **Ասատրյան Ծ. Ժ.**, Արտակ Համբարձումյանի քնարերգությունը // Հյուսիսային համալսարանի միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2012 (հանձնված է տպագրության):
21. **Ասատրյան Ծ. Ժ.**, Մանկավարժական կադրերի մասնագիտական որակների բարձրացման խնդիրը բուհական համակարգում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, հ.15, Երևան, 2013, էջ 502-508:
22. **Խանդանյան Ս. Կ.**, Հարաբերական ածական որոշչի արտահայտությունը արդի հայերենի գոյականական բառակապակցություններում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, հ.15, Երևան, 2013, էջ 508-516:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Գրիգորյան Վաչագան Ռաֆիկի, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Ղազարյան Նորայր Կարապետի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
2. Ղարիբյան Ալինա Ամբիկի - ասիստենտ
3. Բազոյան Ալլա Սահակի-դասախոս
4. Բոշյան Նարինե Զովիկի-լաբորանտ

ՀԱՍՏԵՂՈՂՆԵՐ

1. Եղիազարյան Ազատ Կոմունարի-բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
2. Առաքելյան Արա Զրաչիկի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊԴ պրոֆեսոր
3. Գրիգորյան Սուսաննա Ալբերտի-բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
4. Ղռեջյան Լուսինե Խաչատուրի - բանասիրական գիտությունների թեկնածու

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Առասպելաբանության, «Սասնա ծռեր» էպոսի վերաբերյալ ուսումնասիրություններ:
2. Չարենցի և Նարեկացու ստեղծագործությունների ուսումնասիրության հարցեր:
3. Արդի հայ պոեզիայի և արձակի վերաբերյալ ուսումնասիրություններ:
4. 20-րդ դարի հայ թատերագրության ուսումնասիրության խնդիրներ:
5. Զրանտ Մաթևոսյանի ստեղծագործության ուսումնասիրության խնդիրներ:
6. Արևմտահայ դրամատուրգիայի ուսումնասիրության հարցեր:
7. Հակոբ Օջականի ստեղծագործության ուսումնասիրության խնդիրներ:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ձեռնարկ	ՈՒՍՈՒՄՆԱՄԵ-թողական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	4	-	-	18	3

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Եղիազարյան Ա. Կ., «Սասնա ծռեր» էպոսի պոետիկան, Երևան, 2013, 228 էջ:
2. Գրիգորյան Վ. Ռ., Անհատական ու հասարակականը որպես փոխկապակցված իրողություններ՝ Զր. Մաթևոսյանի «Նանա իշխանուհու կամուրջը» վիպակում // «Հայկազյան հայագիտական հանդես», Բեյրութ, 2012, ԼԲ, էջ 131-164:

3. **Գրիգորյան Վ. Ռ.**, Հրազդանի դրամատիկական թատրոնը // «Հայկազյան հայագիտական հանդես», Բեյրութ, 2013, ԼԳ:
4. **Գրիգորյան Վ. Ռ.**, Հր. Մաթևոսյանի ստեղծագործության շրջանները և փիլիսոփայական յուրահատկությունները // «Էջմիածին» հանդես, 2013, 20 էջ:
5. **Գրիգորյան Վ. Ռ.**, Հրանտ Մաթևոսյան. ստեղծագործությունը // «Լուսակն» հրատարակչություն, 2013, 560 էջ:
6. **Գրիգորյան Վ. Ռ.**, Հր. Մաթևոսյանի «Գոմեշը» վիպակը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, հ. 15, Երևան, 2013, էջ 517-528:
7. **Գրիգորյան Ս. Ա.**, Ածանցավոր նորակազմությունները Կոստան Ջարյանի պոեմներում // «Լեզու և կրթություն», N 3, Երևան, 2012, էջ 54-59:
8. **Գրիգորյան Ս. Ա.**, Բարդ նորակազմությունները Կոստան Ջարյանի պոեմներում // «Լեզու և կրթություն», N 4, Երևան, 2012, էջ 76-81:
9. **Գրիգորյան Ս. Ա.**, Կ. Ջարյանի պոեմների բառապաշարային առանձնահատկությունները // «Համատեքստ», Երևան, 2012, էջ 140-148:
10. **Գրիգորյան Ս. Ա.** Ժողովրդախոսակցական բառաշերտը Կ. Ջարյանի չափածոյում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, հ. 15, Երևան, 2013, էջ 537-542:
11. **Ղազարյան Ն. Կ.**, «Կեցության թամաշան» // «Այվազյանական ընթերցումներ», էջ 11-13:
12. **Ղազարյան Ն. Կ.**, Դասականից մոդեռն և հետմոդեռն, Երևան, 2012, 255 էջ:
13. **Ղազարյան Ն. Կ.**, «Մատեան ողբերգութեան» երկի «երեքալեանն» բառի ծանոթագրության շուրջ» // «Նորք», 2013, 1, էջ 146-151:
14. **Ղազարյան Ն. Կ.**, «Վերք Հայաստանի» վեպը՝ շրջադարձային երևույթ հայ գրականության մեջ» // զեկուցում, միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2013, հունիսի 14-19, էջ 23-28:
15. **Ղազարյան Ն. Կ.**, Չարենցը և միջնադարը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, հ. 15, Երևան, 2013, էջ 543-551:
16. **Առաքելյան Ա. Հ.**, Փիլիսոփայական վեպը և ազգային բնավորությունը // «Համատեքստ», 2012, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, էջ 4-22:
17. **Առաքելյան Ա. Հ.**, Պլատոնյան տրամախոսություններն իբրև եվրոպական փիլիսոփայական վեպի նախատիպ // ԳԱԱ գրականության ինստիտուտ, «Գրականագիտական հանդես», Երևան, 2012, էջ 246-263:
18. **Առաքելյան Ա. Հ.**, Թոմաս Մանը՝ զեղազետ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, հ. 15, Երևան, 2013, էջ 528-537:
19. **Առաքելյան Ա. Հ.**, Библейская книга Иегова как прототип современного философского романа // Материалы Десятых Андреевских чтений, Москва, 2012, էջ 31-41.

20. **Ղարիբյան Ա. Ա.**, Արևի պաշտամունքի արձագանքները «Սասնա ծռերի» կանանց կերպարներում. Դեղձուն Ծամ կամ Քառասուն ճյուղ Ծամ // ԳՊՅ գիտական հոդվածների ժողովածու, հ. 15, Երևան, 2013, էջ 551-558:
21. **Ղռեջյան Լ. Խ.**, Ժողովրդական ասուլիսաբանության և ավանդական զրույցների փոխադարձ կապը (ըստ Գավառում գրանցված նյութերի) // ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի «Հայ ժողովրդական մշակույթ. 16» հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր:
12. **Պողոսյան Ա. Ա., Մուրադյան Տ.**, Հայոց գորգագործական մշակույթի ավանդույթները հյուսիս-արևելյան Այսրկովկասում // միջազգային գիտաժողով, զեկուցումների դրույթներ (հայերեն, անգլերեն), Երևան, 2013, էջ 22-24:
13. **Պողոսյան Ա. Ա.**, Անատոլիական գորգերի ծագումնաբանության հարցի շուրջ // միջազգային գիտաժողով, զեկուցումների դրույթներ (հայերեն, անգլերեն), Երևան, 2013, էջ 14-15:
14. **Պողոսյան Ա. Ա., Տեր Ասողիկ քահանա Կարապետյան**, Մայր Աթոռի թանգարաններում պահվող գորգերի հավաքածուն // միջազգային գիտաժողով, զեկուցումների դրույթներ (հայերեն, անգլերեն), Երևան, 2013, էջ 32-33:
15. **Հակոբյան Ա. Ա.**, Էթնիկ բռնությունը, համակեցությունը և ժողովրդական դիվանագիտությունը դարաբաղյան կոնֆլիկտի ժամանակ // ԳՊՅ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Իրավունք» հրատ., N 15, 2013, 230-236:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Խաչատրյան Սամվել Արտաշեսի** - իրավաբանական գիտությունների թեկնածու, ԳՊՅ դոցենտ,
2. **Մուրադյան Մկրտիչ Արշավիրի** - ԳՊՅ դոցենտ,
3. **Աֆրիկյան Արևիկ Տելեմակի** - ասիստենտ,
4. **Ղազարյան Քրիստինե Վարդանի** - լաբորանտ:

Համատեղողներ

1. **Հակոբյան Հրանուշ Հրանտի** - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
2. **Հակոբյան Ռուզաննա Խաչիկի** - իրավաբանական գիտությունների դոկտոր, ԳՊՅ պրոֆեսոր,
3. **Խաչատրյան Աշոտ Հայկի** - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
4. **Ապրոյան Արսեն Հրաչիկի** - իրավաբանական գիտությունների թեկնածու,

5. Հարությունյան Մնացական Հայկի - իրավաբանական գիտությունների թեկնածու,
6. Ավագյան Էդուարդ Մելսիկի - դասախոս,
7. Լազարյան Վարդան Գերասիմի - դասախոս,
8. Վարդանյան Մարգարետունի Գոռի - ասիստենտ,
9. Հովհաննիսյան Օլգա Արտյոմի - ԳՊՀ դոցենտ,
10. Մուրադյան Պապին Օնիկի - ասիստենտ,
11. Գրիգորյան Տարոն Վրեժի - ասիստենտ,
12. Հովհաննիսյան Էդուարդ Սարգսի - ասիստենտ,
13. Բախտիկյան Լուսինե Վանիկի - ասիստենտ:

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքացիական հասարակության ձևավորման, ժողովրդավարության, իրավական, սոցիալական պետության կայացման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ սահմանադրական, քաղաքացիական և քրեական օրենսդրության բարեփոխման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մեմագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	-	-	25	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Հակոբյան Հ. Հ., Նկատառումներ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի մանդատի վերաբերյալ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Իրավունք» հրատ., N14, 2012, էջ 535-541:
2. Հակոբյան Հ. Հ., Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ, Իտալիա, Տրիեստ, 2012:
3. Հակոբյան Հ. Հ., Հայ գրատպության 500-ամյակը // Ձեկուցում հայ գրողների համահայկական համաժողովում, Երևան, 2012:
4. Հակոբյան Հ. Հ., Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների լիազորությունների դադարման սահմանադրական հիմքերը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Իրավունք» հրատ., N 15, 2013, էջ 657-665:

5. **Չակոբյան Ռ. Խ.**, Սահմանադրական պատասխանատվությունը՝ որպես իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ // ԳՊՅ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Իրավունք» հրատ., N14, 2012, էջ 541-549:
6. **Չակոբյան Ռ. Խ.**, Երդունը որպես պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն ստանձնելու միջոց // Օրենք և իրականություն, Երևան, 2012, N1, էջ 1-5:
7. **Չակոբյան Ռ. Խ.**, Փոխակերպվող հասարակության և պետաիրավական համակարգի առանձնահատկությունները // Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Երևան, 2012, N 2, էջ 111-119:
8. **Չակոբյան Ռ. Խ.**, Սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի կայացումը՝ ժամանակի հրամայական պահանջ // «Օրենք և իրականություն» հրատ., Երևան, 2012, N11 (205), էջ 1-5:
9. **Չակոբյան Ռ. Խ.**, Սոցիալական պատասխանատվության ինստիտուտի հասկացությունը և նշանակությունը // Գիտական զեկուցում՝ ներկայացված Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90-ամյակին նվիրված գիտաժողովին, դեկտեմբեր, 2012:
10. **Չակոբյան Ռ. Խ.**, Իրավունքի փիլիսոփայությունը որպես համալիր գիտություն // ԳՊՅ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Իրավունք» հրատ., N 15, 2013, էջ 665-673:
11. **Խաչատրյան Ս. Ա.**, Նորից հայկական այբուբենի ստեղծման հարցի շուրջ // ԳՊՅ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Իրավունք» հրատ., N14, 2012, էջ 556-566:
12. **Խաչատրյան Ս. Ա.**, «Չաճախապատում ճառքի» հեղինակության հարցի շուրջ // ԳՊՅ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Իրավունք» հրատ., N14, 2012, էջ 567-578:
13. **Խաչատրյան Ս. Ա.**, Վիժելու և նորածնի սպանության հիմնահարցն ըստ «Չաճախապատում ճառքի» // ԳՊՅ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Իրավունք» հրատ., N 15, 2013, էջ 673-689:
14. **Խաչատրյան Ս. Ա.**, Քարշ տալը որպես հանցագործությունների, խախտումների բացահայտման, կանխման ու նախականիման միջոց և պատժատեսակ // ԳՊՅ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Իրավունք» հրատ., N 15, 2013, էջ 689-706:
15. **Խաչատրյան Ս. Ա.**, Անհասութեամբ լացուկոծ անելն ու ցտելը որպես հին հայկական իրավական նորմ // ԳՊՅ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Իրավունք» հրատ., N 15, 2013, էջ 706-722:
16. **Խաչատրյան Ս. Ա.**, Ազատ ընտրության հարցը «Չաճախապատում ճառքում» (վերլուծություն իրավունքի դիրքերից) // ԳՊՅ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Իրավունք» հրատ., N 15, 2013, էջ 722-737:

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Ամիրխանյան Սամվել Գրիգորի,*
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

Դեկանի տեղակալ՝ *Չերզնյան Սարիամ Նորիկի,*
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Դասիչ	Մասնագիտություն
080300	Ֆինանսներ
081500	Հաշվապահական հաշվառում
080600	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում

Մասնագիտացումներ՝

բակալավր՝	ֆինանսների բակալավր ֆինանսների բակալավր տնտեսագիտության բակալավր
մագիստրոս՝	ֆինանսների մագիստրոս ֆինանսների մագիստրոս տնտեսագիտության մագիստրոս

Ուսանողների թիվը՝ 235

Շրջանավարտների թիվը՝ 87

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
2012-2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ 2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ՉԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

2012-2013 ուստարվա ընթացքում Տնտեսագիտական ֆակուլտետում կիրառվել են կրթական նոր տեխնոլոգիաներ, որոնք հաշվի են առել շուկայական հարաբերությունների պահանջները, ժամանակի մարտահրավերները, բարձրագույն կրթության աստիճանական զարգացման շահերը:

Ֆակուլտետի համար ուղենիշ է ծառայել գիտելիքի անփոխարինելի արժեքի իմացաբանական սկզբունքը: Ամբիոնների համար կարևոր է եղել ուսուցման գործում գիտատեխնիկական նվաճումների ներդրման եղանակների մշակումը: Որոշակի աշխատանքներ են կատարվել ուսումնական գործընթացի որակի բարելավման և վերահսկման ուղղությամբ: Հաջողություններ են նկատվում ամբիոնների աշխատանքի ինքնավերլուծության, ձեռքբերումների և բացթողումների վերհանման ոլորտում:

Ուսուցման գործընթացում հիմնական ուշադրությունը հատկացվում է կրթության բովանդակության հարստացմանը, բարձրագույն կրթության եվրոպական չափանիշներին համապատասխանեցմանը:

Ֆակուլտետում ներդրվել է տեղեկատվության փոխանակման և հաշվետվողականության կառուցակարգ: Ամբիոնները գործում են տեսության և պրակտիկայի մերձեցման պահանջի հաշվառմամբ՝ ելակետ ընդունելով ողջ ուսումնական գործընթացի չափումը պատրաստի կադրերի որակական հատկանիշներով: Ապահովվում է անցում դեպի փոխներգործում, անձնակողմնորոշիչ և զարգացնող մանկավարժություն:

Խորացվում է ուսուցման կապը սոցիալական պահանջարկի և առաջարկի դինամիկայի հետ:

Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում ֆակուլտետում սովորում էին 235 ուսանողներ, այդ թվում՝ 182-ը բակալավրիատում, և 53-ը՝ մագիստրատուրայում:

Տնտեսագիտական ֆակուլտետում սովորող ուսանողների թիվը 01.09.12թ.

<i>ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ</i>	I	II	III	IV	<i>ԸՆԴԱՄԵՆՆԸ</i>
Ֆինանսներ	28	5	27	32	92
Հաշվապահական հաշվառում	14	-	23	19	56
Ձեռն. տնտ. և կառավարում	5	-	9	20	34
<i>ԸՆԴԱՄԵՆՆԸ</i>	47	5	59	71	182

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ					
Ֆինանսներ	15	10	X	X	25
Հաշվապահական հաշվառում	14	6	X	X	20
Ձեռն. տնտ. և կառավարում	3	5	X	X	8
Ընդամենը	32	21	X	X	53
Ընդամենը ֆակուլտետում	235				

Ուսանողների առաջադիմություն

Տնտեսագիտական ֆակուլտետի ուսման ընդհանուր առաջադիմությունը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, աճել է 9%-ով (61,6`-ից 70,6%): Բակալավրիատում այն աճել է 13,2%-ով (60,8%-ից և 74,0%), մագիստրատուրայում նվազել է 12%-ով (67,0% և 55,0%): Իսկ առաջին կիսամյակի համեմատությամբ (66,1%) ֆակուլտետում աճը կազմել է 4,5%:

Ուսման առաջադիմությունը 2011-2012 ուս. տարվա II կիսամյակի համեմատությամբ

	2011-2012 ուս. տարվա II կիսամյակ	2012-2013 ուս. տարվա I կիսամյակ	2012-2013 ուս. տարվա II կիսամյակ	Շեղումը 2011-2012 ուս. տարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2012-2013 ուս. տարվա I կիսամյակի համեմատությամբ
Ֆակուլտետ	61,6	66,1	70,6	+9	+4,5
Բակալավրիատ	60,8	64,4	74,0	+13,2	+9,6
Մագիստրատուրա	67,0	72,7	55,0	-12	-17,7

«Ֆինանսներ» մասնագիտության բակալավրիատի առաջին կուրսում երկրորդ կիսամյակի առաջադիմությունը կազմել է 85,7%, որը առաջին կիսամյակի համեմատությամբ աճել է 28,6%-ով:

Ֆինանսներ

	2011-2012 ուս. տարվա II կիսամյակ	2012-2013 ուս. տարվա I կիսամյակ	2012-2013 ուս. տարվա II կիսամյակ	Շեղումը 2011-2012 ուս. տարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2012-2013 ուս. տարվա I կիսամյակի համեմատությամբ
I կուրս	-	57,1	85,7	-	+28,6
II կուրս	63,3	40,0	50,0	-13,3	+10
III կուրս	62,5	69,2	73,1	+10,6	+3,9
IV կուրս	-	65,6	-	-	-

Երկրորդ կուրսի առաջադիմությունը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել է 13,3%-ով, իսկ առաջին կիսամյակի համեմատությամբ աճել է 10%-ով և կազմել 50%:

Երրորդ կուրսում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ առաջադիմությունը աճել է 10,6%-ով, իսկ առաջին կիսամյակի համեմատությամբ՝ 3.9%-ով և կազմել 73,1%:

Չորրորդ կուրսի առաջադիմությունը առաջին կիսամյակում կազմել է 65,6 %, որը նախորդ տարվա համեմատությամբ ցածր է 6,8%-ով:

Հաշվապահական հաշվառում

	2011-2012 ուս. տարվա II կիսամյակ	2012-2013 ուս. տարվա I կիսամյակ	2012-2013 ուս. տարվա II կիսամյակ	Շեղումը 2011-2012 ուս. տարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2012-2013 ուս. տարվա I կիսամյակի համեմատությամբ
I կուրս	-	53,3	73,3	-	+20
II կուրս	75,0	-	-	-	-
III կուրս	36,8	72,7	63,6	+26,8	-9,1
IV կուրս	-	71,4	-	-	-

«Հաշվապահական հաշվառում» մասնագիտության բակալավրիատի առաջին կուրսում առաջին կիսամյակի համեմատությամբ առաջադիմությունը աճել է 20%-ով և կազմել է 73,3%:

Երրորդ կուրսում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ առաջադիմությունը աճել է 26,8%-ով, իսկ առաջին կիսամյակի համեմատությամբ նվազել է 9,1%-ով և կազմել 63,6%:

Չորրորդ կուրսի առաջադիմությունը առաջին կիսամյակում կազմել է 71,4 %, որը նախորդ տարվա համեմատությամբ բարձր է 5,7%-ով:

«Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության բակալավրիատի առաջին կուրսում առաջադիմությունը առաջին կիսամյակի համեմատությամբ աճել է 33,3%-ով և կազմել է 100%:

Երրորդ կուրսում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ առաջադիմությունը աճել է 25%-ով և կազմել 70%, իսկ առաջին կիսամյակի համեմատությամբ նվազել է 30%-ով:

Չորրորդ կուրսի առաջադիմությունը առաջին կիսամյակում կազմել է 45 %, որը նախորդ տարվա համեմատությամբ ցածր է 21,7%-ով:

Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում

	2011-2012 ուս. տարվա II կիսամյակ	2012-2013 ուս. տարվա I կիսամյակ	2012-2013 ուս. տարվա II կիսամյակ	Շեղումը 2011-2012 ուս. տարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2012-2013 ուս. տարվա I կիսամյակի համեմատությամբ
I կուրս	-	66,7	100	-	+33,3
II կուրս	100	-	-	-	-
III կուրս	45,0	100	70,0	+25	-30
IV կուրս	-	45,0	-	-	-

Մագիստրատուրայի ֆինանսների մասնագիտության առաջին կուրսում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ առաջադիմությունը նվազել է 37%-ով և կազմել է 33,0%: Իսկ Հաշվապահական հաշվառում մասնագիտության առաջին կուրսում բարձրացել է 13%-ով և կազմել 73%: Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությունում այն նույնպես նվազել է 30%-ով և կազմել 50%:

Մագիստրատուրա

	2011-2012 ուս. տարվա II կիսամյակ	2012-2013 ուս. տարվա I կիսամյակ	2012-2013 ուս. տարվա II կիսամյակ	Շեղումը 2011-2012 ուս. տարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2012-2013 ուս. տարվա I կիսամյակի համեմատությամբ
Ֆինանսներ, I կուրս	70,0	60	33,0	-37	-27
Ֆինանսներ, II կուրս	-	87,5	-	-	-
Հաշվապահական հաշվառում, I կուրս	50,0	46,2	73,0	+13	+26,8
Հաշվապահական հաշվառում, II կուրս	-	100	-	-	-
Ձեռնարկությունների տնտես և կառավարում, I կուրս	80,0	100	50,0	-30	-50
Ձեռնարկությունների տնտես և կառավարում, II կուրս	-	100	-	-	-

III կուրսերի առաջադիմությունն ըստ կիսամյակների

	Ուսանողների թիվը	Ֆինանսներ III կուրս	Ուսանողների թիվը	Հաշվապահական հաշվառում III կուրս	Ուսանողների թիվը	Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում III կուրս
I կուրս, I կիս.	28	46,4	9	77,8	8	87,5
I կուրս, II կիս.	26	50,0	9	66,7	7	100
II կուրս, I կիս.	29	79,3	19	78,9	10	90,0
II կուրս, II կիս.	30	63,3	20	75,0	9	100
III կուրս, I կիս.	26	69,2	22	72,7	9	100
III կուրս, II կիս.	26	73,1	22	63,6	10	70

Կարևոր է նաև առաջադիմության դինամիկան՝ ըստ նույն կուրսի տարբեր տարիների ցուցանիշների: «Ֆինանսներ» մասնագիտության երրորդ կուրսում տարվա երկրորդ կիսամյակում առաջադիմությունը կազմել է 73,1%, նույն կուրսի առաջին տարվա առաջին կիսամյակի 46,4%-ի դիմաց, աճը կազմել է 26,7%: Ներկայումս կուրսն ունի 26 ուսանող, որոնցից 7-ը երկրորդ կիսամյակում ունեցել է ակադեմիական պարտք:

«Հաշվապահական հաշվառում» մասնագիտության երրորդ կուրսում բոլոր կիսամյակներում արձանագրվել է կայուն առաջադիմություն՝ 72,7%-ից 77,8%: Առաջին կուրսում սովորողների թիվը եղել է 9, երրորդ կուրսում թիվն ավելացել է 13-ով, հասել 22-ի՝ ի հաշիվ քոլեջներից և ԳՊՅ հեռակա բաժնից տեղափոխվածների: Երրորդ կուրսի երկրորդ կիսամյակում 8 ուսանող ունեցել է ակադեմիական պարտք: Այս դեպքում կարելի է խոսել ռեկտորատի կողմից դրսի ռեսուրսների հաշվին կուրսի ձևավորման, նրա կարողությունների ամրապնդման ջանքերի և դրա լավ «հատույցի» մասին:

«Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության երրորդ կուրսում երեք կիսամյակներում ապահովվել է 100% առաջադիմություն, իսկ 2012-2013 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջադիմությունը կազմել է 70%, ինչը հետևանք է նախորդ տարիներից վերականգնված ուսանողների ցածր առաջադիմության:

«Ֆինանսներ» մասնագիտությունում առաջին կուրսերի առաջադիմությունը երկրորդ կիսամյակում առաջին կիսամյակի համեմատությամբ աճեց 15%-ով և կազմեց 85,7%: «Հաշվապահական հաշվառումում» այն 53,3%-ից բարձրացավ 73,3%-ի, «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» բաժնում այն հասավ 100%-ի՝ 66,7%-ի փոխարեն:

Կարելի է ասել, որ դիմորդների գիտելիքների հարցը միշտ էլ ուշադրության կենտրոնում է: Համոզված ենք, որ ընդունելությունից հետո, շատ բան պայմանավորված է բուհում ուսուցման արդյունավետ կազմակերպումից, իսկ դա մեր համալսարանում ամուր հիմքեր ունի:

2012-2013 ուստարում ձևավորվեց Ֆինանսներ երկրորդ կուրս՝ քոլեջի ուսանողներից, ընդամենը 5 ուսանող, որոնցից 2-ը մեկնեցին զինվորական ծառայության: Առաջին կիսամյակում կուրսի առաջադիմությունը կազմեց 40%, երկրորդ կիսամյակում՝ 50%: Այժմ կուրսում սովորում են 5 ուսանող, որոնցից 2-ը տեղափոխվել են Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի Գավառի մասնաճյուղից:

Առանձին դեպքերում առաջադիմության նվազումը վկայում է ֆակուլտետում դեռևս իրեն զգացնել տվող իներցիոն աշխատառճի, ուսանողների անպատասխանատվության, դասախոսների ոչ հետևողական աշխատանքի, մեթոդական ոչ պատշաճ բազայի մասին:

Ֆակուլտետի խորհրդի, ամբիոնների ուշադրությունը այսուհետև ևս կուղղենք ուսանողների շրջանում գիտելիքի կարևորության գիտակցման ձևավորմանը: Հարկավոր է ուսանողի մեջ ներարկել անձնային և մասնագիտական աճ ապահովելու ձգտում: Ուսանողն, ի վերջո,

պետք է հասկանա, որ միայն լուրջ իմացական կարողություններով ինքը կարող է դիմագրավել աշխատաշուկայի մարտահրավերներին:

Ֆակուլտետի խնդիրների լուծման գործընթացի ծանրակշիռ բաժինը լավ կազմակերպվող դասն է: Դասախոսը պետք է հետևի դասերի հաջորդական շղթայում ուսանողների կողմից գիտելիքների ձեռքբերմանը: Նա չպետք է անհետևողական լինի, դասախոսության «հատույցը» ամենակարևորն է, ինչը դասախոսը պետք է անընդհատ ստուգի, ստուգումը դարձնի իր աշխատանքի անբաժան մասը:

Հարցն ավելի է բարդանում բազմագործոնային գնահատման պարագայում, որը գիտելիքների ձևավորման կարևոր պայման է: Սովորողները կատարում են անհատական աշխատանք, հանձնում միջանկյալ և ամփոփիչ քննություններ: Դասախոսի որակները, այնուամենայնիվ, ստուգվում և չափվում են ուսանողներին հաղորդած գիտելիքների մակարդակով: Ուստի, մեր խնդիրն է դասախոսների աշխատանքի արդյունավետության բարձրացումը, ուսանողներին ինքնուրույն աշխատանքի մղելը, նրանց օբյեկտիվ գնահատելը, ինչը կհանգեցնի ֆակուլտետի շրջանավարտների մրցունակության աճին:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանից 1 և քոլեջներից 5 ուսանողներ տեղափոխվել են Տնտեսագիտական ֆակուլտետ: Քոլեջներից տեղափոխվածները գոհացում են իրենց ուսումնառության արդյունքներով:

Բանակից վերադարձել են 15 ուսանողներ, նրանք շարունակում են ուսումը բակալավրիատում, ցուցաբերում են կարգապահություն և ակտիվորեն ներգրավված են ուսումնական գործընթացում:

Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի պաշտպանությունը, ինչպես նաև ավարտական ամփոփիչ ատեստավորումը անցկացվել է 2013թ. մայիս ամսին՝ սահմանված կարգով:

Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել են բակալավրիատի 72 ուսանողներ, որոնցից 2-ը նախորդ տարիների շրջանավարտներ են:

Ամփոփիչ ատեստավորմանը «Ֆինանսներ» մասնագիտությամբ մասնակցել են 31 ուսանողներ, «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ՝ 21, «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ՝ 20 ուսանողներ:

Հաշվետու տարում բակալավրիատի «Ֆինանսներ» բաժինն ավարտեցին 31 ուսանողներ, այդ թվում՝ գերազանցության դիպլոմով՝ 22 ուսանող:

«Հաշվապահական հաշվառում» բաժինն ավարտեցին 21 ուսանողներ, որոնցից՝ 9-ը գերազանցության դիպլոմով:

«Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» բաժինն ավարտեցին 20 ուսանողներ, 8-ը գերազանցության դիպլոմով:

Այս տարվա բակալավրիատի շրջանավարտներից ամփոփիչ ատեստավորմանը չի մասնակցել «Ֆինանսներ» բաժնի 1 ուսանող:

Մագիստրատուրան ավարտել են 15 մագիստրոսներ, այդ թվում՝ «Ֆինանսներ» մասնագիտությամբ՝ 6 ուսանող, «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ՝ 5 ուսանող, «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ՝ 4 ուսանող: Մագիստրոսական թեզի պաշտպանությանը չի ներկայացել 1 մագիստրոս:

Մագիստրատուրան գերազանցությամբ ավարտել են 11 մագիստրոսներ:

Ամփոփիչ ատեստավորման արդյունքները հետևյալն են.

Բաժինը		Ուսանողների թիվը	A+	A	A-	B+	B	B-	C+	C	C-	F
Ֆինանսներ (բակալավր)	Ամփոփիչ քննություն I	32	10	9	3	1	2	1	1	1	3	F
	Ամփոփիչ քննություն II	8	-	-	-	-	-	1	-	3	4	-
	Ավարտական աշխատանք	13	11	8	3	-	-	1	-	-	-	-
Ֆինանսներ (մագիստրատուրա)	Մագիստրոսական թեզ	7	-	2	4	-	-	-	-	-	-	F
Հաշվապահական հաշվառում (բակալավր)	Ամփոփիչ քննություն I	21	6	5	2	-	2	2	1	3	-	-
	Ամփոփիչ քննություն II	10	-	1	1	1	2	1	1	3	-	-
	Ավարտական աշխատանք	11	6	5	-	-	-	-	-	-	-	-
Հաշվապահական հաշվառում (մագիստրատուրա)	Մագիստրոսական թեզ	5	3	1	-	-	1	-	-	-	-	-
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (բակալավր)	Ամփոփիչ քննություն I	20	2	6	2	2	1	2	-	5	-	-
	Ամփոփիչ քննություն II	8	-	-	-	-	1	2	-	5	-	-
	Ավարտական աշխատանք	10	6	3	-	1	-	-	-	-	-	-
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (մագիստրատուրա)	Մագիստրոսական թեզ	4	2	2	-	-	-	-	-	-	-	-

Ամփոփիչ ատեստավորման առաջադիմությունն ըստ մասնագիտությունների հետևյալն է.

Բաժինը	Բակալավր	Մագիստրատուրա
Ֆինանսներ	96,9	100
Հաշվապահական հաշվառում	100	100
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	90,0	100

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի դիտողությունները և առաջարկությունները քննարկվել են համապատասխան ամբիոններում, մշակվել են միջոցառումներ՝ թերությունները վերացնելու և ամփոփիչ ատեստավորումը պահանջվող մակարդակով կազմակերպելու համար:

«Ֆինանսներ» մասնագիտության հանձնաժողովի առաջարկությունները մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ հիմնականում ընդգրկում են թեմայի ընտրության խնդիրը, ըստ որի թեմաներ հանձնարարելիս՝ հարկավոր է հաշվի առնել հետազոտության օբյեկտի առկայությունը տարածաշրջանում, ինչը հետազոտության գործնական բազայի դեր կկատարի և հիմնավոր վերլուծությունների հնարավորություն կտա:

Հանձնաժողովների առաջարկությունների ուսումնասիրության և կենսագործման նպատակով մշակվել է միջոցառումների ծրագիր, ձեռնարկվում են համապատասխան քայլեր:

Մագիստրատուրայի բաժնում դեռևս չենք ապահովում լիարժեք հետազոտական գործընթաց, ինչը մեր զարգացման հայեցակարգի պահանջն է: Սակայն դրական է այն, որ ուսանողների գիտական օրինակելի աշխատանքները քննարկում ենք և երաշխավորում տպագրության: Նշենք, որ ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի 5 ուսանողների գիտական հոդվածներ տպագրվել են 2013թ. հունիս ամսին լույս տեսած Սանկտ-Պետերբուրգի Բալթիկայի մանկավարժական ակադեմիայի «Վեստնիկ» ժողովածուի թիվ 110 համարում:

Շատ անելիքներ ունենք ամբիոններին ներկայացվող արդի պահանջների իրագործման ուղղությամբ:

Անբավարար է հետ մնացող ուսանողների հետ տարվող անհատական աշխատանքը: Դրան հակառակ, բարելավվել է պրակտիկաների կազմակերպումը:

Այժմ աշխատանքներ են տարվում գործատուներին ներգրավելու կրթական ծրագրերի լրամշակման և նորացման գործում:

Դեռևս ակտիվ չէ կրթության որակի գնահատման գործում մասնավոր հատվածի դերը:

Ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում» ամբիոնը հետևողական աշխատանք է կատարում հեռակա ուսուցման «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության ուսումնագործնական աշխատանքների կազմակերպման, հեռակա համակարգում սովորող ուսանողների մասնագիտական ձևավորման ուղղությամբ:

Անվճար տեղերում սովորող ուսանողների առաջադիմության ցուցանիշները, նրանց միջին որակական գնահատականների համեմատությունը նախորդ տարվա ցուցանիշների հետ

Անվճար տեղերով ուսուցումը ԳՊԴ-ում սկսվել է 2010-2011 ուսումնական տարվանից, և այդ գործընթացը շարունակվում է նաև այս ուսումնական տարում: Ուսանողները դրսևորում են բարձր առաջադիմություն՝ ձգտելով պահպանել իրենց տեղերը: Ըստ մասնագիտություն-

ների՝ ֆակուլտետի բակալավրիատում և մագիստրատուրայում անվճար տեղերի սովորողների քանակը հետևյալն է.

Տնտեսագիտական ֆակուլտետում անվճար սովորողների թիվն՝ ըստ մասնագիտությունների

	Ֆինանսներ		Հաշվապահական հաշվառում		Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում		Ընդամենը
	I կուրս	III կուրս	I կուրս	III կուրս	I կուրս	III կուրս	
Բակալավրիատ							
Ուսանողների թիվը	3	5	3	6	3	5	25
Կորցրել է անվճար սովորելու իրավունքը	1	1	-	-	1	-	3
Մագիստրատուրա							
Ուսանողների թիվը	1	2	2	1	1	2	9
Կորցրել է անվճար սովորելու իրավունքը	-	X	-	-	1	X	1

Անվճար տեղերի առկայությունը բակալավրիատում և մագիստրատուրայում օրինաչափորեն ազդում է ուսանողների ակտիվության և ուսման որակի բարձրացման վրա, լարված պահելով մրցակցությունը: Անվճար սովորելը առաջ է բերում պատասխանատվության, յուրաքանչյուր միավորի համար լուրջ պայքարի ձգտում:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետում անվճար սովորել են 34 ուսանողներ, որոնցից 25-ը բակալավրիատում, 9-ը՝ մագիստրատուրայում: Ուսումնական տարվա քննաշրջանի արդյունքներով փոխատեղումներ են եղել, բակալավրիատում «Ֆինանսներ» առաջին և երրորդ կուրսերում՝ մեկական ուսանող, «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» առաջին կուրսում՝ մեկ ուսանող, իսկ մագիստրատուրայի «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» բաժնի առաջին կուրսում՝ մեկ ուսանող:

Մագիստրատուրայի անվճար տեղերում սովորող և զինվորական տարկետումից օգտվող ուսանողները պահպանել են իրենց միջին որակական գնահատականները:

Ծրագրի առկա զարգացումներն ու միտումները

Ծրագրի առկա զարգացումները կանխորոշելու համար մենք հենվում ենք բուհի ռազմավարական ծրագրերի և Գիտխորհրդի որոշումների վրա, որոնցից բխող կոնկրետ անելիքների պատասխանատվությունը կրում են ֆակուլտետի խորհուրդն ու ամբիոնները:

Դեկանատի խնդիրն է որոշումների կատարման գործում հանդես բերել պատասխանատվություն, հետևողականություն, կրթական ծրագրերի զարգացման միտումները կանխորոշելիս՝ հաշվի առնել տնտեսագիտության արդի զարգացումները:

Ֆակուլտետի խորհուրդը, ամբիոնները գործունեություն են ծավալում՝ ուսումնական ծրագրերը բարելավելու, առարկայական ծրագրերն արդիականացնելու ուղղությամբ:

Հաշվի են առնվում դասախոսների, ուսանողների և գործատուների առաջարկությունները, որոնք քննարկվում և արժանանում են ամբիոնների հավանությամբ:

Դասախոսների կողմից դասավանդման նոր մեթոդների օգտագործումը ֆակուլտետի ամբիոնների մշտական ուշադրության կենտրոնում է: Ժամանակակից կրթական մեթոդներ են կիրառվում «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության «Բիզնեսի կազմակերպում», «Մարկետինգ» առարկաների դասավանդման գործընթացում: Կիրառվում է «Փորձի վրա ուսուցում» նորագույն մեթոդը: 2013թ. մարտի 31-ին դասախոսներ Ն. Թադևոսյանը և Ա. Հովեյանը «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» 3-րդ կուրսում նշված մեթոդի կիրառմամբ անցկացրին բաց դաս: Ֆակուլտետի ամբիոնների առջև համալսարանի գիտխորհուրդը խնդիր է դրել ապահովել կրթական ելքային արդյունքները՝ նախընտրելով տեսականի և գործնականի կապի ամրապնդումը, գիտելիքի ստուգումն ու ամրապնդումը, ուսանողների մասնագիտական կարողությունների աստիճանական զարգացումը:

Դասախոսական կազմը հիմնականում համապատասխանում է իրականացվող մասնագիտական կրթական ծրագրի պահանջներին: Սակայն նոր կադրերի պահանջ զգացվում է: Նկատի ունենք նորագույն կրթական տեխնոլոգիաներին տիրապետող մասնագետներին:

Այնուհանդերձ, ֆակուլտետը ապահովված է մասնագետ դասախոսներով: Հաշվետու ուսումնական տարում, կատարելով ծրագրային փոփոխություններ, ունենք դասավանդվող նոր առարկաներ՝ «Կառավարման սոցիոլոգիա», «Տնտեսագիտական սոցիոլոգիա» և «Անձնակազմի կառավարում» (դասախոս՝ Արմեն Սահակյան, տնտեսագիտության թեկնածու, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր): Ապահովված ենք «Էլեկտրոնային բիզնես» առարկայի դասախոսով (Հարություն Գզրարյան), «Դրամավարկային քաղաքականություն» առարկայի դասախոսով (Վահրամ Ջանվեյան, տնտեսագիտության թեկնածու, ԿԲ դրամավարկային քաղաքականության բաժնի նախկին մասնագետ, այժմ ՀՀ ֆինանսների նախարարության մակրոտնտեսական կանխատեսումների բաժնի պետ): «Մաթեմատիկական ծրագրավորում և մոդելավորում» առարկայի դասախոսն է Վահրամ Նալչաջյանը, (տնտեսագիտության թեկնածու) և «Միջազգային տնտեսական հարաբերություններ» առարկայի դասախոսն է Գերմանիայի Դաշնային Հանրապետության Տրիերի համալսարանի մագիստրատուրայի շրջանավարտ, տնտեսագիտության թեկնածու Սամվել Թադևոսյանը:

Տնտեսագիտական ֆակուլտետում առաջին անգամ «Էլեկտրոնային բիզնես» և «Դրամավարկային քաղաքականություն» առարկաների քննությունները մագիստրատուրայի բաժնում անցկացրել ենք համակարգչային` Examination.gsu եղանակով:

Ֆակուլտետի կարևոր խնդիրներից ենք համարում ամբիոններում գիտամեթոդական աշխատանքների շարունակական ընթացքի ապահովումը և խթանումը: Նշենք, որ նախորդ տարիներին այս հարցում արձանագրել ենք թերություն:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի դասախոսները կատարել են գիտահետազոտական աշխատանք, տպագրել գիտական հոդվածներ, հանդես եկել գիտաժողովներում: «Ֆինանսներ» ամբիոնի դասախոսների կողմից ներկայացվել է 5, «Հաշվապահական հաշվառում» ամբիոնի դասախոսների կողմից` 7 և «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» ամբիոնի դասախոսների կողմից` 6 հոդված:

ԳՊՀ դասախոսները հոդվածներ են ներկայացրել և տպագրել նաև այլ երկրներում և տարբեր ամսագրերում: Այսպես.

1. Առաքելյան Վ., Այրումյան Ի., Մրցակցային ռազմավարության մշակման խնդիրները արդի պայմաններում // Հայաստանի պետական մանկավարժական համալսարան // Գիտական հոդվածների ժողովածու:
2. Առաքելյան Վ., Նորանուծական գործընթացների մշակման ռազմավարության մի քանի հարցեր // Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Գիտական հոդվածների ժողովածու:
3. Նààèÿí À. Ê., Проблемы анализа влияния миграционных процессов на развитие сельских общин Армении // ж-л "Вестник Инжэкона":
4. Նààèÿí À. Ê., Влияние миграционных процессов на социально-экономическую безопасность // Сборник межд. конференции "4-ые социологические чтения", (будет в апреле Питере):
5. Նààèÿí À. Ê., Культурные особенности в современной России // Ж-л "Вестник КРСУ", Кыргызстан. КРСУ-Кыргызско-российский славянский университет:
6. Թադևոսյան Ս., Փոքր և միջին բիզնեսի սահմանման խնդիրները ՀՀ-ում // Ֆինանսներ և էկոնոմիկա, Հայաստան:
7. Հարությունյան Հ., Կապիտալի շուկայի վերլուծությունը և տեսական մոտեցումները // Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասի Կուբանի ագրարային համալսարանի գիտաժողովի նյութեր:

Այս տարի Տնտեսագիտական ֆակուլտետի բակալավրիատի 13 և մագիստրատուրայի 5 ուսանողներ մասնակցեցին ԳՊՀ հիմնադիր ռեկտոր Հ. Խ. Հակոբյանի 85-ամյակին նվիրված ուսանողական հանրապետական գիտաժողովին` ներկայացնելով իրենց գիտական զեկուցումները:

Հաշվետու ժամանակաշրջանում «Ֆինանսներ» ամբիոնի լաբորանտ, ԳՊՀ շրջանավարտ Գ. Խաչատրյանը պաշտպանել է թեկնածուական թեզ և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

Ֆակուլտետի դեկանատն ու ամբիոնները, պետք է ավելի եռանդով աշխատեն ունենալ առաջադրված խնդիրների լուծման հստակ ժամկետներ:

Կրթության որակի ապահովման գործընթաց

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետում մշակվել են կրթության որակի բարձրացման կառուցակարգեր, որոնք աստիճանաբար գործի են դրվում: Ֆակուլտետի ուսանողների առաջադիմության բարձրացումը վկայում է կրթության որակի ապահովման մասին, սակայն առանձին դեպքերում իներցիան մնում է չհաղթահարված: Ուստի կարևորվում են որակի վերահսկողությունն ու կառավարումը: Դեկանատը այս հարցում դեռևս շատ անելիքներ ունի: Ուսանողի առաջադիմության ցուցանիշը միջին որակական գնահատականն է, որն արտահայտում է ուսման որակի դինամիկան:

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին ըստ մասնագիտությունների ՄՈԳ-երի պատկերը հետևյալն է.

2012-2013 ուս. տարում ըստ մասնագիտությունների և կուրսերի ձևավորված ՄՈԳ-երը՝ համապատասխան սանդղակով

Մասնագիտություններ	Կուրսեր	ուսանողների թիվը	1,7-2,9		3,0-3,5		3,6-4,0	
			ուսանողների թիվը	կուրս	ուսանողների թիվը	տոկոս	ուսանողների թիվը	տոկոս
Ֆինանսներ 1-ին		21	10	47,6	5	23,8	6	28,6
Ֆինանսներ 2-րդ		4	2	50	-	-	2	50
Ֆինանսներ 3-րդ		26	7	27	5	19,2	14	53,8
Հաշվապահական հաշվառում 1-ին		15	5	33,3	5	33,3	5	33,3
Հաշվապահական հաշվառում 3-րդ		22	8	36,4	3	13,6	11	50
Ձեռնարկությունների տնտ. և կառ. 1-ին		6	1	16,7	1	16,7	4	66,6
Ձեռնարկությունների տնտ. և կառ. 3-րդ		10	2	20	1	10	7	70

Ցուցանիշների փաստում են, որ բարձր ՄՈԳ են ապահովել «Ֆինանսներ» երրորդ, երկրորդ, «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում»՝ երրորդ և առաջին կուրսերի ուսանողները: Նշված կուրսերում 3,6-4,0 ՄՈԳ ապահովել է ուսանողների 50-70%-ը: Ավելի ցածր ՄՈԳ ունեցել են ֆինանսներ առաջին, Հաշվապահական հաշվառում առաջին և երրորդ կուրսերում, որտեղ 1,7-2,9 ՄՈԳ ունեցող ուսանողները կազմել են 33,3 - 47,6%:

Կարևոր է նաև բարձր կուրսերում ՄՈԳ-երի դինամիկան: Երեք մասնագիտությունների գծով բարձր կուրսերում նախորդ տարվա համեմատությամբ ՄՈԳ-ը կրել է հետևյալ փոփոխությունները.

Երեք մասնագիտությունների գծով երրորդ կուրսերի ՄՈԳ-երի համեմատական վերլուծություն

Մասնագիտություններ Կուրսեր	ՄՈԳ 2011- 2012 ուս. տարի	ՄՈԳ 2012- 2013 ուս. տարի	Շեղում	ՄՈԳ 2011-2012 ուս. տարի	ՄՈԳ 2012- 2013 ուս. տարի	Շեղում	ՄՈԳ 2011- 2012 ուս. տարի	ՄՈԳ 2012- 2013 ուս. տարի	Շեղում
	3,6-4,0			3,0-3,5			1,7-2,9		
Ֆինանսներ 3-րդ	48,3	53,8	+5,5	13,8	19,2	+5,4	37,9	27	- 10,9
Հաշվապահական հաշվառում 3-րդ	47,6	50	+2,4	38,1	13,6	-24,5	14,3	36,4	+22, 1
Ձեռնարկություններ ի տնտ. և կառ. 3-րդ	66,7	70	+3,3	11,1	10	-1,1	22,2	20	-2,2

Ֆինանսներ բաժնուն 3,6-4,0 ՄՈԳ ունեցողների տեսակարար կշիռը ավելացել է 5,5%-ով և կազմել է 53,8%՝ ի հաշիվ ցածր ՄՈԳ-երի: «Հաշվապահական հաշվառում» և «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» բաժիններում այն բարձրացել է համապատասխանաբար 2,4 և 3,3 %-ով և կազմել 50 և 70 %:

Ուսուցման գործընթացի որակի բարձրացման հիմքերից մեկը դասախոսությունների տրամադրումն է ուսանողությանը, որը ինտերակտիվ ձևաչափով դասավանդելու միջոցն է:

Ուսման որակին խոչընդոտում է այն, որ ուսանողների մի առանձին մաս նախապես չի ծանոթանում դասախոսությունների տեքստերին, ինչը թույլ չի տալիս ակտիվացնել դասաժամը: Մինչդեռ նախապես ծանոթությունը դասախոսությունների տեքստերին, բուն դասախոսությունը դարձնում է ընկալելի, դասախոս-ուսանող հարաբերությունը՝ ավելի արդյունավետ: Պետք է հասնել նրան, որ ուսանողները թեմայի որոշակի իմացությամբ մտնեն լսարան, որպեսզի բովանդակալի քննարկում ծավալվի: Ավելին, դասախոսությունների տրամադրումը ուսանողին մղում է դեպի սեփական ուժերով գիտական աղբյուրների ուսումնասիրության: Պետք է խոստովանել, որ դասախոսները դեռևս դժգոհում են ուսանողներից՝ բաժանված տեքստերին ծանոթ չլինելու կամ մասնակի տեղեկացված լինելու համար: Դրան կնպաստի e-learning.gsu համակարգի օտագործումը:

Ինչպես ռեկտորատի, այնպես էլ դեկանատի և դասախոսների կողմից լուրջ ուշադրություն է դարձվում ուսանողների հաճախումներին: Ամենօրյա հաշվառման արդյունքում որոշ ուսանողներ ենթարկվել են վարչական պատասխանատվության (նկատողություն, խիստ նկատողություն):

Վարչական տույժեր ստացած ուսանողներ

Կրթական աստիճաններ	2012-13 ուս. տարվա I կիսամյակ	2012-13 ուս. տարվա II կիսամյակ
	Նկատողություն	
Բակալավրիատ	24	11
Մագիստրատուրա	3	10
Ընդամենը	27	21
Խիստ նկատողություն		
Բակալավրիատ	11	4
Մագիստրատուրա	-	4
Ընդամենը	11	8

Այս հանգամանքը նպաստում է կարգապահության բարձրացմանը, և շատ ուսանողներ փոխել են իրենց վարքագիծը՝ ապահովելով կարգապահություն և առաջադիմություն: Հաշվետու ժամանակաշրջանում 7,2%-ով կրճատվել է վարչական տույժեր ստացած ուսանողների թիվը, որը նախորդ տարվա 93-ի դիմաց այս տարի կազմել է 67: Հաշվետու տարում անհարգելի բացակայելու պատճառով բակալավրիատի 2 ուսանողներ հեռացվեցլ են համալսարանից, իսկ մագիստրատուրայի բաժնի 6 ուսանողներ առաջին կիսամյակի արդյունքներով դասերից անհարգելի բացակայելու պատճառով հեռացվել են համալսարանից: Բակալավրիատի 2 և մագիստրատուրայի 4 ուսանողներ հեռացվել են ակադեմիական անբավարար առաջադիմության պատճառով:

Ֆակուլտետի դեկանատը սերտ կապ է պահպանում ուսանողների ծնողների հետ՝ որպես ակտիվ շահառուների: Կազմակերպել է առաջին կուրսերի ծնողների հետ հանդիպում-քննարկում (օրակարգում՝ ԳՊՀ-ի մասին ֆիլմի դիտում, ուսանողների առաջադիմության ներկայացում, հարցաթերթիկի լրացում): Ծնողների շրջանում անցկացրել ենք հարցում՝ պատրաստի հարցաթերթիկի միջոցով: Ծնողների շրջանում հարցումները խիստ օգտակար են: Մեր այն հարցին, թե հետևում եք ԳՊՀ ինտերնետային կայքին, ծնողները պատասխանել են՝ կանոնավոր կերպով:

Այժմ ֆակուլտետում մեծ ուշադրություն է հատկացված պրակտիկաների կազմակերպմանն ու արդյունավետ անցկացմանը: Հաշվի է առնվում պրակտիկ գիտելիքների ձեռք բերման կարևորությունը մասնագետի ձևավորման գործում: Դեկանատը պրակտիկայի վայրի ղեկավարության հետ նախօրոք համաձայնեցնում է ժամկետները, քննարկվում անցկացման սկզբունքներն ու կարգը:

Պրակտիկաների տեսակների, հաջորդականության, բովանդակության, ձևերի ու միջոցների ճիշտ սահմանման ու գործադրման համար բոլոր կիսամյակների համար ամբիոնների ուժերով մշակվում են ուղեցույցեր:

Պրակտիկայի արդյունավետության բարձրացումը և կազմակերպական նոր մեխանիզմների ներդրումը կնպաստի ուսանողների մասնագիտական կարողությունների ձևավորմանը:

«Բի Էս Սի» Բիզնեսի աջակցության կենտրոնի և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության «Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության» ծրագրի ֆինանսավորմամբ 2013թ. սեպտեմբերի 5-ին տեղի ունեցավ «Ուսանողների աշխատանքի տեղավորման և պրակտիկայի հնարավորությունների խթանում» ծրագրի ավարտական միջոցառումը, որը մեկնարկել էր 2013թ. մարտ ամսին: Ծրագրի հիմնական նպատակն է պրակտիկայի «օրինակելի» մոդելի շնորհիվ ստեղծել ամուր կապ բուհերի և գործատուի միջև: Ծրագրի շրջանակներում մշակված ուղեցույց-ձեռնարկը՝ «Ինչպես պրակտիկան դարձնել ավելի արդյունավետ», կօգտագործենք մեր պրակտիկայի ծրագիրը բարելավելու համար:

Պրակտիկայի վայրում ուսանողին աշխատանքային գործառույթի վստահումը, վարկառուին այցելելիս նրա ներգրավումը, ուսանողի հետ խորհրդակցելը վկայում են այն մասին, որ բարձր է համալսարանի վարկանիշը: Գործատուները գիտակցում են, որ պրակտիկանտ-համալսարանականների ներգրավումը աշխատանքներին՝ իրենց գովազդի միջոցներից մեկն է: Ուստի պրակտիկան երկուստեք փոխշահավետ է: Այս տարի պրակտիկայի ավարտից հետո «Անելիք» բանկում կազմակերպվեց պրակտիկայի արդյունքների քննարկում բանկի, ֆակուլտետի ղեկավարության և ուսանողության հետ, ինչը այսուհետ ևս կկիրառվի:

Ուսանողների առաջարկությամբ նախատեսում ենք պրակտիկայի արդյունքների ստուգումն անցկացնել կազմակերպություններում՝ դրանց ներկայացուցիչների և շահառուների մասնակցությամբ, ինչը պրակտիկային կհաղորդի առավել կարևորություն: Սա իր հերթին կնպաստի «գործարար համայնք-համալսարան» կապի ամրապնդմանը, ինչը առաջինների մեղքով երբեմն ձևական բնույթ է կրում: «Համալսարան-ուսանող-գործարար համայնք» օղակները պետք է գործեն որպես միասնական շղթա՝ հօգուտ որակյալ մասնագետի ձևավորման:

Պրակտիկա է դարձել տարբեր կազմակերպությունների կողմից տարաբնույթ մասնագիտական սեմինարների կազմակերպումը: Մայիս ամսին ՀՀ «Բազե-2» ծրագրի շրջանակներում անցկացվել է դասախոսություն «Ֆինանսական համակարգի վերահսկողություն» թեմայով ՀՀ ԿԲ ֆինանսական վերահսկողության բաժնի մասնագետ Աննա Թորոսյանի կողմից: Մասնակցել են մագիստրատուրայի 11 ուսանող /ՄՀՀ1 և ՄՖ1/, Ֆ3-րդ կուրսից 3 ուսանող:

Համալսարանի ռեկտորատը, դեկանատը մշտապես մտահոգվում են ուսանողների սոցիալական խնդիրներով և այս ուղղությամբ ձեռնարկվել են որոշակի միջոցառումներ, կիրառվել զեղչեր:

Տնտեսագիտական ֆակուլտետի կրթաթոշակառուները՝

Հայ օգնության ֆոնդի «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամ	14
Հայաստանի երիտասարդական հիմնադրամ	8
Թրփանճեան ընտանեկան հիմնադրամ	6
«ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերություն	6
«Ռոբերտ Ենգիբարյան» հիմնադրամ	2
«Օրանժ Հայաստան» հիմնադրամ	2
Միավորված մեթոդիստների օգնության կոմիտե (ԱՄՔՈՐ) հասարակական կազմակերպություն	1

Ֆակուլտետի ուսանողական խորհուրդը և տնտեսագետների ակումբը նախագահներ՝ Ա. Ղարաբաղցյանի և Ռ. Կոտուկյանի ղեկավարությամբ աշխատանքներ են կատարում ուսանողների հասարակական ակտիվությունը բարձրացնելու ուղղությամբ:

Կարևոր ենք համարում խթանել գիտելիքներ ձեռք բերելու ուսանողների հակումը, ինչին կարող են նպաստել տարաբնույթ միջոցառումները, ինտելեկտուալ մրցույթները, ցերեկույթները և այլն: Ավանդույթ է դարձել ֆակուլտետում բազմաբնույթ ուսուցողական, տեղեկատվական, գեղագիտական, դաստիարակչական միջոցառումների կազմակերպումը, էքսկուրսիաները դեպի մայրաքաղաքի և հանրապետության տարբեր մարզերի մշակութային և պատմական վայրեր, արտադրական ձեռնարկություններ:

Տնտեսագետների ակումբի ուսանողները հաշվետու տարում ներգրավվեցին կարի արտադրամասի աշխատանքներում, արտադրված սփռոցների առաջին զնորդները դարձան «Վորլդ Վիժն Հայաստան» Գավառի տարածքային զարգացման ծրագրում փորձի փոխանակման եկած ալբանացիները: Ուստարվա ընթացքում արտադրամասում ուսանողները արտադրության պրոցեսին զուգահեռ ստեղծեցին բիզնեսին առնչվող փաստաթղթերի փաթեթ, որը ուսուցողական հիմք է հանդիսանում ֆակուլտետի ուսանողությանը գործնականում փոքր ձեռնարկություն ձևավորելու համար:

Արտադրամասի հետագա գործունեության խնդիրը պետք է քննարկվի և կայացվի գործնական, ճշգրիտ որոշում, չէ՞ որ, թեև փոքրիկ, սակայն իրական արտադրամասում ուսանողը ձեռք է բերում որոշակի փորձ և հմտություններ:

Մենք պետք է ուսանողների շրջանում կազմակերպենք երիտասարդությանը հետաքրքրող թեմաներով քննարկումներ:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետում անցկացվել են դաստիարակչական բնույթի բազմազան միջոցառումներ: Մեզ համար հիշարժան է հատկապես ԳՊՀ հիմնադիր ռեկտոր Հրանտ Հակոբյանի կիսանդրու առջև առաջին կուրսեցիներին ստուգման գրքույկների և ուսանողական տոմսերի հանդիսավոր հանձնումը, որը խորին խորհուրդ ունի:

Ֆակուլտետի զարգացման անհրաժեշտությունը մեզ մղում է նոր անելիքների հանուն որակյալ մասնագետի ձևավորման:

**Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի
2013-2014 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգը**

Ը/Կ	Հայեցակարգային խնդիրները	Միջոցառումներ	Պատասխանատու
1	Ապահովել ուսանողների պատրաստում լիարժեք կարիերայի, մասնագիտական առաջընթացի, այդ նպատակին նպատակամղել ֆակուլտետի 2013-2014 ուստարվա զարգացման հայեցակարգը:	<i>Ուսանողներին հոգեբանորեն նախապատրաստել կարիերայի, մասնագիտության յուրացմանը</i>	<i>դեկանատ՝ տարվա ընթացքում</i>
2	Որակի և արդյունավետության ապահովման միջոցառումները բխեցնել աշխատաշուկայի պահանջներից, ուսուցման գործընթացը կազմակերպել՝ կարևորելով տեսական իմացությունից զատ ուսանողներին գործնական գիտելիքներով զինելը:	<i>Ուսումնասիրել աշխատաշուկայի, պահանջները, գործատուների ակնկալիքները ներկայացնել ուսանողներին</i>	<i>դեկանատ, ամբիոններ՝ տարվա ընթացքում</i>
3	Մասնագիտական առաջընթացի ցուցանիշների հաշվառումը և համակողմանի վերլուծությունը համարել ամբիոնների աշխատանքի հիմնական ուղղություններից մեկը՝ հիմք ընդունելով կրթության նորագույն տեսությունն ու փորձը: Պարզաբանել յուրաքանչյուր մասնագիտության առաքելությունը, ֆակուլտետի գործունեությունը կազմակերպել՝ ուղեմիշ ունենալով ուսանողներին կարիերայի պատրաստման խնդիրները:	<i>Տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով կատարել մասնագիտությունների վերաբերյալ հետազոտություններ</i>	<i>ամբիոններ՝ տարվա ընթացքում</i>
4	Տարվա ընթացքում ֆակուլտետի զարգացման հայեցակարգի պահանջների կատարումը ստուգելու համար իրականացնել պարբերական մոնիթորինգ: Հայեցակարգի կարճաժամկետ ծրագրերը ճկուն փոփոխությունների ենթարկել՝ ելնելով ԳՊՀ գիտխորհրդի նոր որոշումներից:	<i>ԳՊՀ գիտխորհրդի որոշումների կատարման ուղղությամբ կոնկրետ ստուգումներ և ինքնավերլուծություններ իրականացնել</i>	<i>դեկանատ, ամբիոններ կիսամյակը մեկ անգամ</i>
5	Տարվա ընթացքում պարբերաբար գնահատել ֆակուլտետի զարգացման հայացակարգի իրականացման ընթացքը, կազմակերպել ստուգում-ինքնագնահատումներ, արդյունքների հրապարակում ինտերնետային կայքում:	<i>Ֆակուլտետի զարգացման հայեցակարգը իրականացնել բոլոր ստորաբաժանումների համատեղ ուժերով</i>	<i>դեկանատ՝ երկու ամիսը մեկ անգամ</i>

6	Ֆակուլտետի առաքելությունից բխող խնդիրների իրականացման գործընթացում ապահովել շահեկիցների, հատկապես ուսանողների լիարժեք մասնակցություն:	<i>Ֆակուլտետում ըստ մասնագիտությունների ստեղծել ուսանողների ակտիվ խումբ, որը զբաղվի մասնագիտության տիրապետման նպատակով լավագույն փորձի տարածմամբ</i>	<i>դեկանատ, ուսխորհուրդ՝ տարվա ընթացքում</i>
7	Ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպել այնպես, որ ֆակուլտետը, բաժինները հարմարունակ լինեն միջավայրի փոփոխություններին, արագ և համարժեք արձագանքեն ուսանողներին լիարժեք կարիերայի նախապատրաստելու արդիական պահանջներին:	<i>Չաշվի առնել կրթական միջավայրի փոփոխությունները՝ ուսումնասիրելով միջազգային և հանրապետական բուհերի ձեռքբերումները</i>	<i>դեկանատ, ամբիոններ՝ կիսամյակում</i>
8	Ֆակուլտետի գործունեության արդյունավետությունը ուսումնասիրել ըստ բաժինների՝ սահմանված ավելի քան 13 արդյունավետության ցուցանիշների միջոցով:	<i>Ներակայացնել արդյունավետության ցուցանիշները, մշակել կոնկրետ ժամանակային միջոցառումներ</i>	<i>դեկանատ, 2 ամիսը մեկ</i>
9	Ֆակուլտետի խորհուրդը, ամբիոնները պետք է հետևեն կրթական և գիտահետազոտական գործընթացների ինտեգրմանը՝ ապահովելով ուսուցման գիտական ու մեթոդական ապահովվածության հետազոտությունների արդյունավետություն:	<i>Չետևել կրթական և հետազոտական գործընթացներին, որոնք առկա են տեխնոլոգիական տեղեկատվության կայքերում</i>	<i>դեկանատ, ամբիոններ՝ տարվա ընթացքում</i>
10	Ապահովել դասախոսների և ուսանողների արդյունավետ համագործակցությունը, ամրապնդել անկաշկանդ բանավեճի հնարավորություններ դասախոսությունների ընթացքում, ուսանողներին ակտիվորեն ընդգրկել փոփոխությունների և որակի բարձրացման գործընթացում:	<i>Դասախոսությունների պրակտիկայում լայն տեղ հատկացնել ուսանողների բանավեճերին, ուսանողներին ծանոթացնել ամբիոնների հետազոտական թեմաներին</i>	<i>դեկանատ, ամբիոններ, տարվա ընթացքում</i>
11	Ֆակուլտետում ապահովել գործընթացների թափանցիկություն, քննություններն ընդունել համակարգչային եղանակով, ֆակուլտետի հաշվետվությունները տեղադրել ինտերնետային կայքում, շահեկիցներին ներկայացնել կարճաժամկետ ծրագրերը, ուսանողներին մասնագիտական կարիերայի պատրաստման գործընթացները:	<i>Ֆակուլտետի հաշվետվությունները հասանելի դարձնել շահեկիցներին, համատեղ մշակել մասնագետների կարիերայի նախապատրաստման միջոցառումներ</i>	<i>դեկանատ շահառուներ, ըստ համապատասխան շրջանների</i>

<p>12</p>	<p>Գործարկել որակի ներքին ապահովման համակարգ, ֆակուլտետում ձևավորել որակի մշակույթ: Ամբիոններից պահանջել որակի հստակ մեխանիզմների մշակում և կիրառում:</p> <p>Որակի ապահովման վերաբերյալ տարվա ընթացքում ամբիոնները պետք է կազմակերպեն ուսումնասիրություն և ներկայացնեն հաշվետվություն: Ամբիոններում անհրաժեշտ է լսել ուսանողների և դասախոսների հաշվետվությունները: Որակի ապահովմանը նպատակամղել դասավանդման և ուսումնառության ժամանակակից մեթոդների կիրառումը և առաջավոր փորձը: Հետևել ուսանողների գիտելիքների գնահատման նոր եղանակների հետևողական կիրառմանը:</p>	<p><i>Յուրաքանչյուր ամբիոն պետք է ներկայացնի որակի ապահովման միջոցառումների ծրագիր</i></p>	<p><i>ամբիոններ, դասախոսներ, շրջանավարտներ և գործատուներ</i></p>
<p>13</p>	<p>Դասախոսությունները նոր մեթոդների օգտագործման շնորհիվ դարձնել մատչելի, դասախոսը պատասխանատվության զգացումով պետք է վերաբերվի ուսանողների կողմից գիտելիքների յուրացմանը: Ամբիոնները պետք է ստուգեն դասախոսության «հատույցը»: Դասախոսը պետք է ստուգի ուսանողների կողմից գիտելիքների յուրացման աստիճանը:</p> <p>Անհրաժեշտ է ի ցույց դնել դասախոսների առաջավոր փորձը:</p>	<p><i>Գիտելիքների աստիճանը դարձնել ամբիոնների քննարկման նյութ</i></p>	<p><i>Ֆակուլտետի մեթոդ-խորհուրդ եռամսյակը մեկ անգամ</i></p>
<p>14</p>	<p>Ամբիոններն ապահովել բարձրակարգ դասախոսներով, հետևել կադրերի թարմացմանը: Ամբիոնները պետք է զբաղվեն համապատասխան առարկաների գիտական զարգացումների ուսումնասիրմամբ և նորությունները ներդնեն ուսուցման գործընթացում: Յուրաքանչյուր դասախոս պետք է կատարի գիտական աշխատանք և արդյունքը ներկայացնի ամբիոնին, որպեսզի հաղթահարվի դասախոսների անբավարար ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում և նորարարական ծրագրերում: Անհրաժեշտ է բարձրացնել մագիստրոսների ներգրավվածությունը գիտական աշխատանքներում:</p> <p>Պետք է խթանել ուսանողական գիտական աշխատանքը, կազմակերպել տարաբնույթ ուսանողական սեմինարներ, գիտաժողովներ:</p> <p>Ստուգել համացանցային ուսանողական տիրույթ ներբեռնված դասախոսությունների որակը:</p>	<p><i>Ամբիոնների նիստերում քննարկման նյութ դարձնել տնտեսագիտական առարկաների գիտական զարգացումները: Ուսումնասիրել մագիստրոսների գիտական հետազոտական ունակությունները</i></p>	<p><i>դեկանատ, ամբիոններ և շահեկիցների կազմել միջոցառումների ժամանակացույց</i></p>

<p>15</p>	<p>Պրակտիկաների կազմակերպման, նախապատրաստման ընթացքում հաշվի առնել բազային կազմակերպությունների առաջարկությունները, ուսանողներին իրազեկել դրանց մասին: Ուսանողներին նախապատրաստել բանկերի կողմից կազմակերպվող թեստավորմանը:</p> <p>Պրակտիկաների արդյունքների ամփոփմանն ու գնահատմանը մասնակից դարձնել բազային ձեռնարկությունների ներկայացուցիչներին:</p> <p>Ֆակուլտետի խորհրդում քննարկել պրակտիկայի կազմակերպման նորովի մշակված ընթացակարգ:</p>	<p><i>Ուսանողներին նախապատրաստել թեստավորմանը: Մշակել պրակտիկայի անցկացման նոր ընթացակարգ: Մշտապես կապ հաստատել գործատուների հետ, շրջանավարտների համար ստեղծել աշխատանքի տեղավորման հնարավորություններ</i></p>	<p><i>դեկանատ, գործատուներ, ամբիոններ՝ պրակտիկայի ժամանակահատվածում</i></p>
<p>16</p>	<p>Ամբիոնները պետք է արտադրական պրակտիկաների վերահսկումը համարեն կարևոր գործ՝ նպատակ ունենալով բարձրացնել պրակտիկաների արդյունավետությունը, ուսանող-պրակտիկանտին տալ անհրաժեշտ խորհուրդներ: Վերահսկումը իրականացնել հարցազրույցների, այցելությունների, դիտարկումների և քննարկումների միջոցով՝ ինչպես գործատուի, այնպես էլ ուսանողի հետ:</p> <p>Պրակտիկան պետք է օգնի ուսանողին՝ կարիերային ուղու կառուցման հարցում:</p>	<p><i>Պրակտիկան դիտել որպես ուսանողի կարիերային ուղու ձևավորման միջոց</i></p>	<p><i>ամբիոններ, պրակտիկայի վայրի դեկավարներ՝ պրակտիկայի ժամանակահատվածում</i></p>
<p>17</p>	<p>Ակտիվորեն համագործակցել ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի ու մարզային ՋԼՄ-ների հետ: Կազմակերպել մասնագիտական կողմնորոշմանը ուղղված միջոցառումների շարք մարզի ավագ դպրոցներում:</p> <p>Մշտապես թարմացնել շրջանավարտների աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկատվական բազան: Շրջանավարտների զբաղվածության ապահովման մասնավոր սեկտորի ներկայացուցիչների ուշադրությունը բևեռել դեպի ֆակուլտետի պատրաստած կադրերը:</p>	<p><i>Դասախոսներն ըստ ժամանակացույցի հանդես գան դպրոցներում</i></p>	<p><i>դեկանատ, լրատվական բաժին՝ գարնանը</i></p>
<p>18</p>	<p>Ապահովել միջազգային ծրագրերում ուսանողների մասնակցության աճ: Բարձրացնել ֆակուլտետի ուսանողների օտար լեզվի իմացության մակարդակը, ինչը կնպաստի միջազգային ծրագրերին նրանց ակտիվ մասնակցությանը: Ապահովել ֆակուլտետի գործունեության հրապարակայնությունը և որակի ապահով-</p>	<p><i>Անցկացնել օտար լեզվի լրացուցիչ դասընթացներ</i></p>	<p><i>դեկանատ, ամբիոններ, ուսանողական խորհուրդ, կիսամյակի ընթացքում՝ 2 անգամ</i></p>

	ման ներքին համակարգի թափանցիկությունը: Ֆակուլտետի գործունեության մասին ներկայացնել պարբերական տեղեկատվություն՝ օգտագործելով լրատվության բոլոր, այդ թվում՝ էլեկտրոնային միջոցները:		
19	Անցկացնել հարցումներ՝ կրթական ծրագրերի, դրանց բովանդակության վերաբերյալ դասախոսների, ուսանողների, գործատուների և այլ շահեկիցների վերաբերմունքը ճշգրտելու, համապատասխան քայլեր ձեռնարկելու նպատակով:	<i>Մշակել հարցաթերթիկներ</i>	<i>դեկանատ, ամբիոններ՝ կիսամյակը մեկ անգամ</i>
20	Կրթական ծրագրերն ու ուսումնական պլանները վերանայել այն հաշվով, որ վերագնահատվեն ավանդական դասավանդման և ուսումնառության փորձն ու ներդրվեն այնպիսի նորարարական մեթոդներ, որոնց միջոցով հնարավոր կլինի ապահովել ուսանողների կողմից կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը:	<i>Ուսումնասիրել և ներդնել նորարարական մեթոդներ</i>	<i>դեկանատ, ամբիոններ, ֆակուլտետի մեթոդ-խորհուրդ տարվա ընթացքում</i>
21	Ամբիոնները պետք է մշակեն և առաջարկեն ուսանողներին լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվության տրամադրման ծրագրեր: Դեկանատը պետք է կազմակերպի ուսանողների կրթական կարիքները բավարարելու լրացուցիչ միջոցառումներ:	<i>Նախատեսել լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվությունների շարք</i>	<i>դեկանատ, ամբիոններ, ուսանողներ, պարբերաբար</i>

Ս. Գ. Ամիրխանյան՝
ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան

ՔՆՆԱՇՐՁԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՉՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՁԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաչրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Ֆինանսներ				
1-ին	21	9	3	57.1
2-րդ	5	-	-	40.0
3-րդ	26	1	14	69.2
4-րդ	32	-	18	65.6
Հաշվ. հաշվառում				
1-ին	15	5	1	53.3
3-րդ	22	1	5	72.7
4-րդ	21	-	6	71.4
Ձեռնարկ. տնտ. և կառ.				
1-ին	6	2	-	66.7
3-րդ	9	-	7	100
4-րդ	20	1	7	45.0
ԸՆԴՀԱՆՆՆՐ	177	19	61	64.4
Մագիստրատուրա				
Ֆինանսներ				
1-ին	10	-	3	60.0
2-րդ	8	-	4	87.5
Հաշվ. հաշվառում				
1-ին	13	-	5	46.2
2-րդ	6	-	4	100
Ձեռն. տնտես. և կառ.				
1-ին	2	-	-	100
2-րդ	5	-	3	100
ԸՆԴՀԱՆՆՆՐ	44	-	19	72.7

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար զնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Ֆինանսներ 1-ին	21	-	4	85.7
2-րդ	4	-	-	50.0
3-րդ	26	3	12	73.1
Հաշվ. հաշվառում 1-ին	15	1	4	73.3
3-րդ	22	4	11	63.6
Ձեռն. տնտես. և կառ. 1-ին	6	-	4	100
3-րդ	10	-	5	70.0
ԸՆԴՀԱՆԵՆՂ	104	8	40	74.0
Մագիստրատուրա				
Ֆինանսներ 1-ին	9	-	2	33.0
Հաշվ. հաշվառում 1-ին	11	-	3	73.0
Ձեռն. տնտես. և կառ. 1-ին	2	-	1	50.0
ԸՆԴՀԱՆԵՆՂ	22	-	6	55.0

2012/2013 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԶՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ծեռնարկ	Ուսումնամեթոդական ծեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	-	-	24	-

Ֆակուլտետում գործող անբիոններ թիվը՝ 3

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Անբիոնի վարիչ՝ *Կարապետյան Վարազդատ Ազատի, տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ դոցենտ*

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Հերզոյան Սարիամ Նորիկի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
2. Մովսեսյան Դավիթ Մերուժանի - տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ դոցենտ
3. Մուրադյան Գուրգեն Գևորգի - ասիստենտ
4. Խաչատրյան Գայանե Արտիկի - տնտեսագիտության թեկնածու, լաբորանտ

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Հարությունյան Հարություն Սարգսի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
2. Խաչատրյան Հակոբ Հայկի - տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
3. Ջամվելյան Վահրամ Սամվելի - տնտեսագիտության թեկնածու
4. Նալչաջյան Վահրամ Թորգոմի - տնտեսագիտության թեկնածու
5. Սերգոյան Գեղամ Պարույրի - դասախոս
6. Քալոյան Մանվել Խաչիկի - դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տեղական և տարածքային տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները:

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ծեռնարկ	Ուսումնամեթոդական ծեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	-	-	9	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Հերզնյան Մ. Ն., Մանուկյան Ա. Մ.** Բանկային ռիսկերի կառավարումը որպես բանկային գործունեության արդյունավետության բարձրացման գրավական // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 14, 2012, էջ 283-291:
2. **Հերզնյան Մ. Ն.** Մարքեթինգային աուդիտը որպես վերահսկողության արդի գործառույթ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2013, էջ 302-307:
3. **Հերզնյան Մ. Ն., Օհանյան Ն. Հ.** Դոկար-դրամ փոխարժեքի տատանումների վրա ազդող գործոնները Հայաստանի Հանրապետությունում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2013, էջ 307-313:
4. **Հերզնյան Մ. Ն., Աֆրիկյան Տ. Ռ.** Առևտրային բանկերի կողմից սպառողական վարկերի տրամադրման գործընթացի բարելավման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2013, էջ 314-320:
5. **Հերզնյան Մ. Ն., Մազմանյան Ա. Գ.** Լիզինգային գործառնությունների զարգացման և կատարելագործման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2013, էջ 321-326:
6. **Հերզնյան Մ. Ն., Խաչատրյան Շ. Ս.** Գործարար խթանողականությունը որպես փոքր և միջին բիզնեսի զարգացման գրավական // Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, Հանրապետական ուսանողական գիտաժողովի նյութեր, Վանաձոր, 2013, էջ 159-163
7. **Խաչատրյան Գ. Ա.** Հարկային բեռի դրսևորման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում ըստ տնտեսության առանձին ճյուղերի // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 14, 2012, էջ 318-323:
8. **Խաչատրյան Գ. Ա.** Հարկային բեռի կարգավորման պետական քաղաքականության հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2013, էջ 355-360:
9. **Հարությունյան Հ. Ս .** Տնտեսության պետական կարգավորումը որպես օբյեկտիվ անհրաժեշտություն // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2013, էջ 385-390:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՍԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Հակոբ Մելսիկի Ղուլոյան,*
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Խլղաթյան Իշխան Երեմի - տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր
2. Առաքելյան Վալերի Հովհաննեսի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
3. Բադալյան Անի Սամվելի - լաբորանտ, դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Ամիրխանյան Սամվել Գրիգորի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
2. Այրումյան Իրինա Գագիկի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. Մարկոսյան Սևակ Մեսրոպի-տնտեսագիտության թեկնածու
4. Սարգսյան Պարզև Սուրիկի - դասախոս
5. Հակոբյան Անահիտ Ալեքսանի - դասախոս
6. Եղիազարյան Սամվել Ռադիկի - դասախոս
7. Մարգարյան Հասմիկ Անդրանիկի - ասիստենտ
8. Մալոյան Անի Գևորգի- դասախոս
9. Խանդանյան Նաիրա Մելիքի - դասախոս

ԱՍԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա) Ձեռնարկությունների (կազմակերպությունների) տնտեսական գործունեության տնտեսագիտական վերլուծության և ֆինանսական պլանավորման մեթոդիկաների մշակում և կատարելագործման հիմնախնդիրները:

բ) Ձեռնարկությունների (կազմակերպությունների) կառավարման մեթոդների, մեխանիզմների, գործիքների և տեխնոլոգիաների մշակման և կատարելագործման հիմնական ուղղությունները:

գ) Կազմակերպություններում հաշվապահական հաշվառման, հարկային հաշվառման և աուդիտի մեթոդոլոգիայի և կազմակերպման կատարելագործման հիմնահարցերը:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	-	-	9	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Խլղաթյան Ի. Ե., Ամիրխանյան Ս. Գ.,** Ինտեգրացման ինստիտուցիոնալ առանձնահատկությունները և հիմնախնդիրները // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2013, էջ 298-301:
2. **Ղուլդյան Հ. Ս., Սարգսյան Գ. Ս.,** Տնտեսական գործունեության վերլուծության վերլուծության կարևորությունը և մեթոդները տնտեսվարման արդի պայմաններում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2013, էջ 342-350:
3. **Առաքելյան Վ. Հ., Հուսիկյան Դ. Հ., Աճեմյան Գ. Զ.,** Բուհի գործունեության ռազմավարության արդյունավետության գնահատման մոդելը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2013, էջ 364-369:
4. **Առաքելյան Վ. Հ., Այրումյան Ի. Գ., Սիմոնյան Մ. Հ., Դռնոյան Ա. Հ.,** Նորամուծական գործընթացի մշակման, ռազմավարության արդի հիմնախնդիրները // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2013, էջ 370-378:
5. **Առաքելյան Վ. Հ., Մարգարյան Հ. Ա., Փամբուխչյան Ա. Ա.,** Կորպորատիվ ռազմավարության արդյունավետության գնահատման մաթոդաբանական հարցեր // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2013, էջ 379-385:
6. **Մարկոսյան Ս. Ս.,** Նախահաշիվների դերը կազմակերպությունների վերահսկողության գործընթացում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2013, էջ 350-354:
7. **Մարկոսյան Ս. Ս., Մնեյան Ա. Ա.,** Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների ներդրման խնդիրները // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2013, էջ 401-408:
8. **Հակոբյան Ա. Ա.,** Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման բարեփոխումները // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2013, էջ 401-408:
9. **Բաղալյան Ա. Ս.,** Անվճարունակ կազմակերպությունների ֆինանսական առողջացման խնդիրները արդի պայմաններում: // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2013, էջ 396-401:

**ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՄԲԻՈՆ**

Ամբիոնի վարիչ՝ **Ջաքոյան Հրաչյա Սամվելի,**
տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Հովակիմյան Ռազմիկ Ռուբենի - տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
2. Շահինյան Վարդուհի Էդիկի - ասիստենտ
3. Թադևոսյան Նարինե Հակոբի - ասիստենտ
4. Բազոյան Սոնա Սահակի - ասիստենտ
5. Հովեյան Աստղիկ Գագիկի - դասախոս
6. Գզրարյան Հարություն Վաղարշակի - դասախոս
7. Հակոբյան Սաթենիկ Վարդանի – լաբորանտ, դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Սահակյան Արմեն Կոլյայի - տնտեսագիտության թեկնածու, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր
2. Թադևոսյան Սամվել Աշոտի - տնտեսագիտության թեկնածու
3. Կիրակոսյան Էդգար Սամվելի - դասախոս
4. Ենգիբարյան Աննա Մարտունու - դասախոս
5. Սարգսյան Հուսիկ Հայկի- դասախոս

**ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման հնարավորությունները ՀՀ մարզերում:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	6	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Ջաքոյան Հ.Ս., Ասատրյան Ռ. Կ.,** Ֆինանսական համակարգի նկատմամբ վստահության ավելացման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2013, էջ 327-331:
2. **Ջաքոյան Հ.Ս., Սարգսյան Ս. Գ., Սարգսյան Գ. Ս.,** Գյուղատնտեսական ապահովագրության համաշխարհային փորձը և այն կիրառելու հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2013, էջ 332-336:
3. **Ջաքոյան Հ.Ս., Թադևոսյան Ն. Հ.,** Աշխատանքի շուկայում առկա խնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2013, էջ 337-341:
4. **Թադևոսյան Ս. Ա.,** Ապրանքների արտահանման դիվարսիֆիկացիան Հայաստանի Հանրապետությունում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, 2013, էջ 391-396:
5. **Հակոբյան Ս. Վ.,** Տնտեսության իրական հատվածի և բանկային վարկավորման փոխադրեցության գնահատումը Հայաստանի Հանրապետությունում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 14, 2012, էջ 300-306 :
6. **Բազոյան Ս. Ս.,** Արժեթղթերի պորտֆելի ձևավորման փուլերը և «օրացուցային» օրինաչափությունները // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 14, 2012, էջ 307-311:

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՖԱԿՈՒՆԵՏ

Պատասխանատու՝ Կուտուզյան Նելլի Ալբերտի,
 ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու,
 դոցենտ

ՖԱԿՈՒՆԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԸ

Դասիչ	Մասնագիտություն
031000	Հայոց լեզու և գրականություն
032400	Ռուսաց լեզու և գրականություն
030400	Պատմություն
020400	Աշխարհագրություն
051100	Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/
030500	Իրավագիտություն
081500	Հաշվապահական հաշվառում
020200	Կենսաբանություն
020800	Բնապահպանություն և բնօգտագործում
230100	Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա

Մասնագիտացումներ՝	
	Բանասեր, հայոց լեզվի և գրականության ուսուցիչ
	Բանասիրության բակալավր
	Բանասեր, ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ
	Բանասիրության բակալավր
	Պատմաբան, պատմության ուսուցիչ
	Պատմության բակալավր
	Աշխարհագրագետ, աշխարհագրության ուսուցիչ
	Աշխարհագրության բակալավր
	Տարրական դասարանների ուսուցիչ
	Մանկավարժության բակալավր, ուսուցիչ
	Իրավագիտություն
	Տնտեսագետի
	Կենսաբանության բակալավր
	Բնապահպանության բակալավր
	ճարտարագետի

Ուսանողների թիվը՝ 1192

Շրջանավարտների թիվը՝ 276

**ԳՎՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
2012-2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2013-2014
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

Ինչպես նախորդ տարիներին, 2013 թվականի ուսումնական տարում ևս ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում կրթական գործընթացը կազմակերպվել է՝ համաձայն ուսումնական պլանների, համալսարանում գործող կանոնակարգերի, ռեկտորի հրամանների, նախապես հաստատված ժամանակացույցների, դասացուցակների:

Հաշվետու ուստարում բակալավրիատի առաջին կուրսերում կրեդիտային համակարգի ներդրման նպատակով մշակվեց և ԳՊՀ գիտական խորհրդի 2012 թ. հոկտեմբերի 27-ի թիվ 9 նիստում հաստատման ներկայացվեց «Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման համակարգում բակալավրի կրթական աստիճանում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգը», որը սահմանում է համալսարանում հեռակա ուսուցման ձևով բակալավրի պատրաստման կրթական ծրագրերի կրեդիտային սկզբունքներով իրականացման միասնական կանոնները: Կարգը ներառում է հեռակա ուսուցման գործընթացի կազմակերպման ընթացակարգը, ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը, ակադեմիական առաջադիմության չափանիշները, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման կազմակերպման ընթացակարգը: Կարգում բնութագրված են նաև կրեդիտային համակարգին բնորոշ հասկացությունները, նկարագրված են համակարգի բնութագրիչները և ընթացակարգերը: ԳՊՀ-ում բակալավրի կրթական աստիճանում հեռակա ուսուցման համակարգի ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվեց միջինը 1440 ժամ, որը համարժեք է 48 ECTS կրեդիտի:

1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:

Հեռակա ուսուցման կրթական ծրագրերի նորմատիվային կիսամյակային բեռնվածությունը կազմում է 24 կրեդիտ: Ըստ վերոնշյալ կարգի՝ նախատեսված լսարանային պարապմունքների տարեկան նորմատիվային ժամաքանակը պետք է լինի առնվազն 160, իսկ կիսամյակում՝ 80 ժամ, սակայն ֆակուլտետում իրականացվող բոլոր կրթական ծրագրերի գծով, ըստ ուսումնական պլանների, լսարանային պարապմունքների տարեկան նորմատիվային ժամաքանակը սահմանված է 272, իսկ կիսամյակում՝ 136 ժամ:

Հեռակա ուսուցման կրթական ծրագրերով կիսամյակի տևողությունը սահմանվեց 16 շաբաթ, որից 12-ը հատկացվում է ուսումնական պարապմունքներին և ինքնուրույն աշխատանքին, իսկ 4 շաբաթը՝ քննաշրջանին: Լսարանային պարապմունքների գումարային տևողությունը կիսամյակում կազմում է առնվազն 4 շաբաթ: Կարգի մշակման փուլում ուսումնասիրվել է հանրապետության տարբեր պետական բուհերի փորձն ու կանոնակարգային հենքը,

ինչպես նաև ուղենիշ են համարվել Գավառի պետական համալսարանի առկա ուսուցման համակարգում կրեդիտային համակարգի ամբողջական շրջափուլով արդյունավետ գործարկման հիմնական ձեռքբերումները:

Հաշվետու ուստարում ֆակուլտետի ուսանողների ակադեմիական առաջադիմության ցուցանիշներն են.

ա) առաջին կիսամյակում՝ 69,4% (նախորդ ուստարում՝ 78,7%),

բ) երկրորդ կիսամյակում՝ 53.3% (նախորդ ուստարում՝ 60.5%):

Նկատվել է առաջադիմության անկում, որը հրամայական պահանջ է դարձնում հետևողական, նպատակաուղղված աշխատանքների կատարումը:

Մասնագիտական ամբիոնները դեկանտի կողմից ստացել են հանձնարարական՝ ներկայացնելու համապատասխան գործողությունների, միջոցառումների իրականացման ծրագրեր՝ ուսանողների ուսման առաջադիմությունը բարձրացնելու նպատակով:

Ֆակուլտետում ուսանողների գնահատման գործընթացը արդյունավետ կազմակերպելու, ուսանողների գիտելիքների գնահատումը առավել օբյեկտիվ իրականացնելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում համակարգչային եղանակով թեստային քննություններ են անցկացվել «Բարձրագույն մաթեմատիկա», «ՀՀ սահմանադրական իրավունք», «Արդարադատության և իրավապահ մարմինները ՀՀ-ում» առարկաներից:

Ուսումնասիրելով հանրության շրջանում հեռակա ուսուցման համակարգին ներկայացվող կրթական պահանջները՝ ֆակուլտետի և մասնագիտական ամբիոնների նախաձեռնությամբ մշակվել ու ՀՀ կրթության և գիտության նախարարության լիցենզավորման գործակալություն է ներկայացվել նոր մասնագիտությունների գծով գործունեության թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթային փաթեթ:

Արդյունքում ֆակուլտետում գործող 7 մասնագիտությունների ցանկը համալրվեց ևս 6 մասնագիտություններով՝

- Կենսաբանություն,
- Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա,
- Բնապահպանություն և բնօգտագործում,
- Դեղագործական քիմիա,
- Քարտեզագրություն և կադաստրային գործ,
- Սերվիս:

Սակայն 2012 թ. դիմորդների գործերի ընդունելություն կազմակերպվեց 10 մասնագիտությունների գծով, իսկ նոր՝ «Դեղագործական քիմիա», «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Սերվիս» մասնագիտությունների գծով՝ գործունեության թույլտվություն ունենալու պարագայում: Դիմորդներ չունեցանք (հավանաբար հանրության շրջանում վատ գովազդի պատճառով): Այս հանգամանքը հաշվի առնելով՝ համալսարանի, ֆակուլտետի և համապատասխան ամբիոնների կողմից հետևողական աշխատանքներ ծավալվեցին ՀՀ Գեղար-

քունիքի մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների շրջանում նորաբաց մասնագիտությունների գծով տեղեկատվության տարածման ուղղությամբ:

Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում կատարվել են աշխատանքներ ուսանողներին ակադեմիական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ, կազմակերպվել են հավելյալ մասնագիտական խորհրդատվություններ և անհատական աշխատանքներ՝ ստուգողական, կուրսային առաջադրանքների կատարման նպատակով: 2013 թ.-ին ֆակուլտետն ավարտեցին վեցամյա կրթության համակարգում ուսումնառած 158 շրջանավարտներ, բակալավրիատի կրթական աստիճանով՝ 118, ընդամենը՝ 276 շրջանավարտներ: Ֆակուլտետում իրականացվող բոլոր կրթական ծրագրերի ավարտական կուրսերի ուսանողներին առաջին կիսամյակի դասերի ընթացքում տրամադրվել են ամփոփիչ ատեստավորման քննական հարցաշարերը, ինչպես նաև ուղարկվել նրանց էլեկտրոնային հասցեներին: Ուսանողները ծանուցվել են, որ ապրիլ ամսվա ընթացքում, համալսարանի պաշտոնական կայքէջում նախապես լուսաբանված ժամանակացույցի համաձայն, տեղի կունենան խորհրդատվական դասընթացներ՝ ամփոփիչ ատեստավորման քննություններին նախապատրաստվելու նպատակով:

«ՎիվաՍել-USU» ընկերության, «Օրանժ Հայաստան» հիմնադրամի, «Վորլդ Վիժն Ինթերնեյշն» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի, ԱՄԲՈՐ/Հայաստան բարեգործական հասարակական կազմակերպության կողմից հայտարարված «Ուսանողների ուսման վճարների փոխհատուցման ծրագրի», «Թրփանճեան ընտանեկան» և «Ագեան» հիմնադրամների, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի, Հայ կրթական հիմնարկության մասնաճյուղի կողմից 15 ուսանողների ցուցաբերվեց զգալի ֆինանսական աջակցություն: 2012-2013 ուսումնական տարում համալսարանի կողմից ուսման վարձերի զեղչերից օգտվել է 22 ուսանող: ՀՀ պետական ուսումնական հաստատություններում սովորողների համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված արտոնություններից օգտվելու կարգի համաձայն՝ ֆակուլտետում անվճար սովորում է 19 ուսանող:

Հաշվետու ուստարում շարունակվել են հարցումները ուսանողների շրջանում: Դրանք վերաբերել են գիտելիքների գնահատման չափանիշներին, մեթոդներին, քննությունների անցկացման օբյեկտիվությանը, կրթական ծրագրերի ուսումնամեթոդական ապահովածությանը, ռեկտորատի, դեկանատի, վարչատնտեսական անձնակազմի աշխատանքների գնահատմանը: Ուսանողների կողմից բարձրացված խնդիրներն ու առաջարկությունները, նրանց ցանկությունները ներկայացվել են ռեկտորատի նիստերում, քննարկվել և իրավիճակի բարելավմանը միտված աշխատանքներ են կատարել համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումները:

Հաշվետու ուստարում դասախոսական կազմը համալրվել է բարձրորակ մասնագետներով, որոնք ունեն անհրաժեշտ մասնագիտական հմտություններ՝ սովորողների մոտ զարգացնելու տրամաբանական-վերլուծական մտածողություն՝ կրթական ծրագրերի վերջնար-

դյունքներին տիրապետելու համար: Ֆակուլտետում աշխատում են 95 դասախոսներ, նրանցից 9-ը՝ գիտության դոկտորներ (9,4%), 48-ը՝ գիտության թեկնածուներ (50%), այսինքն՝ ֆակուլտետի դասախոսների ընդհանուր թվի 60%-ը (նախորդ ուստարում՝ 58%-ը) ունի գիտական աստիճան:

Դպրոց-բուհ կապի ամրապնդման, ուսանողների գեղագիտական ճաշակի բարձրացման նպատակով, ինչպես նաև ի կատարումն «Մեր մեծերը» ծրագրի շրջանակներում ՀՀ սփյուռքի նախարարության կողմից տրված հանձնարարականի՝ ֆակուլտետում սովորող, միաժամանակ հանրակրթական դպրոցների ուսուցիչներ հանդիսացող ուսանողներին ներկայացվեցին առաջարկներ՝ դպրոցներում անցկացնելու բաց դասեր՝ նվիրված գիտության և մշակույթի հայ անվանի գործիչներին: Ուսանողների ջանքերով կազմակերպված միջոցառում-դասերի վերաբերյալ համալսարանում կազմակերպվեցին մեթոդական վերլուծություններ՝ ուսանողների մոտ զարգացնելու ստեղծագործական, գործնական, հաղորդակցական, կազմակերպչական հմտությունները:

Հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանողներն իրենց մասնակցությունն են ունենում համալսարանական, հանրապետական տարբեր միջոցառումներին, մրցույթներին: Հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանող Տարոն Անետիսյանը, մասնակցելով Ծաղկածոր քաղաքում անցկացված «Բազե-2013 թ.» համահայկական երիտասարդական հավաքին, վերադարձավ մեկ ոսկե և մեկ արծաթե մեդալներով:

Համալսարանում ուսուցման էլեկտրոնային համակարգը առաջին անգամ գործարկվեց հեռակա ուսուցման համակարգում: Բացի այն, որ համակարգի կիրառումը նպաստելու է դասախոսների, ուսանողների, աշխատակիցների շրջանում աշխատանքի և ուսման նոր մշակույթի ձևավորմանն ու կատարելագործմանը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետման մակարդակի բարձրացմանը, որն էլ իր էական ազդեցությունը կունենա կրթության որակի բարձրացման գործում, այն նաև կօգնի հեռակա համակարգում սովորողին աշխատանքից չկտրված, միջկիսամյակային ժամանակահատվածում օգտվելու համալսարանի տրամադրած և իրեն անհրաժեշտ ուսումնական նյութերից: Առաջին կուրսեր ընդունված հեռակա ուսուցման համակարգի սովորողներին տրամադրվել է e-learning.gsu.am համակարգից օգտվելու հնարավորություն՝ նաև մինչև ուսումնառության սկիզբը:

Հեռակա ուսուցման ֆակուլտետի 2014 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգը ներառում է նպատակաուղղված աշխատանքներ՝ հետևյալ ուղղություններով.

1. Շարունակել ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, թեմատիկ պլանների նորացման աշխատանքները՝ ուսանողների, շրջանավարտների, գործատուների շրջանում անցկացված հարցումների արդյունքների, մասնագիտություններում ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացի, գիտահետազոտությունների արդյունքների հաշվառմամբ:

2. Շարունակել էլեկտրոնային ուսուցման համակարգում ուսումնական նյութերի համալրման աշխատանքները՝ բոլոր մասնագիտությունների, բոլոր կուրսերի համար:
3. Ուսանողների շրջանում ծավալել բացատրական աշխատանքներ՝ ուսանողական պորտալից արդյունավետ օգտվելու, ինչպես նաև կրթության որակի վերահսկման նպատակով արդյունավետ հետադարձ կապ ապահովելու ուղղությամբ:
4. Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման համար իրականացնել համակարգված աշխատանքներ՝ բակալավրիատի կրթական աստիճանում բոլոր մասնագիտությունների երկրորդ կուրսերում:
5. Հեռակա ուսուցման ֆակուլտետի համար մշակել և հրապարակել կրեդիտային համակարգով սովորող բակալավրիատի ուսանողի և դասախոսի ուղեցույցեր:
6. Ամբիոններում իրականացնել հեռակա ուսուցման համակարգում կրթական ծրագրերի իրականացման մեթոդական, ուսումնական, դիդակտիկ, նյութատեխնիկական ռեսուրսների, անհրաժեշտ փաստաթղթային բազայի ամենամյա մոնիթորինգ, արդիականացնել ուսումնական ծրագրերը՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կողմից արված դիտողությունների և առաջարկությունների հաշվառմամբ:
7. Կիրառել դասավանդման նոր, ինտերակտիվ մեթոդներ, արդի տեխնոլոգիաներ՝ ուսանողների գործնական, հաղորդակցման հմտությունների զարգացման նպատակով:
8. Նորացնել մանկավարժի որակավորմամբ մասնագիտությունների գծով դասավանդվող առարկաների մեթոդիկաների ուսուցման եղանակները, մասնավորապես, զուգակցել տեսական դասընթացների դասավանդման և գործնական ուղղվածությամբ ուսումնառության մեթոդները:
9. Շարունակել մանկավարժական կրթության որակի բարելավման, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի նորացման նպատակով ՀՀ-ում մանկավարժական կրթության բարեփոխումների ծրագրերին մասնակցությունը և մանկավարժի որակավորմամբ մասնագիտությունների գծով հետևողական աշխատանքների իրականացումը:
10. Շարունակել հեռակա ուսուցման համակարգում կրթական ծրագրերում նախատեսված դասընթացների գծով ուսանողների գիտելիքների մուտքային, ընթացիկ և ամփոփիչ ստուգման ու գնահատման նպատակով քննական թեստերի մշակման և համակարգչային եղանակով քննությունների անցկացման աշխատանքները՝ թեստերի բանկի ստեղծման նպատակով խրախուսելով դասախոսական անձնակազմին:

Ն.Ա. Կուտուզյան՝

ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր

**ՔՆՆԱՇՐՁԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՉՍԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՁԱՆ**

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	14	-	2	71,4
2-րդ	14	-	-	100
3-րդ	15	-	1	86,7
4-րդ	34	-	6	64,7
5-րդ	27	-	8	100
6-րդ	36	-	-	91,7
Ռուսաց լեզու և գրականություն				57,1
1-ին	7	7	-	76,9
2-րդ	13	-	1	93,8
3-րդ	16	-	1	87
4-րդ	23	-	3	84,2
5-րդ	19	-	6	94,7
6-րդ	119	-	1	
Պատմություն				
1-ին	21			71,4
2-րդ	36	1	3	41,7
3-րդ	43	9	-	30,2
4-րդ	48	20	7	87,5
5-րդ	49	-	5	79,6
6-րդ	47	-	-	87,2
Աշխարհագրություն				
1-ին	12			50
2-րդ	14	4		71,4
3-րդ	21	4	2	81
4-րդ	18	-	-	88,9
5-րդ	24	-	2	95,8
6-րդ	30	-	3	90
Մանկավարժություն և մեթոդիկա (տարր. կրթ.)				
1-ին	36	2		
2-րդ	22	1	1	77,8
3-րդ	26	5	2	81,8
4-րդ	34	-	1	61,5
5-րդ	23	1	8	94,1
6-րդ	34	3	1	91,3
Իրավագիտություն				76,5
1-ին			2	
2-րդ	52	32		
3-րդ	90	6	1	13,5
Հաշվապահական հաշվառում	104	16	1	46,7
1-ին			-	52,9
2-րդ	28	6	1	
3-րդ	32	-	6	53,6
Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	39	-	10	62,5
1-ին	14	7	-	92,3
Կենսաբանություն				
1-ին	16	1	2	42,9
Բնապահպանություն և բնօգտագործում				
1-ին	7	2	-	68,8
ԸՆԴՀԱՄԱՆՆԸ	1157	128	91	69,4

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար զնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադի- մության %-ը
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	12	-	-	100
2-րդ	14	3	-	64,3
3-րդ	15	2	-	73,3
4-րդ	33	-	1	97
Ռուսաց լեզու և գրականություն				
1-ին	10	1	1	80
2-րդ	11	-	1	72,7
3-րդ	16	2	2	75
4-րդ	23	1	4	56,5
Պատմություն (իրավունքի հիմ.)				
1-ին	22	-	4	63,6
2-րդ	32	3	-	65,6
3-րդ	40	9	-	42,5
4-րդ	47	-	2	57,4
Աշխարհագրություն				
1-ին	13	3	2	61,5
2-րդ	13	-	-	61,5
3-րդ	19	-	-	89,5
4-րդ	19	3	-	73,7
Մանկավարժություն և մեթոդիկա (տարր. կրթ.)				
1-ին	33	1	1	78,8
2-րդ	21	2	1	57,1
3-րդ	24	9	-	50
4-րդ	33	2	-	81,8
Իրավագիտություն				
1-ին	54	-	1	29,6
2-րդ	93	30	1	28
3-րդ	95	31	-	14,7
Հաշվապահական հաշվառում				
1-ին	22	4	-	40,9
2-րդ	31	-	4	48,4
3-րդ	40	3	3	72,5
Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա				
1-ին	11	3	1	63,6
Կենսաբանություն				
1-ին	15	6	-	53,3
Բնապահպանություն և բնօգտագործում				
1-ին	5	1	-	60
ԸՆԴՀԱՆՈՒՐ	816	119	29	53,3

**ԳՊՀ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2012-2013 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանում տարվել են աշխատանքներ ծրագրային բարեփոխումների, ուսումնական գործընթացի կազմակերպման ու պլանավորման կատարելագործման ուղղությամբ, իրականացվել են աշխատանքներ եվրոպական չափորոշիչներին համահունչ որակի ներքին ապահովման և ուսանողների գիտելիքների գնահատման թափանցիկ ու ճկուն համակարգերի ներդրման և մի շարք այլ բնագավառներում:

ԳՊՀ-ում ուսումնական գործընթացն առավել ուսանողակենտրոն դարձնելու նպատակով հաշվետու ուսումնական տարում շարունակվել է կրեդիտային համակարգի գործադրման ընդլայնումը՝ ներառելով հեռակա ուսուցման ձևի բակալավրի բոլոր կրթական ծրագրերը: Մասնավորապես ԳՊՀ գիտխորհրդի նիստում վերանայվել են հեռակա ուսուցմամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը, ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ներկայացվել հեռակա ուսուցմամբ բակալավրիատի ևս երեք մասնագիտությունների կրթական ծրագրերի փաթեթներ՝ 2013-2014 նոր ուսումնական տարվանից ուսուցումը կազմակերպելու նպատակով:

Ինչպես նախորդ տարի, այս տարի ևս ուսանողների ու դասախոսների իրազեկության մակարդակի բարձրացման ու համալսարանական կրթական ծրագրերի թափանցիկությունն ու հրապարակայնությունը ապահովելու նպատակով վերահրատարակվել և դասախոսներին ու առաջին կուրսեցիներին են տրամադրվել կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցն ու դասընթացների տեղեկագիրքը:

Կրեդիտային համակարգի լիարժեք կիրարկման ուղղությամբ ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչությունը (ԱՔՎ) համատեղ աշխատանքներ է կատարել համալսարանի ֆակուլտետների, ամբիոնների և մեթոդիավորումների հետ: Մասնավորապես, լրամշակվել և ԳՊՀ գիտխորհրդի 2012 թ. մարտի 31-ի թիվ 2 նիստում և 2012թ. հոկտեմբերի 27-ի թիվ 9 նիստում հաստատվել, լրամշակվել ու փոփոխվել և համապատասխան ստորաբաժանումներին են բաշխվել «Բակալավրի և մագիստրատուրայի կրթական աստիճանում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգը» և «Կրեդիտային համակարգով հեռակա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը» ԳՊՀ բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի համար:

Կրթության որակի շարունակական բարելավման նպատակով պարբերաբար ԳՊՀ դասախոսների և ուսանողների շրջանում իրականացվել են հարցումներ՝ ուսումնասիրելու համար համալսարանի ներքին շահառուների (ուսանողներ և դասախոսներ) կարծիքը գործող

կարգերում գնահատման սկզբունքների վերաբերյալ, մասնավորապես դասընթացներին ուսանողների մասնակցությանը տրվող միավորներին, ընթացիկ և ամփոփիչ քննությունների անցկացման ձևի, դասընթացներին ուսանողների հաճախումներին տրվող միավորների վերաբերյալ: Հարցման արդյունքների հիման վրա կատարվել են գնահատման կարգի հետևյալ փոփոխությունները:

- Ամփոփիչ քննությունը կարող է անցկացվել գրավոր՝ թեստային եղանակով՝ ելնելով դասընթացի բնույթից, համապատասխան հիմնավորմամբ և ֆակուլտետի խորհրդի որոշմամբ:
- Հաճախումներին նախկին 20 միավորի փոխարեն տրվել է 10 միավոր:
- Դասընթացներին մասնակցության 10 միավորը քննությամբ ավարտվող մոդուլների համար դարձել է 15:
- Վերջնական հանրագումարային քննության 25 միավորը դարձել է 30, իսկ վերջնական հանրագումարային ստուգման 30 միավորը դարձել է 40:
- Քննաչրջանի ընթացքում ամփոփիչ գնահատումով դասընթացներից մինչև 12 կրեդիտ պարտք ունեցող ուսանողներին թույլ է տրվում շարունակելու ուսումը և մինչև ավարտական կուրս փոխադրվելը մարելու պարտքերը:
- Ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) երկու շրջանների ընթացքում ստուգարքների և քննությունների վերահանձնումը կազմակերպվում է միայն հանձնաժողովներով:
- ԳՊՀ բակալավրի կրթական ծրագրի ավարտական պահանջներում գերազանցության շեմը համարվել է ՄՈԳ-ի 3,6 միավորը, իսկ մագիստրատուրայի կրթական ծրագրի համար՝ 3,8 միավորը:

Այդուհանդերձ, համալսարանում դեռևս զգալի աշխատանք կա անելու կրեդիտային համակարգի գործադրումը բարելավելու և խորացնելու, մասնավորապես կրթական վերջնարդյունքների հետ դրանց կապակցման ուղղությամբ:

Օգտագործելով ներքին ցանցի հնարավորությունները՝ վերանայվել և կատարելագործվել են կրթական ծրագրերը, աշխատանքային, ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը:

Իրականացվել է համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատածավալների հաշվարկ և որոշակիացում՝ ուսումնական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Հաշվառվել է լսարանային ֆոնդը, և իրականացվել են համապատասխան աշխատանքներ՝ այն դասացուցակների հետ համապատասխանեցնելու և բնականոն ուսումնական գործընթաց ապահովելու ուղղությամբ:

Դեռևս նախորդ տարիներից շարունակվել և առավել արդյունավետ հիմքերի վրա է դրվել բուհի և Գեղարքունիքի մարզի դպրոցների հետ համագործակցությունը: Մասնավորապես հաշվետու ժամանակահատվածում փորձ է արվել առավել սերտացնելու ավագ դպրոց-քոլեջ-համալսարան կապերը: Այդ նպատակով փոխադարձ այցելություններ են կատարվել: Համալսարանի դասախոսական համակազմի ներկայացուցիչները համալսարանի լավագույն ուսանողների հետ այցելել են մարզի շուրջ 20 դպրոցներ, ներկայացրել են համալսարանում ուսուցանվող կրթական ծրագրերը, ուսանողական առօրյան, միջազգային ծրագրերին մասնակցության հնարավորությունները, հակակոռուպցիոն ռազմավարությունը, դասախոսների կողմից կարդացվել են դասախոսություններ: Միաժամանակ մարզի 7 դպրոցների աշակերտներ այցելել են համալսարան, ծանոթացել համակարգչային լսարաններին, լաբորատորիաներին, այցելել են համալսարանի պատմության թանգարան, լսել են դասախոսություններ: Մարզի դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար կազմակերպվել է շարադրություն-մրցույթ՝ «Ես սիրում եմ իմ երկիրը» թեմայով: Լավագույն աշխատանքների հեղինակները պարգևատրվել են համալսարանի կողմից տարբեր խրախուսական մրցանակներով:

Դպրոց-համալսարան փոխայցելությունների արդյունքում համագործակցության պայմանագրեր են կնքվել մարզի երեք դպրոցների հետ՝ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի կրթահամալիր, Գեղարքունիքի մարզի Ակունքի միջնակարգ դպրոց, Գեղարքունիքի մարզի «Ծաղկունքի բաց դպրոց» հիմնադրամ:

Հաշվետու տարում ԳՊՀ-ի և միջին մասնագիտական կրթական հաստատությունների միջև համագործակցության շրջանակներում կնքվել է թվով 17-րդ պայմանագիրը: Միաժամանակ կազմակերպվել է այդ հաստատությունների բարձր առաջադիմությամբ շրջանավարտների՝ ԳՊՀ-ում կրթությունը շարունակելու գործընթացը:

Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում Գեղարքունիքի մարզի «Գեղամա» հեռուստաալիքով եթեր էր հեռարձակվում ամենշաբաթյա «Համալսարանական ժամ» հաղորդաշարը, որը ներկայացնում էր համալսարանի ուսումնաժամանցային առօրյան և նվիրված էր կարևոր տարեկիցներին, նշանավոր անձանց և նրանց գործունեությանը:

Հաշվարկվել է ուսանողական շարժը: Ձևակերպվել են ՀՀ զինված ուժերում ծառայության մեկնելու և հիվանդության պատճառով տարկետման, ազատման, հեռացման, վերականգման, տեղափոխման և այլ գործընթացներին անչվող զեկուցագրեր: ԱԲՎ-ն վերահսկել և կազմակերպել է ներբուհական և միջբուհական տեղափոխությունների արդյունքում առաջացած տարբերությունների հանձնումը:

2012-2013 ուսումնական տարում գրանցվել է ուսանողների հետևյալ շարժը՝

1	<i>Այլ բուհերից ԳՊՀ են տեղափոխվել</i>	15
2	<i>ԳՊՀ-ից այլ բուհ են տեղափոխվել</i>	0
3	<i>Երկրորդ մասնագիտություն ստացողներ</i>	35
4	<i>Քոլեջից ԳՊՀ են ընդունվել</i>	21
5	<i>Առկա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են հեռակա</i>	15
6	<i>Հեռակա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են առկա</i>	5
7	<i>Ներֆակուլտետային տեղափոխություն</i>	22
8	<i>Տարկետում են ստացել՝</i>	94
	> առողջական վիճակի պատճառով	10
	> զինծառայության մեկնելու հիմքով	84
9	<i>ԳՊՀ-ից հեռացվել են</i>	159
10	<i>ԳՊՀ-ից ազատվել են</i>	23
11	<i>Վերականգնվել են ԳՊՀ՝</i>	167
	> գորացրումից հետո՝	95
	> հեռացումից հետո	25
	> տարկետումից հետո	3
	> պետական քննություններին թույլատրվածներ	44
Ընդհանուր շարժ		556

Շարունակվել են ուսանողների և դասախոսների տվյալների բազաների համալրման աշխատանքները:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն և ՀՀ կրթության և գիտության նախարարություն են ներկայացվել 1-ԳՄ և 3-ԳՄ ձևաչափերով վիճակագրական հաշվետվությունները:

Յուրաքանչյուր կիսամյակի վերջում ՀՀ ԿԳՆ են ներկայացվել կիսամյակային քննաչափաների հաշվետվությունները և տարեվերջյան ամփոփ հաշվետվությունը տեղափոխությունների վերաբերյալ՝ ըստ կարգի և սահմանված ձևի:

Կազմակերպվել և իրականացվել է ամփոփիչ ատեստավորման քննությունների վերահսկման գործընթացը: «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման» կարգի պահանջների համաձայն՝ համալսարանի 14 լսարաններում տեղադրվել են ձայնագրող սարքեր, որոնց շնորհիվ հնարա-

վոր են դարձել ամփոփիչ ատեստավորման ողջ ընթացքի ձայնագրումը, բողոքարկումների գործընթացի ապահովումը:

Ամփոփվել և ԿԳ նախարարություն են ներկայացվել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:

2012-2013 ուսումնական տարում պատրաստվել և շրջանավարտներին են հանձնվել 602 դիպլոմ, որից 230-ը՝ առկա ուսուցման համակարգի բակալավրիատում, 96-ը՝ մագիստրատուրայում, 118-ը՝ հեռակա ուսուցման բակալավրիատում, 158-ը՝ հեռակա ուսուցման համակարգում:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բուհի վճարովի համակարգում սովորող ուսանողներին հատկացվել են ուսման վարձի զեղչեր: Այդ զեղչերից երկու կիսամյակներում ընդհանուր հաշվով օգտվել են 80 ուսանողներ, որոնցից 15-ը աշխատակիցների երեխաներ են: Երկու կիսամյակներում կիրառված զեղչերի գումարը կազմում է մոտավորապես 4.815.500 դրամ:

Բարձր առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով, ծնողազուրկ, հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողներին 9 այլ կազմակերպությունների («ՎիվաՍել-USU» ընկերություն, «Օրանժ Հայաստան» հիմնադրամ, «Թրփանճեան ընտանեկան» հիմնադրամ, «Ազեան» հիմնադրամ, Հայաստանի երիտասարդական հիմնադրամ, Հայ կրթական հիմնարկություն, «Հայ համայնքը՝ հայ ուսանողությանը» հիմնադրամ, Միավորված մեթոդիստների օգնության կոմիտե (ԱՄՔՈՐ), Ժիրայր Նիշանյան հիմնադրամ) կողմից հատկացվել են կրթաթոշակներ, որոնց ստացողների թիվը 165 է:

Ուսումնական պլաններում նախատեսված պրակտիկաները իրականացնելու համար պետական և ոչ պետական տարբեր հաստատությունների ու կազմակերպությունների հետ շարունակվել են կնքվել պայմանագրեր և կազմակերպվել են ուսումնական, արտադրական, մանկավարժական պրակտիկաներ: Արտադրական պրակտիկա են անցել 87, մանկավարժական՝ 379, ուսումնական՝ 116 ուսանողներ:

ԱՔՎ մասնագետները դեկանատների աշխատակիցների հետ ստուգել են շրջանավարտների դիպլոմների հավելվածների գնահատականները՝ այդ կերպ խուսափելով թյուրիմացություններից և վրիպումներից, միաժամանակ ԱՔՎ-ն վերանայել է ամբիոնային փաստաթղթային բազան՝ ապահովելով անհրաժեշտ խորհրդատվություն, իրականացրել է ամբիոններում կուտակված ուսանողների անհատական, կուրսային, դիպլոմային աշխատանքների արխիվացման գործընթացը՝ համագործակցելով ամբիոնների և ԳՊՀ արխիվի հետ:

Շարունակվել են աշխատանքները ԳՊՀ-ում որակի ապահովման ներքին կառուցակարգերի ներդրման և որակի շարունակական բարելավման ուղղությամբ:

Գավառի պետական համալսարանում ԱԲՎ-ի կազմում գործում է որակի բաժինը, որի գործառույթներն են համալսարանում որակի ներքին ապահովմանն առնչվող ծրագրերի իրականացումն ու գործունեությունների վերահսկումը:

Կրթական ծրագրերի ամենամյա մշտադիտարկման և պարբերական վերանայման համար օգտագործվում են ուսանողներից ու կրթական ծրագրերի շրջանավարտներից հետադարձ կապի օգնությամբ ստացվող գնահատումները: Սակայն արտաքին շահակիցների կարծիքները և միջազգային առաջավոր փորձը դեռևս լիովին չի ուսումնասիրվում. համադրման արդյունքները դեռևս ներգրավված չեն հետադարձ կապի մեխանիզմներում:

Համալսարանում կրթության որակի շարունակական բարելավման մեխանիզմների մշակմանն ու դասավանդման արդյունավետությանն են նպատակաուղղված պարբերաբար իրականացվող ուսանողական կիսամյակային և շրջանավարտների բավարարվածության ամենամյա հարցումները, որոնք նպաստում են դասավանդման, ուսումնառության և գնահատման կիրառվող մեթոդների, ամբողջական կրթական ծրագրերի անընդհատ բարելավմանը և կատարելագործմանը, ինչպես նաև կոռուպցիոն երևույթների բացահայտմանը և դրանց վերացման ուղղությամբ միջոցառումների ձեռնարկմանը:

2012-2013 ուսումնական տարում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական կիսամյակային գնահատումները կատարվել են բակալավրիատի և մագիստրատուրիայի առկա ուսուցման համակարգում սովորող 120 ուսանողների օգնությամբ, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ 70 ուսանողների օգնությամբ:

Նախատեսվում է, որ շրջանավարտների հարցումների արդյունքները, որոնք շարունակական բնույթ ունեն և կատարվում են նաև համացանցի միջոցով, կօգտագործվեն համակարգի ուսումնական ծրագրերի և այլ կրթական ծառայությունների որակի շարունակական բարելավման նպատակով:

Հաշվետու տարում կարևորվեց նաև ԱԲՎ մասնագետների վերապատրաստման խնդիրը, որի արդյունքում մեր երկու մասնագետները վերապատրաստման կուրսեր անցան Իտալիայի Պալերմո քաղաքում «ARARAT» ծրագրի շրջանակում: Նպատակը միջազգային փորձի լավագույն արդյունքների համադրումն է արտաքին շահառուների հետ հետադարձ կապի մեխանիզմներում:

ԱԲՎ-ն շարունակում է ակտիվ համագործակցությունը հանրապետության և արտերկրյա այլ բուհերի նմանատիպ կառույցների հետ՝ նպատակ ունենալով ավելի արդյունավետ և ճկուն դարձնել վարչության աշխատանքները և նպաստել բուհում ուսման որակի շարունակական բարձրացմանը:

Ա. Ա. Ղարիբյան՝

Ակադեմիական քաղաքակնության վարչության պետ

**ԳՊՀ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ
ՉԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Գրքային ունեցվածքը`	40.300	Բաժին`	2
Ընթերցող`	3.000	Ընթերցասրահ`	2
Հաճախում`	400.000	Աշխատողների թիվը`	4
Գրքատացք`	500.000		

ԳՊՀ գիտական գրադարանը համալսարանի կարևոր կառուցվածքային ստորաբաժանումներից է, որի գործունեության հիմնական նպատակը գիտաուսումնական գործընթացի տեղեկատվական ապահովումն է, անհրաժեշտ մասնագիտական գրականություն և գիտահետազոտական տեղեկատվական աղբյուրներ տրամադրելը:

Գրադարանի աշխատանքներն ուղղված են մասնագիտական-տեղեկատվական հարուստ բազայի ձևավորմանն ու դրա նպատակային օգտագործմանը: Գրադարանի կարևոր գործառույթներից են ԳՊՀ ուսանողների հետ տարվող ամենօրյա աշխատանքը և տեղեկատվական տարբեր աղբյուրների որոնման և ընտրության գործում նրանց աջակցություն ցուցաբերումը:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են կատարվել ընթերցողների օպերատիվ տեղեկատվական սպասարկման, ուսանողների շարժը դեպի գրադարան ակտիվացնելու ուղղությամբ: Ֆակուլտետների դեկանատների հետ համագործակցելով` կազմել ենք ժամանակացույց, որի համաձայն դասերից ազատ ժամերին ուսանողները հնարավորություն են ունեցել գրադարանավարների ուղեկցությամբ ծանոթանալու գրադարանում, ընթերցասրահում և գրապահոցում առկա մասնագիտական գրականությանը: Այս կերպ ուսանողները տեղեկացել են նաև դասագրքերի, ուղեցույցների ու ձեռնարկների նոր համալրումների և ներկայացրել են համապատասխան գրքերի պահանջ:

2012-2013 ուսումնական տարվա ընթացքում ԳՊՀ գրադարանը կատարել է գրքային ֆոնդի համալրման, մշակման, դասավորման, գրքի վերանորոգման ու պահպանման աշխատանքներ, համալրվել են տեղեկատվական գրացուցակները և քարտարանները:

Գրադարանային ֆոնդի համալրումը: ԳՊՀ գրադարանն իր գրքային ֆոնդում ունի 40.300 գրադարանային միավոր, որից.

- հայալեզու են 18500 գիրք,
- ռուսալեզու` 16300,
- օտարալեզու` 5500:

Հաշվետու տարում գրադարանը ձեռք է բերել 1850 միավոր մասնագիտական և գեղարվեստական գրականություն, այդ թվում`

- մասնագիտական դասագրքեր՝ 457,
- ուսումնական ձեռնարկներ՝ 149,
- մենագրություններ՝ 23,
- տեղեկագրքեր՝ 147,
- գիտական հանդեսներ և հոդվածների ժողովածուներ՝ 56,
- սեղմագրեր՝ 38,
- գեղարվեստական գրականություն՝ 295,
- այլ նյութեր՝ 685 միավոր:

Համալսարանի կողմից պարբերաբար կատարվող նպատակային գնումների շնորհիվ համալրվող գրականության ընտրության ժամանակ հաշվի են առնվել ընթերցողների պահանջները, դասավանդող մասնագետների կարծիքները, ուսումնական ծրագրերի և համալսարանի կրթագիտական գործընթացների պահանջները:

Գրադարանը համալրվել է նաև հեղինակների ու անհատների նվիրատվությունների շնորհիվ, ինչպես նաև բաժանորդագրությունների արդյունքում: Հաշվետու տարվա ընթացքում գրադարանին նվիրատվության կարգով գրքեր են տրամադրել.

- ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի Վաչե Նալբանդյանի ֆոնդը՝ 635 միավոր՝ գեղարվեստական, գրականագիտական, լեզվաբանական գրքեր, մենագրություններ և տեղեկագրքեր,
- ՀՀ կենտրոնական բանկը՝ 209 միավոր՝ տնտեսագիտական, իրավաբանական բնույթի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի վերաբերյալ,
- Հայաստանում Ամերիկյան համալսարանը՝ 423 միավոր՝ տնտեսագիտական բուհական դասագրքեր,
- Գեղարքունիքի մարզային գրադարանը՝ 24 միավոր՝ գեղարվեստական գրականություն,
- Երևանի պետական համալսարանը՝ 101 միավոր՝ հայագիտական հրատարակություններ, ուսումնական ձեռնարկներ և գեղարվեստական գրականություն,
- «Ռոստոտրոլդնիչեստվո» հայաստանյան ներկայացուցչությունը՝ 132 միավոր՝ ռուսերեն լեզվաբանական և գրականագիտական դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, տեղեկագրքեր և ուսուցողական տեսաֆիլմեր՝ DVD խտասկավառակներով,
- «Արժանապատիվ սերունդ» հասարակական կազմակերպությունը՝ 38 միավոր տնտեսագիտական գիրք,
- ԳՊՀ դասախոսները՝ 248 միավոր մասնագիտական և գեղարվեստական գրականություն:

Ընթերցողների իրազեկման նպատակով ընթերցասրահում կազմակերպվել է նոր ստացված գրքերի 4 ցուցադրություն, որտեղ ներկայացվել են հայ բանասիրության, ռուս բա-

նասիրության, տնտեսագիտության և իրավագիտության վերաբերյալ գրքերը: Ցուցադրություններից հետո գրքերը դասավորվել են գրապահոցում:

Գրքային ֆոնդի մշակում: Ընթացիկ տարում կատարվել են մասնագիտական գրականության ստուգման, մաքրման, տեղաշարժի և գրքերի վերանորոգման աշխատանքներ: Իրականացվել է նաև մասնագիտական գրականության վերադասավորում և համակարգում, շարունակվել են գրքային ֆոնդի համակարգչային մուտքագրումը, նկարագրումը և դասակարգումը՝ ըստ գրադարանային մատենագիտական դասակարգումների: Արդյունքում գրադարանն ունի 15 մասնագիտություններին համապատասխանող հետևյալ քանակի մասնագիտական գրքեր.

1. Հայոց լեզու և գրականություն՝ 2100,
2. Ռուսաց լեզու և գրականություն՝ 2000,
3. Անգլերեն լեզու և գրականություն՝ 1800,
4. Պատմություն՝ 1260,
5. Իրավագիտություն՝ 1340,
6. Մանկավարժություն և մեթոդիկա՝ 400,
7. Ֆինանսներ՝ 1420,
8. Հաշվապահական հաշվառում՝ 1420,
9. Ձեռնարկությունների տնտ. և կառավ.՝ 1420,
10. Կենսաբանություն՝ 2366,
11. Աշխարհագրություն՝ 788,
12. Բնապահպանություն և բնօգտագործում՝ 87,
13. Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա՝ 2452,
14. Քարտեզագրություն և կադաստրային գործ՝ 57,
15. Սերվիս՝ 42:

Մասնագիտական գրականության ֆոնդերի գրացուցակները տրամադրվել են համապատասխան ամբիոններին՝ կուրսային, անհատական և ավարտական աշխատանքները, մագիստրոսական թեզերը պատրաստելիս ուսանողներին գրականությամբ աջակցելու նպատակով:

Գրադարանում շարունակվում են գրքային ֆոնդի էլեկտրոնային այբբենական և կարգային գրացուցակների ձևավորման և գործարկման աշխատանքները:

Մասնագիտական-տեղեկատվական բազա: Գրադարանի խնդիրը կրթական գործընթացում արդի գիտական հետազոտությունների արդյունքների օգտագործմանը նպաստելն է, դասախոսների և ուսանողների, ինչպես նաև այլ շահակիցների գիտակրթական, տեղեկատվական կարիքներն ուսումնասիրելն ու դրանք հնարավորինս բավարարելը: Ըստ այդմ՝ աշխատանքներ են կատարվել անհրաժեշտ տեղեկատվության պատվիրման, գրադարանային պաշարների էլեկտրոնային համակարգի մշակման և ներդրման, տեղեկատվական

շտեմարանների ձևավորման, դրանց շարունակական թարմացման, ամբիոններին էլեկտրոնային կրթական ռեսուրսների տրամադրման և այլ ուղղություններով:

Վերանայվել և կարգի են բերվել քարտարանները, որոնց միջոցով ուսանողներին և դասախոսներին լիարժեք տեղեկություն է տրվում գրադարանի հավաքածուների մասին:

Բազմաթիվ մատենագիտական ցանկերով, գիտական հոդվածների գրացուցակներով հարստացվել է գրադարանային տեղեկատվական համակարգը: Գրադարանում առկա «Գարուն», «Գրական թերթ», «Լրաբեր հասարակական գիտությունների», «Պատմա-բանասիրական հանդես», «Բանբեր Երևանի համալսարանի», «Գիտության աշխարհում», «Օրենք և իրականություն», «Հանրային կառավարում», «Արդարադատություն», «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ», «Տարեգիրք. ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ», «Հայ աստվածաբան. ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ», «Ազրոգիտություն» և այլ պարբերականներից, գիտական հանդեսներից ու հոդվածների ժողովածուներից մշակվել և կազմվել է 76 բաժին պարունակող «Գիտական հոդվածների մատենագիտություն», որը պարբերաբար լրամշակվում է նոր հոդվածների ցանկերով և առաջարկվում ուսանողներին ու պրոֆեսորադասախոսական անձնակազմին:

Կազմվել և տարեցտարի համալրվում է ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների 14 համարների մատենագիտական ցանկը՝ բաղկացած 12 բաժիններից: Այժմ ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների համալրված մատենագիտական ցանկը պարունակում է 1024 գիտական հոդված: Այն, բացի գրադարանում առկա թղթային տարբերակից, տեղադրված է նաև ԳՊՀ www.gsu.am պաշտոնական համացանցային կայքի «Գրադարան» հատվածամասում՝ մատչելի լինելով նաև էլեկտրոնային եղանակով:

Գրադարանի համագործակցությունը: ԳՊՀ գրադարանը, լինելով «Հայաստանի գրադարանային ասոցիացիայի» անդամ, համագործակցում է ՀՀ ազգային գրադարանի, ՀՀ գրողների միության, ինչպես նաև այլ բուհերի գրադարանների հետ: Գրադարանից գրքեր են տրամադրվել ԳՊՀ Վարչամ Ավետյանի անվան նորաստեղծ պատմության թանգարանին, Գեղարքունիքի մարզի երկրագիտական թանգարանին և համալսարանի հյուրերին:

Միջոցառումները: Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում գրադարանում կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ՝ ներգրավելով տարբեր ֆակուլտետների ուսանողների: Շարունակական աշխատանքներ են կատարվել ուսանողների շրջանում գրքի նկատմամբ սեր և հետաքրքրություն առաջացնելու ուղղությամբ:

Գրադարանի աշխատակիցները նախաձեռնել և կազմակերպել են տարբեր ֆակուլտետների ուսանողների համար նոր համալրված մասնագիտական գրքերի քննարկումներ: 2012-2013 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում սեպտեմբերի 19-ից 23-ը կայացած գրքի ընթերցումներն ու քննարկումները առաջին կուրսեցիների համար նշանա-

վորվեցին իբրև գրադարանային միջոցառումների մեկնարկ: Իսկ ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի փետրվարի 20-ից 24-ը կայացան նոր ստացված գրքերի քննարկումներ:

2013 թ. մայիսին կազմակերպվել են նաև գրքերի թեմատիկ ցուցադրություններ՝ «Գավառի պետական համալսարան - 20» խորագրով՝ նվիրված ԳՊՀ հիմնադրման 20-ամյակին, որտեղ ներկայացվել են ԳՊՀ հրատարակած բոլոր նյութերը, թերթերի փաթեթները, ԳՊՀ դասախոսների 20 տարվա ընթացքում հրատարակած աշխատությունները, թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների սեղմագրերը: Նմանատիպ միջոցառումներ կազմակերպելիս՝ գրադարանը համագործակցել է ԳՊՀ բոլոր ֆակուլտետների ամբիոնների, ուսանողական գիտական ընկերության և ուսանողական խորհրդի անդամների հետ: Այս միջոցառումները նպաստել են նաև գրքերի տացքի, գրադարան ուսանողների հաճախելիության բարձրացմանը:

ԳՊՀ գրադարանը գիտաուսումնական պահանջների բավարարման նպատակով, գրքային պաշարից բացի, կարևորում է նաև էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսների նպատակային օգտագործումը: Բուհը կարիք ունի գրադարանի գործառույթների իրականացման ավտոմատացված համակարգի ներդրման, համապատասխան ծրագրային միջոցների և գործիքակազմի կիրառման: Գրադարանի աշխատակազմը համացանցային կայքերից ներբեռնել է էլեկտրոնային մասնագիտական գրքեր և դրանք ուսանողներին տրամադրել էլեկտրոնային կրիչներով: Էլեկտրոնային մասնագիտական գրականության համալրման նպատակով ակտիվորեն համագործակցել ենք նաև բոլոր ամբիոնների հետ՝ այնտեղ առկա էլեկտրոնային գրականությունը կենտրոնացնելով գրադարանում:

ԳՊՀ գրադարանի խնդիրն է արդյունավետորեն իրականացնել Գավառի պետական համալսարանի գիտական-տեղեկատվական և մշակութային-դաստիարակչական կենտրոնի իր առաքելությունը:

**Ն. Ֆ. Պետրոսյան՝
ԳՊՀ գրադարանի վարիչ**

ԳՊՀ ՎԱՐՇԱՄ ԱՎԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Գավառի պետական համալսարանի Վարշամ Ավետյանի անվան պատմության թանգարանը հիմնադրվել է 2011 թվականի վերջին:

Թանգարանը ստեղծվել է հնագետ, ԳՊՀ պրոֆեսոր Վարշամ Ավետյանի կողմից՝ նվիրատվության կարգով սիրով համալսարանին հանձնելով իր անձնական հավաքածուն, որը հավաքվել է շուրջ 50 տարիների ընթացքում՝ իր անձնական միջոցներով ու ջանքով:

Նյութերը հանձնվել են ըստ կազմված գույքացուցակի՝ թանգարանային ֆոնդի առարկայացուցակի, այն է՝ ԳՊՀ հնագիտական իրերի գլխավոր գույքամատյանի, որի կազմումը սկսվել է Վ. Ավետյանի նախաձեռնությամբ և շարունակվել թանգարանի գիտաշխատող Մերի Քեշիշյանի կողմից՝ առաջնորդվելով Վ. Ավետյանի կողմից ընդունված մշակման սկզբունքով և ցուցումներով:

Հաշվետու ժամանակահատվածում համալրվել, տեսակավորվել, մշակվել են թանգարանում պահվող հնագիտական, գիտական, անհատական-անվանական և օժանդակ ֆոնդերի նյութերը, հավաքվել է գրքային ֆոնդ, ինչպես նաև աշխատանք է տարվել ցուցադրական բաժնի ներկայացման ուղղությամբ:

Համապատասխանաբար կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- Կազմվել է թանգարանային ցուցադրությունը (ըստ Վ. Ավետյանի կազմած պլանի):
- Թանգարանի հիմնադիր տնօրեն Վ. Վ. Ավետյանի կողմից սահմանվել է թանգարանային նյութի ծածկագիր, այն է՝ ԳՊՀՊԹ (Գավառի պետական համալսարանի պատմության թանգարան), համաձայն որի նյութերին տրվել են համապատասխան բաժնի, ֆոնդի և հերթական համարի ծածկագրերը:
- Թանգարանն ունի կանոնադրություն (հաստատված ԳՊՀ գիտական խորհրդի կողմից) և խորհրդի կազմ:
- Վ. Վ. Ավետյանի անձնական նվիրատվություն հանդիսացող հնագիտական նյութերի ֆոնդը, որի հիման վրա բացվել է թանգարանը, բաղկացած է 2129 նյութից: Նյութերը գրանցված են Հնագիտական իրերի գլխավոր գույքամատյանում: Մատյանում առկա նյութերի հերթական համարը համապատասխանեցված է ցուցադրանմուշի հետ, որոնք գտնվում են ցուցադրակներում:

Կից առկա են նյութի նկարագրությունը և պատմությունը, չափագրությունը, քանակը, վիճակը, ինչից է պատրաստված, ուն կողմից է հանձնվել և այլ մանրամասնություններ, որոնք համապատասխանում են թանգարանային պրակտիկայում ընդունված և մշակված կանոնակարգին:

Այսպիսով, ԳՊՀ Պատմության թանգարանում.

- Վ. Ավետյանի Հնագիտական ֆոնդը բաղկացած է 487 ֆոնդային համարից:
- Կազմվել են թանգարանի նյութերի ընդունման թվով 57 ակտեր:
- Բացվել են ակտերի մատյաններ՝ ըստ տարիների՝ 2012 և 2013 թթ.:

2012 թ. կազմվել է 34 ակտ՝ 2384 նյութով: Վ. Ավետյանի հանձնած՝ 2129 նյութին ավելացվել է 255 թանգարանային նյութ:

2013 թ., կազմվել է 23 ակտ՝ 186 նյութով:

Ընդամենը՝ 57 ակտ, 2570 նյութով:

- Յուրաքանչյուր նյութ ձեռք բերելիս, կամ հանձնելիս՝ պարտադիր կերպով կազմվում է հանձնման-ընդունման ակտ:
- Գիտական մշակման են ենթարկվել թանգարանում գտնվող բոլոր նյութերը, որը շարունակական աշխատանք է: Յուրաքանչյուր նյութի վրա առկա են ծածկագիրը, համարը, բաժինը, ֆոնդը և ակտի համարը:
- Կատարվել է ցուցադրվող նյութերի հաշվառում, ստուգում, ֆոնդային համարների վերստուգում, պիտակների փակցում՝ ըստ ԳՊՀՊԹ ծածկագրի:
- Ցուցադրվող յուրաքանչյուր բաժին ունի եռալեզու (հայերեն, ռուսերեն և անգլերեն) բացատրագիր: Դարակները և պահարանները նույնպես համարակալված են:
- Ձեռք են բերվել նյութերի գրանցման համապատասխան մատյաններ:
- Բացվել են մատյաններ ԳՊՀՊԹ օժանդակ ֆոնդի համար, Անհատական ֆոնդի մատյան, Գրքերի մատյան, որոնք լրացվում են ըստ հերթական համարի և նյութի՝ ընդունված սկզբունքի համաձայն:
- Բացվել են ԳՊՀ հիմնադիր ռեկտոր Հրանտ Հակոբյանի և ԳՊՀ պատմության թանգարանի հիմնադիր տնօրեն Վարշամ Ավետյանի անձնական ֆոնդեր և թանգարանում նրանց անձնական իրերը ներկայացնող ցուցադրություններ: Նյութերը մշակվել են՝ համարակալվելով ըստ կարգի և ներկայացվել ցուցադրության:
- Ցուցադարակներում նյութերը դասավորվել են ըստ հնագիտական դարափուլերի, մեկ հավաքածուի սկզբունքով, ըստ բաժինների և նյութի:

Թանգարանն ունի 18 բաժին (ելնելով դարակների դասավորությունից), որոնք համալրված են համապատասխան օժանդակ նյութերով և բացատրագրերով: Օրինակ՝ դրամագիտական, ազգագրական, գրքային հավաքածուները ներկայացված են առանձին բաժիններով:

- Թանգարանի 18 բաժինները ներկայացնում են՝
ա) հնագիտական նյութեր՝ 1-10 ցուցադարակներ, 16-18 ցուցադարակներ (հնագիտական իրեր և դրամագիտական հավաքածու):

բ) 11-12 բաժիններ՝ Յ. Հակոբյանի և Վ. Ավետյանի անձնական իրերի ցուցադրություններ:

գ) 13-րդ բաժինը ներկայացնում է համալսարանին վերաբերվող հրատարակությունները, գիտական հանդեսները, մամուլը, պատվոգրերը, գավաթները և այլն, ինչպես նաև այստեղ է ընդգրկված մեդալների, կրծքանշանների, նմանատիպ այլ նյութերի հավաքածուն:

դ) 14-15-րդ բաժինները վերաբերում են Հայաստանի ռազմական ուժերի պատմությանը, դրան առնչվող գիտական հրատարակություններին, հայոց բանակին և ներկայացված են համապատասխան գրքային հրատարակություններ:

- Թանգարանում առանձին անկյուններ են հատկացված՝
 1. Սևանի ավազանն ուսումնասիրած գիտնականներին,
 2. համալսարանի հիմնադիր ռեկտորին և թանգարանի հիմնադրին, բուհի ստեղծման պատմությանը՝ կից փաստաթղթերով,
 3. Ֆիդայական շարժմանը, 1915 թ. հայոց ցեղասպանությանը և մշակութային ցեղասպանությանը, Հայրենական մեծ պատերազմին և Արցախյան ազատամարտին, ՀՀ ազգային հերոսներին:
- Բացվել է թանգարանի այցելուների տպավորությունների գրառման մատյան:
- Կազմվել է նաև թանգարանի ցուցադրության համառոտ էքսկուրսիոն պլանի նկարագիրը:
- 2012-13 թթ. ընթացքում թանգարան է այցելել 537 մարդ, այդ թվում՝ համալսարանի ուսանողներ, դասախոսներ, գիտաշխատողներ, ինչպես նաև համալսարանում կազմակերպված միջոցառումների մասնակիցներ, Գեղարքունիքի մարզային դպրոցների աշակերտներ, հայ և օտարերկրյա բարձրաստիճան հյուրեր (դեսպաններ և հյուպատոսներ), ինչպես նաև Սփյուռքից ժամանած հյուրեր:
- Թանգարանում կազմակերպվել և անցկացվել են ինչպես առանձին դասաժամեր, դասախոսություններ, այնպես էլ սեմինար-գործնական աշխատանքներ: Բացատրական էքսկուրսիոն աշխատանք է տարվել անհատ այցելու հյուրերի համար, նաև դպրոցականների հետ՝ այդպիսով ամրապնդելով դպրոց-բուհ կապը: Վերջինս կարող է նպաստել դպրոցներում դպրոցական հայրենագիտական թանգարաններ ստեղծելու աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև բարձրացնել հայրենագիտական ճանաչողությունը:
- Բացվել է թանգարանի հիմնադիր տնօրենի գիտական հրատարակությունների անհատական հավաքածու-թղթապանակ:
- Նյութերը պարտադիր կարգով ժամանակի ընթացքում ենթարկվել են մշակման, նաև գիտական մշակման: Մեր կողմից ռեստավրացիայի են ենթարկվել հնագիտական

գտածոներից մի քանիսը և բերվել իրենց սկզբնական տեսքին, ինչը բավականին դժվար ու բարդ աշխատանք է, և կատարվել է Վ. Ավետյանի անմիջական օգնությամբ ու մասնագիտական խորհուրդներով:

- Կատարվել է հավաքչական աշխատանք՝ թանգարանի նյութերը համալրելու նպատակով:
- Գրքերի և մամուլի բաժնում գրանցվել է 136 նյութ: Առանձին ուշադրությամբ հավաքվում է ՀՀ ՊՆ «Հայ Ձինվոր» շաբաթաթերթը:
- Ընթացքում կշարունակվեն նյութերի համալրողական աշխատանքները և թանգարանը կհարստացվի այլ արժեքավոր ցուցանմուշներով: Առանձին աշխատանքներ կտարվեն՝ հավաքելու համալսարանի դեկանատների, ամբիոնների և մյուս կառույցների ավելի քան քսանամյա գործունեության և կարևոր միջոցառումների պատմության վերաբերյալ:

Թանգարանն աշխատում է հնարավորինս պատշաճ ձևով կատարել Գավառի պետական համալսարանի գիտական-տեղեկատվական և ուսումնադաստիարակչական կենտրոնի իր առաքելությունը և ընդլայնել իր աշխատանքային գործունեությունը:

Մ. Ս. Քեչիշյան՝

**ԳՊՀ Վարչամ Ավետյանի անվան պատմության
թանգարանի գիտաշխատող**

ԳՊՀ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ
ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության ոլորտը բուհի զարգացման ռազմավարական ուղղություններից է, որն արտացոլված է ԳՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի համապատասխան դրույթներում:

Հասարակության հետ տարվող աշխատանքները համակարգվում են ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից:

Հիմնադրման օրվանից Հանրության հետ կապերի և լրատվության բաժինը սերտորեն համագործակցում է ԳՊՀ ուսանողական խորհրդի, Ուսանողական գիտական ընկերության, Ուսանողական ծրագրային թիմի, Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի, բուհի մյուս կառուցվածքային ստորաբաժանումների հետ, կազմակերպում դիմորդների և այլ շահառուների հետ տարվող աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում բաժնի կողմից մշակվել և ԳՊՀ գիտական խորհրդի հաստատման է ներկայացվել ԳՊՀ հանրային կապերի հայեցակարգ, որում ամրագրված են ԳՊՀ հանրային կապերի հայեցակարգի նպատակներն ու խնդիրները, Հանրային կապերի և լրատվության բաժնի աշխատանքի ուղղությունները, ինչպես նաև PR աշխատանքների կազմակերպման ու համակարգման կառուցակարգերն ու սկզբունքները:

ԳՊՀ-ում կազմակերպվող միջոցառումներն ավելի համակարգված ու համակողմանի լուսաբանելու նպատակով բաժնի կողմից մշակվել և ԳՊՀ գիտական խորհրդի հաստատման է ներկայացվել «Գավառի պետական համալսարանում հանրային նշանակությամբ միջոցառումների կազմակերպման, դրանց մասին իրազեկման և հասարակության հետ տարվող աշխատանքների» կանոնակարգը:

Սղագրվել և համակարգվել են ԳՊՀ հիմնադիր ռեկտոր Հրանտ Հակոբյանի մասին պատմող հուշապատումները, որտեղ ամփոփված է Հայաստանի Հանրապետության նշանավոր գիտնականների, հասարակական-քաղաքական գործիչների, մշակույթի նվիրյալների ներկայացրած հուշերը մեծ մարդասեր Հրանտ Խաչատուրի Հակոբյանի մասին:

2012-2013 ուսումնական տարվա ընթացքում Հանրության հետ կապերի և լրատվության բաժինն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

- ✓ Ջանգվածային լրատվության միջոցների հետ աշխատանք,
- ✓ Համագործակցություն կրթական ոլորտի պետական և հասարակական կազմակերպությունների հետ,
- ✓ Դիմորդների հետ տարվող աշխատանքներ,
- ✓ Շրջանավարտների միության և կարիերայի կենտրոնի գործունեության կազմակերպում

Ձանգվածային լրատվության միջոցների հետ աշխատանքներ.

- ✓ Գեղարքունիքի մարզի «Գեղամա մեդիա հոլդինգ» ՍՊԸ-ի, Գավառի «Քյավառ», Սևանի «STV1», Մարտունու «Ձանգակ» հեռուստաընկերությունների, «Գեղամա աշխարհ» թերթի և «Արմենպրես» լրատվական գործակալության հետ շարունակվում է ակտիվ համագործակցությունը,
- ✓ Հաշվետու ժամանակահատվածում հետեւողականորեն կատարվել են Գավառի պետական համալսարանի և «Քյավառ» հեռուստաընկերության միջև կնքված համագործակցության հուշագրի դրույթները,
- ✓ ԳՊՀ-ում տեղի ունեցող միջոցառումները պարբերաբար լուսաբանվել են ինչպես մարզային լրատվամիջոցների, այնպես էլ հանրապետական ՁԼՄ-ների կողմից,
- ✓ ԳՊՀ-ի վերաբերյալ տեղեկություններն էլեկտրոնային փոստով ուղարկվել են հայաստանյան լրատվամիջոցների հասցեներով: ԳՊՀ գործունեությանը պարբերաբար անդրադարձել են «Արմենպրես» լրատվական գործակալությունը, «Հայաստանի Հանրապետություն», «Առավոտ», «Ազգ», «Ժողովուրդ» օրաթերթերը, «Կրթություն» շաբաթաթերթը և մի շարք էլեկտրոնային պարբերականներ,
- ✓ «Գեղամա» հեռուստաընկերության հետ համատեղ պատրաստվել է ԳՊՀ հիմնադիր ռեկտոր Հրանտ Հակոբյանի ծննդյան 85-ամյակին նվիրված «Հրանտ Հակոբյանը՝ հավերժի ճամփորդ» տեսաֆիլմը,
- ✓ Շարունակվում է «Գեղամա» հեռուստաընկերությանը եթեր հեռարձակվել «Համալսարանական ժամ» հաղորդաշարը, սակայն հաշվետու ժամանակահատվածում անհրաժեշտությունից ելնելով ձևաչափում որոշակի փոփոխություններ են կատարվել. «Դասը վարում է ԳՊՀ պրոֆեսորը» կամ «Դասը վարում է ԳՊՀ դասախոսը» ծրագիրն իրագործելով՝ կյանքի կոչվեց «Գեղամա մեդիա հոլդինգ»-ի հետ կնքած համագործակցության հուշագրի դրույթներից ևս մեկը: Այդ տեսագրությունները տեղադրվում են ԳՊՀ ինտերնետային պաշտոնական վիդեոբլոգում,
- ✓ «Գեղամա» հեռուստաընկերության «Վեկտոր» հաղորդաշարում պարբերաբար հյուրընկալվել են ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ, որոնք, որպես փորձագետներ, ներկայացրել են իրենց տեսակետները քննարկվող հարցի շուրջ, առանձին դեպքում ներկայացվել է նաև ԳՊՀ դիրեկտորը,
- ✓ Մեկ առանձին հաղորդաշար նվիրվել է ԳՊՀ հակակոռուպցիոն փորձի ներկայացմանը, որի տեսագրությունը զետեղված է ինչպես ԳՊՀ ինտերնետային պաշտոնական վիդեոբլոգում, այնպես էլ ԳՊՀ հակակոռուպցիոն բլոգում,

- ✓ Հայաստանյան տպագիր մամուլում, էլեկտրոնային թերթերում և լրատվական գործակալություններում տեղ գտած ԳՊՀ-ին վերաբերող նյութերն առանձնացվել և տեղադրվել են «Մամուլը ԳՊՀ-ի մասին» ալբոմ-ժողովածուում,
- ✓ Մարզային ՋԼՄ-ներից ԳՊՀ-ի գործունեությունն առավել հաճախ լուսաբանել են «Քյավառ» հեռուստաընկերությունն ու «Գեղամա աշխարհ» թերթը,
- ✓ «Քյավառ» հեռուստաընկերությունից վերցվել են ԳՊՀ-ին վերաբերող արխիվային նյութերը, և համալրվել է ԳՊՀ տեսանյութերի արխիվը,
- ✓ Հայաստանյան տեղեկատվական ծառայություններին տրամադրվել են ԳՊՀ պատմությանն ու գործունեությանը, վարչական ու ֆակուլտետային ստորաբաժանումներին, ինչպես նաև մատուցվող կրթական ծառայություններին վերաբերող ամբողջական տեղեկատվություն,
- ✓ Թվանշայնացվել և արխիվացվել են ԳՊՀ հիմնադրման օրվանից մինչ այժմ լուսանկարված թղթային լուսանկարները, որոնք տեղադրվել են ԳՊՀ www.gsu.am պաշտոնական ինտերնետային կայքի «Տեսասրահ» բաժնում, ինչպես նաև ցուցադրված են պատմագիտական և հնագիտական թանգարանում,
- ✓ ԳՊՀ միջոցառումների ընթացքում լուսանկարված էլեկտրոնային լուսանկարներն արխիվացվել են և անհրաժեշտության դեպքում օգտագործվում են տեղեկատվական գրքույկներ և թերթոններ պատրաստելիս,
- ✓ «Վիքիպեդիա» ազատ հանրագիտարանի երևանյան ներկայացուցչության հետ համատեղ կազմակերպվել է «Վիքիպեդիայի միջավայրում աշխատանքի հմտությունների զարգացում» խորագրով դասընթաց: Դասընթացի ընթացքում ուսանողները ծանոթացել են «Վիքիմեդիայի» միջավայրում աշխատելու սկզբունքներին և «Վիքիպեդիա» ազատ հանրագիտարանում պարբերաբար տեղադրվել են ԳՊՀ-ին ու անվանի համալսարանականներին վերաբերող տեղեկատվություն ու լուսանկարներ,
- ✓ Հանրային լրագրողների ակումբի հետ համատեղ կազմակերպվել է դասընթաց-ճամբար, որին մասնակցել են «Տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի հիմունքներ» դասընթացի ուսանողները և իրենց հեղինակած նյութերը տեղադրել են www.mynews.am կայքում,
- ✓ «Ազդարար» ամսագրի հիմնադրման 218-ամյակին նվիրված «Ազդարար» համահայկական խմբագրության կողմից կազմակերպված «Համահայկական հանդեսի Մամուլի Օսկար-2012» մրցանակաբաշխությունում ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժինն արժանացել է «Տարվա լավագույն ուսանողական մամուլ» անվանակարգին:

Համագործակցություն կրթական ոլորտի պետական և հասարակական

կազմակերպությունների հետ.

- ✓ Բարձրագույն ուսումնական հաստատությունների փորձնական վարկանիշավորում իրականացնելու նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարությանը տրամադրվել է տեղեկատվություն ԳՊՀ առկա էլեկտրոնային կրթական միջոցների, տեղեկատվական բնույթի հրատարակությունների և ԳՊՀ պաշտոնական ինտերնետային կայքի այցելուների թվի վերաբերյալ:
- ✓ ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվող «Մեր մեծերը» ծրագրի վերաբերյալ շրջաբերականներ են ուղարկվել համապատասխան ֆակուլտետներ և ֆակուլտետներից ստացված միջոցառումների ժամանակացույցն հիմք ընդունելով՝ քայլեր են ձեռնարկվել նշված միջոցառումների կազմակերպման և պատշաճ լուսաբանման ուղղությամբ,
- ✓ Ապահովվել է ԳՊՀ ուսանողների մասնակցությունը ՀՀ սփյուռքի նախարարության կողմից կազմակերպվող «Հայաստանի գործուն նշանակալի ավանդի համար» համահայկական մրցանակաբաշխությանը,
- ✓ ՀՀ կրթության և գիտության նախարարությանն է ներկայացվել երիտասարդական խորհրդարանում ԳՊՀ ներկայացուցիչ ուսանողի փաստաթղթերի փաթեթը:
- ✓ Շարունակվում է համագործակցությունը ՀՀ պաշտպանության նախարարության 2-րդ բանակային կորպուսի հետ,
- ✓ Հաշվետու ժամանակահատվածում պարբերաբար այցեր են կազմակերպվել 2-րդ բանակային կորպուսի զորամասեր, ինչպես նաև սպայական ու զինվորական անձնակազմի ներկայացուցիչներ են հյուրընկալվել ԳՊՀ-ում: «Նամակ զինվորին» և «Ասույթ զինվորին» ակցիաների շրջանակում ԳՊՀ ուսանողները նամակներ ու ասույթներ են գրել իրենց զինծառայող ընկերներին, որոնք ԳՊՀ պատվիրակությունը հանձնել է 2-րդ բանակային կորպուսի զորամասերում ծառայող զինվորներին:
- ✓ Ձևավորվել է համագործակցություն Հայ եկեղեցու երիտասարդաց միավորման հետ, որի արդյունքում բուհի կողմից աջակցություն է ցուցաբերվել Հայ եկեղեցու երիտասարդաց միավորման կանոնադրության նշակման աշխատանքներին, ինչի առիթով միավորման կողմից արժանացել ենք շնորհակալագրի,
- ✓ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի, Հայաստանի Հանրապետության ոստիկանության և «Իրավական հետազոտությունների ազգային կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ ԳՊՀ-ում կազմակերպվել է «Հայաստանի մարզերում համայնքային ոստիկանության կայացմանը նպաստող ոստիկանություն-ուսանող գործակցությունը» թեմայով սեմինար, որին մասնակցում էին ԳՊՀ ուսանողներ և ՀՀ ոստիկանության մարզային վարչության ներկայացուցիչներ,

- ✓ «Ապագայի մանդատ» երիտասարդական հասարակական կազմակերպության հետ համատեղ կազմակերպվել է «ՄԻԱՎ-ի կանխարգելումը միգրանտ ընտանիքների, երիտասարդների շրջանում» խորագրով սեմինար-քննարկում,
- ✓ «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հետ համատեղ Գավառի «Փոքրիկ իշխան» երեխաների սոցիալական կենտրոն հաճախող սաների համար կազմակերպվել է լրագրության ակնարկային դասախոսություններ,
- ✓ «Բազե-2012» և «Բազե-2013» համահայկական երիտասարդական հավաքներին ԳՊՀ ուսանողների մասնակցությունն ապահովելու և ԳՊՀ թիմերի հավուր պատշաճի ներկայանալու համար աշխատանքներ են տարվել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հետ,
- ✓ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հայտարարած կրթաթոշակների մրցույթում ապահովվել է ԳՊՀ ուսանողների ակտիվ մասնակցությունը: Արդյունքում հաղթող ճանաչվեցին ԳՊՀ տարբեր ֆակուլտետների 24 ուսանողներ,
- ✓ «Թրփանճեան ընտանեկան» և «Ազեան» հիմնադրամների կրթաթոշակների մրցույթի վերաբերյալ հայտարարության մասին տեղեկացվել են ԳՊՀ ուսանողները, և կազմակերպվել է նրանց հանդիպումը հիմնադրամների ներկայացուցիչների հետ, ապահովվել է ուսանողների մասնակցությունը հիմնադրամների հայտարարած մրցույթին: Հաղթող են ճանաչվել ԳՊՀ 30 ուսանողներ,
- ✓ Հայ կրթական հիմնարկության 2012-2013 ուսումնական տարվա ուսման վարձավճարների և կրթաթոշակների վերաբերյալ հայտարարության մասին տեղեկացվել են ԳՊՀ ուսանողները, և կազմակերպվել է նրանց մասնակցությունը հիմնադրամի հայտարարած մրցույթին: Հաղթող են ճանաչվել ԳՊՀ 4 ուսանողներ,
- ✓ «ՎիվաՍել-USU» ընկերության հայտարարած կրթաթոշակների մրցույթում ապահովվել է ԳՊՀ առավել թվով ուսանողների մասնակցություն: Հաղթող ճանաչվեցին ԳՊՀ տարբեր ֆակուլտետների 27 ուսանողներ:
- ✓ «Օրանժ Հայաստան» հիմնադրամի հայտարարած կրթաթոշակների մրցույթում ապահովվել է ԳՊՀ ուսանողների մասնակցությունը: Հաղթող ճանաչվեցին ԳՊՀ տարբեր ֆակուլտետների 8 ուսանողներ:

Դիմորդների հետ տարվող աշխատանքներ

- ✓ Հաշվետու ժամահանահատվածում բաժինը կազմակերպել է «Ես սիրում եմ իմ երկիրը» խորագրով աշակերտական շարադրությունների մրցույթ:
- ✓ ՀՀ Գեղարքունիքի մարզի գրեթե բոլոր դպրոցներից աշակերտներ մասնակցել են մրցույթին և մրցութային հանձնաժողովի կողմից արդյունքներն ամփոփելուց հետո կազմակերպվել է պարզևների հանձնման արարողությունը,

- ✓ «Դասը վարում են համալսարանականները» ծրագրի շրջանակներում ԳՊՀ դասախոսական կազմն այցելել է մարզի ավագ դպրոցներ և վարել թեմատիկ դասախոսություններ և պատասխանել աշակերտներին հետաքրքրող հարցերին,
- ✓ «Վորլդ Վիժն Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության աջակցությամբ տպագրվել է «ԳՊՀ դիմորդի ուղեցույցը», որի էլեկտրոնային տարբերակը տեղադրվել ԳՊՀ պաշտոնական ինտերնետային կայքում:
- ✓ «Դասը վարում են համալսարանականները» ծրագրի շրջանակում Գեղարքունիքի մարզի դպրոցներ այցելած համալսարանականները ուղեցույցը բաժանել են մարզի ավարտական դասարանի աշակերտներին:

Շրջանավարտների միության և կարիերայի կենտրոնի հետ կապված աշխատանքներ

- ✓ Նախագծվել և մշակվել է Շրջանավարտների միության և կարիերայի կենտրոնի կայքը (www.career.gsu.am), որում ներկայացված է շրջանավարտների առցանց բազա՝ որոնման ու դասակարգման բազմազան հնարավորություններով: Մշտապես կատարվել են շրջանավարտների առցանց բազայի համալրման աշխատանքներ (ներկայումս կայքում առկա են ավելի քան 70 շրջանավարտի տվյալներ),
- ✓ ԳՊՀ ֆակուլտետների հետ համագործակցության արդյունքում համալրվել է ԳՊՀ շրջանավարտների բազան,
- ✓ Կայքում կարևոր նշանակություն ունի «Հղումներ» բաժինը, որտեղ տեղադրված են աշխատանք առաջարկող կայքերի հասցեները,
- ✓ Բուհի շրջանավարտների հետ առցանց քննարկումներ կազմակերպելու նպատակով «Facebook» սոցիալական ցանցում ստեղծված համապատասխան հատվածամասում (<https://www.facebook.com/groups/373163172745612/>) պարբերաբար տեղադրվում են աշխատանքի ընդունման վերաբերյալ հայտարարություններ, օգտակար հղումներ և անցկացվում են քննարկումներ,
- ✓ Բուհ-գործատու կապն ամրապնդելու նպատակով կազմվել է հավանական գործատուների ցուցակը, որոնց հետ համագործակցության պայմանավորվածություն է ձեռք բերվել,
- ✓ Կազմվել է շրջանավարտների գրանցման հարցաթերթիկ, որոնք լրացնում են ԳՊՀ շրջանավարտները, ինչպես նաև բակալավրի և մագիստրատուրայի ավարտական կուրսերի ուսանողները,
- ✓ Մասնագիտական և նորարարական, գիտական նյութերի, նորությունների թափուր աշխատատեղերի և ՀՀ աշխատաշուկայի, կրթաթոշակային ծրագրերի, մասնագիտական վերապատրաստումների, տարատեսակ մրցութային ծրագրերի և այլնի վերաբերյալ նորությունների միջոցով նկատելի են դարձել շրջանավարտների ակտիվությունը և

նրանց ձգտումը՝ ընդգրկվելու ԳՊՀ «Շրջանավարտների միության և կարիերայի կենտրոնին»:

**ԳՊՀ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ
2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՉԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

Ժամանակակից տեղեկատվական հասարակությունում ցանկացած կազմակերպության արդյունավետ գործունեության հիմնական գրավականներից մեկը հանրության շրջանում դրական կարծիք ձևավորելը և այդ կարծիքը պահպանելն է:

ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի զարգացման հայեցակարգում ներառված են այն գերակա խնդիրները, որոնք արդի գիտակրթական հաստատությունների գործունեության անօտարելի բաղադրամասն են կազմում: ԳՊՀ-ն, լինելով գիտակրթական կարևոր հաստատություն, հանրային կապերը և լրատվությունը պետք է ուղղի ոչ միայն իր հեղինակության բարձրացմանը, այլև գիտելիքի ու կրթության հանրայնացմանը:

Համալսարանի հանրային կապերի արդյունավետ իրականացումը ենթադրում է համալսարանական բոլոր ստորաբաժանումների ակտիվ մասնակցություն, ներդաշնակ և համակարգված աշխատանք: Հանրային կապերի խնդիրները, առնչվելով համալսարանի աշխատակիցների և ուսանողների իրավունքներին և ազատություններին (մամուլում կարծիք հայտնելու իրավունք, արտաքին շփումների ազատություն և այլն), միաժամանակ նրանցից պահանջում են նաև դրսևորել համալսարանական (կորպորատիվ) համերաշխություն և փոխադարձ հարգանք, համալսարանի հանրային կապերի խնդիրների ըմբռնում և համագործակցություն համապատասխան կառույցների հետ:

Համալսարանի հանրային կապերի աշխատանքների իրականացման գործընթացում էապես կարևորվում է ուսանողների ներգրավվածությունը համապատասխան աշխատանքներին, որը կարող է կազմակերպվել ինչպես սահմանված կրթական գործընթացների, այնպես էլ կամավոր աշխատանքների և պրակտիկաների շրջանակներում:

Հանրային կապերի գործողություններն ուղղված են համալսարանի առջև ծառայած մի շարք խնդիրների լուծմանը.

- ✓ Համալսարանի հեղինակության (դրական իմիջի) ձևավորում և պահպանում,
- ✓ Համալսարանի գործունեության հրապարակայնության ու թափանցիկության ապահովում,
- ✓ Ներհամալսարանական տեղեկատվական հաղորդակցության ապահովում,
- ✓ Ներհամալսարանական (կորպորատիվ) մշակույթի և ավանդույթների ձևավորում ու զարգացում,

- ✓ Համալսարանի՝ որպես կարևորագույն կրթական, գիտական, մշակութային և հասարակական առաջատար կառույցի, առաքելության արդյունավետ և տեսանելի իրականացում,
- ✓ Համալսարանի գործունեության վերաբերյալ հանրային կարծիքի մասին ճշգրիտ տեղեկատվության ապահովում և աջակցություն բուհի սոցիալական կորպորատիվ պատասխանատվության ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

2013-2014 ուսումնական տարվա ընթացքում նախատեսում ենք իրականացնել հետևյալ աշխատանքներն՝ ըստ ոլորտների.

- ✓ Աշխատանքներ կատարել համալսարանի մասին դրական հասարակական կարծիքի ու բարձր վարկանիշի ձևավորման ուղղությամբ՝ ներհամալսարանական ընթացակարգերի, աշխատառճի, ներքին էթիկական նորմերի, վարվելակերպի և այլ խնդիրների վերաբերյալ մեթոդական ուղեցույցերի մշակմանն ու ներդրման և այլ աշխատանքների միջոցով,
- ✓ ԳՊՀ մասին պատրաստել տեսանյութեր ու աուդիոնյութեր և ապահովել դրանց տարածումը,
- ✓ Պատրաստել ԳՊՀ ֆակուլտետներն ու ուսանողական կառույցները ներկայացնող տեղեկատվական թերթիկներ (հայերեն և անգլերեն),
- ✓ Կազմակերպել մամուլի ասուլիսներ, ինչպես նաև թեմատիկ քննարկումներ լրատվամիջոցների բազմաթիվ աշխատակիցների հետ՝ ԳՊՀ 20-ամյակի շրջանակում,
- ✓ Աշխատանքներ իրականացնել ԳՊՀ խորհրդանշանները (օրհներգ, ֆակուլտետային տարբերանշաններ) մշակելու և մասսայականացնելու ուղղությամբ,
- ✓ Մշակել ԳՊՀ ձևաթղթերի նոր տարբերակներ և հրատարակել «ԳՊՀ ձևաթղթերի օգտագործման ուղեցույցը»,
- ✓ Կազմակերպել կայքում տեղեկատվության օպերատիվ տեղադրումը, առցանց հետադարձ կապի ապահովումը,
- ✓ Մշակել և վերլուծել էլեկտրոնային փոստով ստացված նամակները, ԳՊՀ գիտխորհրդին ներկայացնել ամփոփ զեկուցում մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ,
- ✓ Նկարահանել Գավառի պետական համալսարանին վերաբերող նոր ֆիլմեր երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն,
- ✓ Քանակական և որակական վերլուծության ենթարկել ԳՊՀ-ին վերաբերող բոլոր հրապարակումները, հեռուստատեսային և ռադիո նյութերը, լրատվական գործակալությունների և ինտերնետային պարբերականների անդրադարձերը,
- ✓ Անցկացնել ԳՊՀ արտաքին վարկանիշի հետազոտություն,

- ✓ Անցկացել ԳՊՀ արտաքին իմիջի վերաբերյալ Գեղարքունիքի մարզի բնակչության պատկերացումների բացահայտմանն ուղղված հեռախոսային հարցման մեթոդով հետազոտություն: Հետազոտությունը կունենա շարունակական բնույթ և կանցկացվի վեց ամիսը մեկ անգամ,
- ✓ Անցկացնել ԳՊՀ ներքին իմիջի հետազոտություն,
- ✓ ԳՊՀ ուսանողների շրջանում անցկացնել հարցում՝ մատուցվող կրթական ծրագրերի և դասավանդման որակի վերաբերյալ:

ԳՊՀ հանրային կապերի ուղղությամբ իրականացված ծրագրերի վերաբերյալ թվային տվյալներ

Գործունեության ոլորտները	2011-2012 թթ.	2012-2013 թթ.
www.gsu.am կայքի նորություններ	138	190
www.gsu.am կայքի այցելուների քանակը (այցելություններ, դիտումներ)	82889/24402	117759/67246
infogsu@mail.ru, info@gsu.am (հայերեն, ռուսերեն, անգլերեն) հարցերի քանակը (բոլոր հարցերին տրվել են պատասխաններ)	392	643
Տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցներում ԳՊՀ-ին վերաբերող հրապարակված նյութերի քանակը	72	83
Լուսանկարահանված միջոցառումներ /լուսանկարների քանակը	153/4690	174/6197
«Գեղամա» հեռուստաընկերության «Լուրեր» լրատվական ծրագրով եթեր հեռարձակված ԳՊՀ-ին վերաբերող տեսանյութերի քանակը և տեսանկարահանման տևողությունը (րոպեներով)	28/88	37/95.16
ԳՊՀ-ին վերաբերող գովազդային տեսանյութերի քանակը և տեսանկարահանման տևողությունը (րոպեներով)	3/40	5/45.97
«Գեղամա» հեռուստաընկերությամբ «Համալսարանական ժամ» հաղորդաշարի շրջանակում եթեր հեռարձակված տեսանյութերի քանակը և տեսանկարահանման տևողությունը (րոպեներով)	24/515	21/467.27
«Գեղամա» հեռուստաընկերությամբ «Համալսարանական ժամ. դասը վարում է ԳՊՀ պրոֆեսորը» հաղորդաշարի շրջանակում եթեր հեռարձակված տեսանյութերի քանակը և տեսանկարահանման տևողությունը (րոպեներով)	-	7/135.12

Վեբոմետրիքսի (Webometrics Ranking of World Unisversities) հրապարակած բուհական համաշխարհային վարկանշային աղյուսակի բաղադրիչների դինամիկան

Դասակարգիչ	2012 հունվար	2012 հուլիս	2013 հունվար	2013 հուլիս
Ներկայություն Presence	17802	16531	16092	15543
Ազդեցություն Impact	16124	17019	17996	17668
Թափանցիկություն Openness	12138	9809	10219	11906
Գերազանցություն Excellence	9576	5230	5203	5080

*Պ. Օ. Սուրադյան՝
ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի վարիչ*

ԳՊՀ-ՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ-ում.

- ✓ Վերամշակվել է www.gsu.am կայքի «Նորություններ» մոդուլը, ստեղծվել է նորությունների արխիվի հատված՝ արագ որոնման և դասակարգման հնարավորություններով, մշակվել է նորությունների ընդլայնված որոնման համակարգ, որը թույլ է տալիս որոնում կազմակերպել նորությունների տեքստի ցանկացած բառի մակադակով ամբողջ արխիվի տիրույթում,
- ✓ «Նորություններ» հատվածում տեղադրվել է նորությունների ընթերցման վիճակագրության հաշվիչ,
- ✓ Կայքը գրանցվել է «Hotlog» վիճակագրությունների առցանց համակարգում, որը հնարավորություն է տալիս առցանց ծանոթանալու կայքի այցելությունների, որոնման հարցումների, այլ կայքերից այցելությունների և բազմաթիվ այլ վիճակագրական ցուցանիշներին (վիճակագրության հղումը հասանելի է կայքի գլխավոր էջում՝ <http://hotlog.ru/viewstat?id=2251047>),
- ✓ Կատարվել է անգլերեն և ռուսերեն էջերի, նորությունների համալրում,
- ✓ Իրականացվել են կայքի դիզայնի ձևափոխություններ, մասնավորապես, կիրառվել են հղումների, կոճակների, ընտրացանկերի, հետնապատկերների, տառաչափերի, տառաձևերի նոր ոճեր,
- ✓ Ստեղծվել է «Դիմորդի անկյուն» էջը, և հղումը տեղադրվել է գլխավոր էջում,
- ✓ Կատարվել են կայքի CMS (Content Management System)՝ ադմինիստրատորի տիրույթի բովանդակության ղեկավարման համակարգի զարգացման և կայքի SEO-ի՝ ա-

- ռաջխաղացում որոնողական համակարգերում ու SMO-ի ուղղությամբ աշխատանքներ,
- ✓ Ապահովվել է ԳՊՀ պաշտոնական կայքում նորությունների, հայտարարությունների, լուսանկարներ բաժնի օպերատիվ թարմացումը (համալրվել է լուսանկարների 29 բաժին - <http://gsu.am/index.php?go=patkerasrah>),
 - ✓ Կատարվել են տեսանյութերի ֆայլերի ձևաչափերի ձևափոխություններ և տեղադրում ԳՊՀ պաշտոնական Youtube տեսահարթակում (համալրվել է 71 տեսանյութ), իրականացվել է Youtube տեսահարթակի դիզայնի ձևափոխություն (<https://www.youtube.com/user/gsuadmin/featured>),
 - ✓ Հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի համապատասխան հանձնարարականը՝ բուհի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրվել են միջբուհական համաձայնագրերով նախատեսված կրթաթոշակների և ուսանողների շարժունությանը վերաբերող մրցույթների հայտարարությունները,
 - ✓ «Facebook» սոցիալական ցանցի Գավառի պետական համալսարանի էջը շարունակաբար թարմացվել է, ծավալվել են բազմաբովանդակ քննարկումներ: Ցանցում եղած խելամիտ առաջարկությունները քննարկվելուց հետո ստացել են համապատասխան լուծումներ,
 - ✓ Իրականացվել է ԳՊՀ կենտրոնական մասնաշենքի էլեկտրոնային էկրանի նյութերի համակարգչային մշակում, ամենօրյա օպերատիվ թարմացումների կազմակերպում (շնորհավորանքներ, հայտարարություններ) և շնորհավորանքների հղում էլեկտրոնային փոստի միջոցով,
 - ✓ Կատարվել է ԳՊՀ միջոցառումների համակարգչային տեխնիկայի սպասարկում, անհրաժեշտ նյութերի համակարգչային մշակում, համակարգչային տեխնիկայի և ծրագրային ապահովման սպասարկման հարցերում օժանդակության իրականացում ու խորհրդատվությունների տրամադրում ԳՊՀ աշխատակիցներին և ուսանողներին,
 - ✓ Իրականացվել են քննությունների նախապատրաստման և կազմակերպման աշխատանքներ «Examination-GSU» էլեկտրոնային քննական համակարգի միջոցով,
 - ✓ Նորագույն web տեխնոլոգիական լուծումների կիրառմամբ նախագծվել և մշակվել է ԳՊՀ ուսանողական պորտալ-կայք, որը համացանցում հասանելի է www.student.gsu.am հասցեով,
 - ✓ Կայքում ներկայացված են ուսանողական ինքնակառավարման մարմինները, գործող ակումբները և այլ կառույցները,
 - ✓ Կայքը բաղկացած է մոտ 50 էջից, ունի որոնման և հետադարձ կապի համակարգեր, տեսասրահ, կայքի քարտեզ, SMO գործիքների և www.gsu.am կայքի նորությունների ինտեգրվածություն,

- ✓ Մշակվել և ներդրվել է էլեկտրոնային ուսուցման գործընթացի կազմակերպման համար նախատեսված «E-learning GSU» էլեկտրոնային ուսուցման համակարգը (www.elearning.gsu.am), որում առարկաների ուսուցման փաթեթները սատարում են ցանկացած ֆայլի ձևաչափ,
- ✓ «E-learning GSU» համակարգի ծրագրային փաթեթի տեղադրման նպատակով համալսարանում առանձնացվել է սերվերային համակարգիչ, տեղադրվել սերվերային օպերացիոն համակարգ, web սերվերային ծրագրային ապահովում, կատարվել է ցանցի և սերվերի կարգաբերումներ, որի արդյունքում համալսարանն ապահովված է ռեալ ժամանակում աշխատող սերվերով, որի շնորհիվ էլ ապահովվում է «E-learning GSU» համակարգի հասանելիությունը,
- ✓ Մշակվել է «E-learning GSU» համակարգի տեխնիկական նկարագրությունը և տեղադրվել www.elearning.gsu.am կայքում,
- ✓ Կազմակերպվել է համակարգի շնորհանդես, իրականացվել են էլեկտրոնային ուսուցման և «E-learning GSU» միջավայրում աշխատելու վերաբերյալ սեմինար-խորհրդատվություններ, ապահովվել է ԳՊՀ աշխատակիցներին և դասախոսներին էլեկտրոնային ուսուցման փաթեթների ձևավորման գործում օժանդակություն և խորհրդատվություն,
- ✓ Կազմակերպվել է 2013 թ. ուսումնական տարում հեռակա ուսուցման ֆակուլտետում համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացը: Բոլոր խմբերի համար ստեղծվել են «Ուսանող» օգտատերի անվանական և խմբի վիրտուալ տիրույթները: Դասախոսների համար ստեղծվել են «Դասախոս» օգտատերի անվանական տիրույթները: Տեղադրվել են բոլոր խմբերի ուսումնական պլանները, ուսանողների ցանկերը, ինչպես նաև մասնագիտական ուսումնական տեսանյութեր: Համակարգի միջավայրում ստեղծվել են առարկաների ուսուցման փաթեթները: Տպված տարբերակով տրամադրվել են համակարգից օգվելու մուտքային տվյալների թերթիկները,
- ✓ «E-learning GSU» միջավայրում միասնական փաստաթղթաշրջանառության կազմակերպման նպատակով մշակվել են ուսուցման փաթեթների բաղկացուցիչ հանդիսացող ուսումնական փաստաթղթերի ձևանմուշային տարբերակները (առարկայի ծրագիր, քննական հարցաշարեր, անհատական և կուրսային աշխատանքների թեմաներ, ուսումնական պլան և այլն), որոնք ևս տեղադրվել են www.elearning.gsu.am կայքում,
- ✓ Մշակվել են «E-learning GSU» համակարգից օգտվելու դասախոսի և ուսանողի տեսաուղեցույցեր, որոնք տեղադրվել են www.gsu.am և www.elearning.gsu.am կայքերում (<http://gsu.am/?go=elearningpage>),
- ✓ www.elearning.gsu.am կայքում ստեղծվել են «Օգտվողի ուղեցույց», «Համակարգի փաստաթղթեր», «Օգտակար ռեսուրսներ» էջերը: «Օգտակար ռեսուրսներ» էջում տեղադրվել են «E-learning GSU» միջավայրում աշխատելու օժանդակության համար

- նախատեսված ծրագրեր և օգտակար կայքերի հղումներ (տեքստերի, ֆայլերի ձևաչափերի փոխարկիչներ և այլն),
- ✓ Մշակվել է «E-learning GSU» համակարգի կիրառման վերաբերյալ էլեկտրոնային հաղորդագրության տեքստը և «Դասախոս» օգտատերի մուտքային տվյալներով ուղարկվել դասախոսական կազմի էլեկտրոնային հասցեներին (մոտ 150 էլեկտրոնային հաղորդագրություն),
 - ✓ Ակտիվորեն գործածվել է էլեկտրոնային հաղորդագրություններով աշխատելու սկզբունքը: Կիրառության մեջ են դրվել elarning@gsu.am, webmaster@gsu.am էլեկտրոնային փոստերը, որոնց միջոցով կայքի և «E-learning GSU» համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացում կազմակերպվել է հաղորդագրությունների փոխանցումը, ադմինիստրատորին ուղարկված հարցումները, խորհրդատվությունների և ցուցումների տրամադրումը, հայտարարությունների, հաշվետվությունների, այցելությունների վիճակագրությունների տարածումը և հետադարձ կապը,
 - ✓ Կազմակերպվել է առկա ուսուցման 2013-2014 ուսումնական տարվա բակալավրիատի «E-learning GSU» համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացը: Բոլոր ամբիոններից հավաքագրվել են դասախոսների տվյալները, ստեղծվել միասնական տվյալների բազա, «E-learning GSU» համակարգում համալրվել են դասախոսների անվանական տիրույթները,
 - ✓ Հավաքագրված ուսումնական պլանների հիման վրա մշակվել են առարկաների կողավորման աղյուսակները և կազմակերպել համակարգում առարկաների տիրույթների ստեղծման գործընթացը: Բոլոր խմբերի համար ստեղծվել են «Ուսանող» օգտատերի անվանական և խմբի վիրտուալ տիրույթները: Սահմանվել է «Կուրսդեկ» օգտվողի դերը և տրվել յուրաքանչյուր խմբի տիրույթի ղեկավարման հնարավորություն: Տպված տարբերակով տրամադրվել են համակարգից օգվելու մուտքային տվյալների թերթիկները:

2013-2014 ուսումնական տարվա ընթացքում նախատեսում ենք իրականացնել հետևյալ աշխատանքներն՝ ըստ ոլորտների.

- ✓ Web դիզայներական նորագույն լուծումներին համահունչ www.gsu.am կայքի համար ամբողջովին նոր դիզայնի նախագծում և մշակում,
- ✓ www.gsu.am կայքի նոր տարբերակում նորությունների, հայտարարությունների բաժանորդագրման հնարավորությունների ստեղծում,
- ✓ Նորությունների ինտեգրում ԳՊՀ բոլոր ենթադոմենային կայքէջերում,
- ✓ Կայքերի CMS ադմինիստրատորի բովանդակության կառավարման համակարգերի կատարելագործում,


- ✓ www.gsu.am կայքի նոր տարբերակում որոնման համակարգերում առաջխաղացման նպատակով SEO միջոցների և էջերի կառուցվածքում համապատասխան փոփոխությունների, կոդերի և գրաֆիկայի հնարավոր օպտիմիզացիայի կազմակերպում,
- ✓ ԳՊՀ բոլոր կայքերի՝ www.gsu.am, www.student.gsu.am, www.phone.gsu.am, www.career.gsu.am, www.elearning.gsu.am սպասարկում, անգլերեն և ռուսերեն էջերի պարբերական համալրումներ, ֆեյսբուքյան էջի և «Youtube» տեսահարթակի համալրում և սպասարկում,
- ✓ «Վիքիպեդիա ազատ հանրագիտարան» համացանցային տիրույթում ԳՊՀ-ի մասին էջերի ստեղծում (<http://hy.wikipedia.org>),
- ✓ Էլեկտրոնային էկրանի նյութերի նոր ոճի համակարգչային մշակում և համալրում,
- ✓ Նախատեսվում է ուսումնասիրել «E-learning GSU» համակարգի հենքով էլեկտրոնային գրադարան ստեղծելու հնարավորությունները և աշխատանքներ իրականացնել ԳՊՀ էլեկտրոնային գրադարանի ստեղծման ուղղությամբ,
- ✓ Ապահովել «E-learning GSU» համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընացի պարբերաբար իրականացումը (ուսումնական պլանների հիման վրա թարմացումների, փոփոխությունների կազմակերպում),
- ✓ «E-learning GSU» համակարգի կատարելագործում (գլխավոր էջի նոր դիզայն, անվտանգությանն ուղղված ծրագրային միջոցների ներդնում, էջերի համալրում, վեբինարների և թեստավորման անցկացման հնարավորությունների ուսումնասիրում և ինտեգրում, նոր ծրագրային մոդուլների մշակում),
- ✓ Սեմինար-խորհրդատվությունների կազմակերպում (տեսաուղեցույցերի, մեթոդական ձեռնարկների մշակում, հարց և պատասխան առցանց քննարկումների տիրույթի կազմակերպում, դասախոսական և վարչական աշխատակազմին օժանդակում էլեկտրոնային ուսուցման փաթեթների մշակման հարցերում),
- ✓ «E-learning GSU» այցելությունների հաշվետվությունների կատարելագործում (այցելությունների պարբերական հաշվետվություններ, այցելության վիճակագրության հայտանիշների բազմազանության ապահովում):

«E-learning GSU» համակարգի ինֆորմացիոն ապահովման վերաբերյալ թվային տվյալներ

«E-learning GSU» տիրույթ	Ժամանակահատվածը	
	07.06.2013թ.	31.08.2013թ.
«Ուսանող» օգտատերի անվանական տիրույթ	29 (հեռակա)	70 (առկա)
«Դասախոս» օգտատերի անվանական տիրույթ	90	150
«Առարկա» ուսուցման փաթեթների տիրույթ	175 (հեռակա)	667 (առկա- բակալավրիատ)


«E-learning GSU» համակարգի վերաբերյալ վիճակագրական տվյալներ

Ամսաթիվ	Այցելություն	Ամսաթիվ	Այցելություն	Ամսաթիվ	Այցելություն
01.06.2013	138	09.06.2013	1662	18.06.2013	834
02.06.2013	86	10.06.2013	1734	19.06.2013	1035
03.06.2013	177	11.06.2013	1384	20.06.2013	617
04.06.2013	225	12.06.2013	1109	21.06.2013	692
05.06.2013	277	13.06.2013	1028	22.06.2013	943
06.06.2013	687	14.06.2013	1295	23.06.2013	958
07.06.2013	733	15.06.2013	907	24.06.2013	534
08.06.2013	2603	16.06.2013	1366	25.06.2013	529



«E-learning GSU» համակարգի այցելությունների թվի բաշխումը՝ ըստ օգտատերերի (01.06.2013-25.06.2013 թթ.)

Օգտատեր	Այցելություն
Ուսանող	11121
Դասախոս/Լաբորանտ	9300
Ադմինիստրատոր	3017
Ընդհանուր այցելությունների թիվը	23438



Վ. Կ. Ավետիսյան՝
ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության
բաժնի ծրագրավորող

ԳՎՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ-ԳՈՐԾԱՏՈՒ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ,
ՇՐՋԱՆԱԿԱՐՏՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) հիմնադրվել է 2013 թվականին, «Տեմպուս-ԱՐԱՐԱՏ» ծրագրի շրջանակներում, որի նպատակն է ապահովել բարձրագույն կրթության համապատասխանությունը փոփոխվող աշխատաշուկայի պայմաններին: Կենտրոնի հիմնական նպատակն է առաջարկվող որակավորումների վերաբերյալ համալսարանի և աշխատաշուկայի միջև ակտիվ երկխոսության խթանումը, շրջանավարտների կարիերայի զարգացմանն աջակցությունը:

Համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կանոնադրությունը հաստատվել է 2013 թ.-ի սեպտեմբերի 28-ին Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի կողմից:

Կենտրոնի կազմում ընդգրկված են 4 աշխատակիցներ.

- Լիլիթ Թոռչյան՝ Կենտրոնի համակարգող,
- Սաթենիկ Սարգսյան՝ գործատուների հետ համագործակցության ապահովման մասնագետ,
- Հայարփի Մկրտչյան՝ շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման մասնագետ,
- Սիփան Արևշատյան՝ տեղեկատվական տեխնոլոգիաների գծով մասնագետ:

Կենտրոնի գործունեությունն ուղղված է ԳՊՀ ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը, երիտասարդ մասնագետների զբաղվածության խնդիրների լուծմանը և աշխատաշուկայի հետ համագործակցության ապահովմանը:

2012-2013 ուսումնական տարում Կենտրոնի ստեղծման ուղղությամբ ձեռնարկվել են հետևողական քայլեր, մշակվել են ուսանողների, շրջանավարտների և գործատուների համար նախատեսված հարցաթերթիկներ, հավաքագրվել և կազմվել է վերջին հինգ տարիների ԳՊՀ շրջանավարտների տվյալների բազա, մշակվել է գործողությունների ծրագիր:

Կենտրոնի գործունեությունը պատշաճ կերպով իրականացնելու համար հատկացվել է առանձին սենյակ, իսկ Կենտրոնի աշխատանքների համար անհրաժեշտ սարքավորումների ցանկը և դրանց տեխնիկական բնութագիրը ներկայացվել է ծրագրի համակարգողներին:

Ծրագրի մեկնարկից սկսած՝ յուրաքանչյուր ամիս տեղի են ունեցել աշխատանքային հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են Կենտրոնի գործունեությանը վերաբերող

հարցեր: Յուրաքանչյուր ամսվա վերջում կատարվել է աշխատանքի արդյունքների վերլուծություն:

ԳՊՀ համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի մասնագետները 2013 թվականի ապրիլի 8-12-ը մասնակցեցին Իտալիայի Պալերմո քաղաքում կազմակերպված վերապատրաստման դասընթացին, որտեղ քննարկվեցին համապատասխան մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման հարցերը, Կենտրոնի կայացման ուղղությամբ իրականացվելիք անհրաժեշտ գործողությունները, կառավարման սկզբունքները, համալսարանում կիրառվող հիմնական սկզբունքները, զարգացման գործիքների ներդրման ընթացքը, ներկայացվեց նմանատիպ կենտրոններ ունեցող մի շարք եվրոպական համալսարանների փորձը, կարևորվեց այս գործընթացում ուսանողների ներգրավվածության անհրաժեշտությունը:

2013 թվականի հունիսի 20-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում կայացած աշխատանքային հանդիպման ընթացքում ներկայացվեցին Գավառի պետական համալսարանի Համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կանոնադրությունը, աշխատակազմը և աշխատակիցների պաշտոնի նկարագրերը, աշխատանքային պարտականությունները:

Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների շրջանում կենտրոնի գործառույթների և խնդիրների վերաբերյալ հստակ պատկերացում ձևավորելու նպատակով 2013 թվականի հոկտեմբերի 17-ին ԳՊՀ աշխատակիցներ Լիլիթ Թոռչյանի և Սաթենիկ Սարգսյանի կողմից ներկայացվեցին Պալերմոյում կայացած վերապատրաստման արդյունքները լուսաբանող շնորհանդեսներ:

**Լ. Գ. Թոռչյան`
ԳՊՀ համալսարան-գործատու
համագործակցության, շրջանավարտների և
կարիերայի կենտրոնի համակարգող**

ԳՊՀ ԱՐԻԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու տարում ԳՊՀ արհեստակցական միությունն իր կանոնադրական խնդիրներին համապատասխան շարունակում է սոցիալական ուղղվածության ծրագրերի իրականացումը՝ համալսարանի ուսանողներին և աշխատակիցներին աջակցելու նպատակով:

2012-2013 ուսումնական տարում արհեստակցական միությունը նյութական օգնություն է ցուցաբերել համալսարանի անապահով ուսանողներին:

Միաժամանակ, օժանդակություն են ստացել բուհի աշխատակիցները: Արհեստակցական միությունը իր միջոցներից ընդհանուր հաշվով տարվա ընթացքում օգնության կարգով համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին հատկացրել է 1 միլիոն 243 հազար դրամ:

Համալսարանի աշխատակիցների ժամանցը արդյունավետ անցկացնելու նպատակով գարնանը և ամռանը կազմակերպվել են էքսկուրսիաներ դեպի Սանահին, Օձուն, Հաղպատ, Գառնի և Գեղարդ:

Ապրիլ ամսին Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմը ուսանողների հետ համատեղ անցկացրել է «ԳՊՀ-ն ընդդեմ ցեղասպանության» միջոցառումների շարք, որի ընթացքում ուսանողները ոչ միայն իրենց հարգանքի տուրքն են մատուցել Մեծ եղեռնի զոհերի հիշատակին, այլև Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի շուրջ կատարել են ակտիվ ճանաչողական քարոզչական գործունեություն ՀՀ Գեղարքունիքի մարզի երիտասարդության և դպրոցականների շրջանում:

Համալսարանի աշխատակիցների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական շահերն ու իրավունքները ներկայացնելու ու պաշտպանելու նպատակով արհեստակցական միության և ԳՊՀ ռեկտորատի միջև կնքվել է համալսարանի կոլեկտիվ պայմանագիր:

2013 թվականի գարնանը կազմակերպվել են ֆակուլտետային սպորտային միջոցառումներ, ինչպես նաև համալսարանի մինի ֆուտբոլի առաջնություն, որոնց անցկացմանն աջակցել է ԳՊՀ արհեստակցական միությունը:

Արհեստակցական կազմակերպությունը իր կանոնադրական գործառույթներին համապատասխան՝ այսուհետ ևս հետամուտ կլինի համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին աջակցության ցուցաբերմանը, իր առջև դրված խնդիրների պատշաճ լուծմանը:

Լ. Գ. Սիրունյան՝
ԳՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահ

**ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի պետական համալսարանի ուսանողական ինքնակառավարման մարմինները՝ Ուսանողական գիտական ընկերությունը և Ուսանողական խորհուրդը, համակարգել են սովորողների տարբեր նախաձեռնությունները, ուսումնական և արտալսարանային ձեռնարկները, նպաստել ուսանողների իմացական, ստեղծագործական, կազմակերպական և հաղորդակցական կարողությունների զարգացմանը, համագործակցել հայաստանյան պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողական մարմինների և գիտակրթական ոլորտի հասարակական կազմակերպությունների հետ:

ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմինները թե՛ առկա և թե՛ հեռակա ֆակուլտետներում սովորող ուսանողների համար կազմակերպել են ուսանողական գիտաժողովներ, տարբեր թեմաներով քննարկումներ, սեմինարներ, ակնարկային դասախոսություններ, գիտական, տեղեկատվական, ճանաչողական և դաստիարակչական ուղղվածություն ունեցող բազմաթիվ միջոցառումներ, հանդես եկել տարբեր ակցիաներով և ֆլեշմոբերով:

Հատկանշական են «Ծրագրի նախագծում և կառավարում», «Նախապատրաստվում ենք անփոփոխ ատեստավորման քննություններին», «Մշակութային ցեղասպանություն» թեմաներով սեմինարները, գրքերի և ֆիլմերի կոլեկտիվ ընթերցումները, դիտումներն ու քննարկումները, հիշարժան օրերին և իրադարձություններին նվիրված բազմաթիվ նախաձեռնությունները և այլն:

2012 թվականի նոյեմբերի 20-21-ին Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի 6-րդ ընդհանուր ժողովի լիազումար նիստի շրջանակում Գավառի պետական համալսարանը դարձավ ասոցիացիայի անդամ:

ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահ Պայծառ Քոչարյանը Լեհաստանի Պոզդնան քաղաքում մասնակցեց ուսանողական ինքնակառավարման մարմինների փորձի փոխանակման ծրագրին, որի շրջանակում կազմակերպվել էին «Որակյալ կրթություն բոլորի համար. Որակի ապահովման համակարգ. Ուսանողի մոդել» ուսանողական հայեցակարգի նախագծի հասարակական լսումներ:

Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ ուսանողական խորհրդի անդամները մասնակցել են ՀՀ կրթության և գիտության նախարարության, Եվրոպայի խորհրդի և Եվրոպական ուսանողական միության ջանքերով կազմակերպված Բարձրագույն կրթության նախարարների Տարածաշրջանային համաժողովին, Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի 7-րդ ընդհանուր ժողովին, Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի կողմից կազմակերպված

«Ապագայի առաջնորդը: Երիտասարդական քաղաքականությունն այսօր և վաղը», «Սևանի ավազանի մաքրության պահպանում» թեմաներով սեմինարներին:

2012 թվականի դեկտեմբերի 20-ին Ուսանողական գիտական ընկերությունը Գավառի պետական համալսարանում կազմակերպել էր ուսանողական հանրապետական գիտաժողով՝ նվիրված Գավառի պետական համալսարանի հիմնադիր ռեկտոր, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ, Գավառի պատվավոր քաղաքացի, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 85-ամյակին:

Գիտաժողովի աշխատանքները կազմակերպվեցին 6 բաժանմունքներում: ԳՊՀ ուսանողական հանրապետական գիտաժողովի աշխատանքներին մասնակցեցին Երևանի պետական, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական, Հայաստանի պետական տնտեսագիտական և ագրարային համալսարանների ուսանողներ:

Գավառի պետական համալսարանի Ուսանողական հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածուն գտնվում է տպագրման փուլում:

Ապրիլի 26-ին Գավառի պետական համալսարանի ուսանողները մասնակցեցին Գյումրու Միքայել Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում տեղի ունեցած ուսանողական հանրապետական հերթական գիտաժողովին՝ ներկայացնելով զեկուցումներ համապատասխան բաժանմունքներում:

Գիտաժողովի բաժանմունքների նախագահների կողմից ընտրված զեկույցները կտպագրվեն «Ուսանողական հանրապետական գիտաժողովի նյութեր» ժողովածուի հերթական համարում:

ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության և ԳՊՀ ուսանողական խորհրդի աշխատանքները նոր թափով կմեկնարկեն 2013-2014 ուսումնական տարում:

Ս. թ. սեպտեմբեր ամսվա ընթացքում կազմակերպվեցին ճանաչողական հանդիպումներ ԳՊՀ բոլոր ֆակուլտետների առաջին կուրսեցիների հետ, և նրանց ներկայացվեց ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեությունը:

Հանդիպման ընթացքում ՈւԳԸ և ՈւԽ գործող կազմերն անդրադարձան կառույցների պատմությանը, հիմնական նպատակներին ու խնդիրներին, գործառույթներին, հայաստանյան պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողական ինքնակառավարման մարմինների և գիտակրթական ոլորտի հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ուղղություններին, իրականացրած ծրագրերին և առաջիկա մեկ տարվա անելիքներին:

Կազմակերպվեց յուրօրինակ հաշվետու միջոցառում՝ նվիրված ԳՊՀ ՈւԳԸ գործող կազմի աշխատանքների 3-ամյակին:

Հաղորդման ընթացքում ցուցադրվեցին Ուսանողական գիտական ընկերության մասին պատմող գեղեցիկ տեսանյութեր, և ներկայացվեց հետաքրքիր ու բովանդակալից շնորհանդես:

Հոկտեմբերին Գավառի քաղաքային զբոսայգում Հայաստանի երիտասարդական հիմնադրամի Գեղարքունիքի մարզային կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպվեց «Տերյանական ընթերցումներ» խորագիրը կրող գրական ցերեկույթ՝ նվիրված գրող, հրապարակախոս, քնարերգու Վահան Տերյանին:

ԳՊՀ 4 ֆակուլտետներում կազմակերպվեցին «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղմրցաշարեր՝ նպատակ ունենալով խթանել ուսանողների տրամաբանելու, վերլուծելու, արագ կողմնորոշվելու հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Հոկտեմբեր ամսին հայտարարվեց «Գիտելիքը՝ ապագայի երաշխիք» խորագրով էսսեների մրցույթ, որի արդյունքներն ամփոփվեցին նոյեմբերի 10-ին՝ Գիտության միջազգային օրը:

Ձևավորված ավանդույթի համաձայն՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ԳՊՀ ստեղծագործող ուսանողների համար կկազմակերպվի «Ուսանողական աշուն» խորագիրը կրող մրցույթ-փառատոն:

Մրցույթը կանցկացվի երկու փուլով. առաջին փուլում ԳՊՀ դասախոսներից կազմված խմբագրական խորհուրդը կընտրի ներկայացված աշխատանքներից լավագույն 10-ը, որոնց հեղինակները հնարավորություն կստանան մասնակցելու երկրորդ փուլին: Երկրորդ փուլը կկազմակերպվի Պարույր Սևակի տուն-թանգարանում, որի ընթացքում մասնակիցներն իրենք կներկայացնեն իրենց ստեղծագործությունները, և ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի և թանգարանի տնօրինության ներկայացուցիչներից կազմված ժյուրին կընտրի լավագույն 3 աշխատանքները, որոնք կարժանանան պատվոգրերի և խրախուսական նվերների:

Նոյեմբերի 17-ին՝ Ուսանողների միջազգային օրը, ԳՊՀ Ուսանողական գիտական ընկերությունը կկազմակերպի տեսակոնֆերանս եվրոպական մի շարք բուհերում սովորող ԳՊՀ ուսանողների հետ, որի ընթացքում նրանք հեռուստականուրջի միջոցով կներկայացնեն իրենց բուհում կիրառվող կրթական չափանիշները, համակարգի վերաբերյալ եվրոպական կրթական փորձը, նրա առավելությունները և առանձնահատկությունները:

ԳՊՀ-ում կանցկացվի «Լավագույն ուսանող-2013» մրցանակաբաշխությունը:

ԳՊՀ ֆակուլտետներում կկազմակերպվեն համապատասխան մասնագիտությունների արդի հիմնախնդիրներին նվիրված քննարկումներ, որոնց շրջանակում կներկայացվեն նաև մագիստրոսական թեզերի շրջանակներում կատարված հետազոտությունները:

«Տեսակետների խաչմերուկում» խորագիրը կրող ծրագրի շրջանակում կկազմակերպվեն կլոր սեղան-քննարկումներ տարբեր թեմաներով:

Գավառի պետական համալսարանի բոլոր ֆակուլտետներում նախատեսվում է կազմակերպել հայ և արտասահմանյան հեղինակների գրքերի քննարկումներ, պատմահայրենասիրական ֆիլմերի դիտում-քննարկումներ:

2014 թվականի ընթացքում կկազմակերպվեն ներֆակուլտետային և համահամալսարանական գիտաժողովներ:

2014 թվականի ապրիլի 12-ին կկազմակերպվի Գավառի պետական համալսարանի 20-ամյակին նվիրված ուսանողական հանրապետական գիտաժողով:

Գ. Լ. Աթեյան՝

ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ,

Պ. Յ. Քոչարյան՝

ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահ

ԳՊՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկան 10 տարի շարունակ ծավալում է իր գործունեությունը՝ նպատակ ունենալով խորացնել իրավաբան ուսանողների մասնագիտական գիտելիքները, գործնական հմտությունները, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի բնակչությանը մատուցել անվճար իրավաբանական խորհրդատվություն:

Հաշվետու ժամանակահատվածը նշանավորվեց ԳՊՀ իրավաբանական կլինիկայի ին-նամյա գործունեության ամփոփմամբ, որի առիթով Իրավաբանական կլինիկայի հիմ-նադրման օրը՝ դեկտեմբերի 10-ին, կազմակերպվեց իրավաբան ուսանողների կլոր սեղան, քննարկում՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» խո-րագրով: Ձեկույցներով հանդես եկան Հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտության բաժնի 13 իրավաբան ուսանողներ: Գիտաժողովին մասնակցեցին ԳՊՀ դասախոսներ, ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության անդամներ:

ԳՊՀ-ի իրավաբանական կլինիկայում ուսանողներն ուսումնասիրում են կանանց և երե-խաների իրավունքներ, փաստաբանական գործունեության հմտություններ, սովորում են մասնագիտական էթիկայի նորմեր, ընդունում են հաճախորդների, յուրացնում են իրավաբա-նական գործերի կազմման և վարման կանոնները, կազմում հայցադիմումներ, նամակներ և այլ պաշտոնական փաստաթղթեր, ծանոթանում են իրավաբանական խորհրդատվության փուլերին: ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի «ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» բաժնի և բանասիրական ֆակուլտետի «անգլերեն լեզու և գրականություն» բաժնի մա-գիստրատուրայում սովորող ուսանողների կողմից Իրավաբանական կլինիկայի ուսանողների համար 2013 թվականի փետրվար ամսից կազմակերպվեցին անգլերեն լեզվի և համակարգ-չային հմտությունների անվճար դասընթացներ:

Ի թիվս այլ առարկաների՝ Իրավաբանական կլինիկայում ներդրվել է նաև «Իրավաբա-նական գրագրություն» դասընթացը, որի դասավանդմանն աջակցում է Ամերիկյան իրավա-բանների ընկերակցության հայաստանյան գրասենյակը՝ յուրաքանչյուր ուսանողի տրամադ-րելով նաև դասընթացի դասագիրք:

2012-2013 ուսումնական տարվա ընթացքում Իրավաբանական կլինիկայի ուսանողները ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վարչական և քաղաքացիական վերաքննիչ դատարաններում մասնակցել են դատաքննությունների՝ քննված գործերի մասին իրենց կարծիքը ներկայացնելով իրավաբանական կլինիկայի «Փաստաբանական հմտություններ» դասընթացին:

Հաշվետու ժամանակահատվածում Իրավաբանական կլինիկայում խորացված ուսուցում են անցել 18 ուսանողներ, որոնք 164 քաղաքացիների տրամադրել են անվճար իրավաբանական խորհրդատվություն:

2012 թվականի հոկտեմբեր - դեկտեմբեր ամիսներին Իրավաբանական կլինիկայի ուսանողները «Շրջիկ կլինիկա» ծրագրի շրջանակներում հանդիպումներ են կազմակերպել նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի ութ գյուղական համայնքներում, տեղի բնակիչներին հուզող բազմաթիվ իրավաբանական խնդիրների մասին տվել պարզաբանումներ, պետական մարմիններին ուղարկել համապատասխան հարցումներ և գրություններ:

ԳՊՀ իրավաբանական կլինիկայի բոլոր ուսանողները Ծաղկաձոր քաղաքում մասնակցել են Ամերիկյան իրավաբանների ընկերակցության կողմից կազմակերպված «Աշնանային դպրոց 2012»-ին՝ ստանալով վկայականներ, ակտիվ մասնակցության հավաստագրեր:

«Իրավունք բոլորի համար» ծրագրի շրջանակում Իրավաբանական կլինիկան 2012-2013 ուսումնական տարում «Քաղաքացիական իրավունք» և «Քաղաքացիական դատավարություն» թեմաներով կազմակերպել է բազմաթիվ քննարկումներ, սեմինարներ, որոնց մասնակցել են շուրջ 70 քաղաքացիներ:

2013 թվականի փետրվարի 10-ին մեկնարկեց Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկայի «Իրավունք բոլորի համար» ծրագրի նոր փուլը, որի շրջանակում Իրավաբանական կլինիկայի 16 ուսանողներ ՀՀ Գեղարքունիքի մարզի երեխաների համար կազմակերպեցին «Իրավունքի այբուբեն» մուլտաշարի դիտումներ և քննարկումներ: Առաջին հանդիպումը կազմակերպվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Առևտրաարդյունաբերական պալատի Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնի (ՇՊԱԿ) գրասենյակում: Հանդիպմանը մասնակցել են ավելի քան 30 դպրոցահասակ երեխաներ:

Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկան փորձում է լուծել կարևոր խնդիր՝ օժանդակելով սոցիալապես անապահով քաղաքացիներին, անվճար խորհրդատվություն մատուցելով առաջին հերթին կանանց և երեխաներին, ինչպես նաև անվճարունակ անձանց:

Հատկանշական է, որ իրավաբանական կլինիկան փորձում է սովորողների տեսական գիտելիքները հարստացնել պրակտիկ հմտություններով՝ ուսանողներին տալով անհրաժեշտ իմացություն՝ գործնական աշխատանքով զբաղվելու համար:

Իրավաբանական կլինիկայում դասավանդում են ժամանակակից դասավանդման մեթոդներին տիրապետող և տարբեր ծրագրերով արտերկրում վերապատրաստում անցած դասախոսներ:

Հաշվետու ժամանակաշրջանում Իրավաբանական կլինիկայում տարբեր թեմաներով սեմինարներ են անցկացրել ՄԱԿ-ի երևանյան գրասենյակի, ՄԱԿ-ի հայկական ասոցիացիայի և այլ կազմակերպությունների փորձառու իրավաբաններ ու փորձագետներ:

Իրավաբանական կլինիկայի դասախոսները մասնակցել են նաև ABA/ROLI հայաստանյան գրասենյակի, ՄԱԿ-ի փախստականների գործերով հանձնակատարի հայաստանյան գրասենյակի և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպված սեմինար-քննարկումների, որակավորման բարձրացման դասընթացների:

Իրավաբանական կլինիկան համագործակցում է «Գավառի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության, Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնի և Մարդու իրավունքների պաշտպանի մարզային գրասենյակների, ինչպես նաև «Գեղամա» հեռուստաընկերության «Վեկտոր» հաղորդաշարի հետ, որի հեռուստատեսային բանավեճերին, բաց քննարկումներին իրենց ակտիվ մասնակցությունն են ցուցաբերում նաև Իրավաբանական կլինիկայի դասախոսներն ու ուսանողները:

Իրավաբանական կլինիկան շարունակում է համագործակցել Հայաստանի իրավաբանական կլինիկաների, Գավառի մանկատան հետ և ակտիվորեն աջակցում է Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհրդի ու ուսանողական գիտական ընկերության աշխատանքներին:

Ա. Յ. Ապրոյան՝

ԳՊՀ իրավաբանական կլինիկայի համակարգող

ԳՊՀ ՏՆՏԵՍԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու ուսումնական տարում տնտեսատեխնիկական անձնակազմն իրականացրել է գործառույթների իրականացմանն ուղղված միջոցառումներ, ԳՊՀ ղեկավարությանն առաջարկություններ է ներկայացրել համալսարանի տնտեսական, տեխնիկական և սպասարկման ոլորտում ԳՊՀ-ում տարվող քաղաքականության և ծրագրերի վերաբերյալ, աջակցել է համալսարանի զարգացման ռազմավարական հայեցակարգի համապատասխան դրույթների իրականացմանը, ապահովել է ներհամալսարանական պատշաճ տնտեսվարումը, սպասարկել և արդիականացրել է համալսարանի համակարգչային տեխնիկան, ստորաբաժանումներում ապահովել է ինտերնետ կապը, ինչպես նաև իրականացրել է իր կանոնակարգով նախատեսված այլ գործառույթներ:

2012 թ. սեպտեմբերին հաստատվեց համալսարանի տնտեսական գործունեության տարեկան պլանը, որը ներառում էր 2012-2013 ուսումնական տարվա համար նախատեսված գործողությունների ժամանակացույցը:

Ըստ պլանի՝ կազմակերպվել է ավելի քան 20 աշխատանքային հանդիպում տնտեսատեխնիկական աշխատակիցների հետ, քննարկվել են աշխատանքային գործունեության հիմնական ուղղությունները, ծագած խնդիրները, դրանց օպերատիվ լուծման միջոցները:

Համալսարանի տնտեսատեխնիկական գործունեությունն իրականացվել է հետևյալ բաժինների ուժերով.

- ✓ Տեխնիկական և անվտանգության ապահովման բաժին (համակարգչային տեխնիկայի շահագործման մասնագետներ, ճարտարագետ, էլեկտրիկ, հյուսն, հնոցապաններ, սանտեխնիկ, բուժքույր և այլ մասնագետներ),
- ✓ Տնտեսական բաժին (պահեստապետ, գնորդ, պարետներ, տնտեսուհիներ, բանվոր),
- ✓ Սպասարկման բաժին (հսկիչներ, վարորդներ):

Աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով յուրաքանչյուր աշխատակցին առաջադրվող խնդիրները պարզաբանվել են, համակարգվել է նրանց կոլեկտիվ աշխատանքը:

2013 թվականի հունվարից 10-ից 20%-ով բարձրացվել են տնտեսատեխնիկական անձնակազմի աշխատավարձերը: Բոլոր աշխատակիցների աշխատավարձերը վճարվել են ժամանակին, կիրառվել են աշխատակիցների բարոյական և նյութական խրախուսման միջոցներ:

Հարկ է նշել, որ, համաձայն ԳՊՀ գնումների պլանի, անհրաժեշտ նյութերով և սարքերով ապահովվել են համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները՝ ուսումնագիտական գործընթացն անխափան ապահովելու նպատակով:

Հաշվետու ժամանակաշրջանում էապես բարելավվել է համալսարանի նյութատեխնիկական բազան: Սահմանված կարգով ձեռք է բերվել գրեմական պիտույքներ, ԳՊՀ գրադարանը համալրվել է նոր գրքերով:

Քիմիայի լաբորատորիայի համար գնվել է համապատասխան կահույք: Ձեռք են բերվել համակարգչային պահեստամասեր, տպիչներ, գրատախտակներ, մարզական գույք, ուսումնաօժանդակ նյութեր: Գնվել է նաև շինանյութ, տնտեսական ապրանքներ, գրադարանում տեղադրվել են հարմարավետ, նորացված դարակաշարեր:

Հետևողական աշխատանքներ են իրականացվել շենքերի ու շինությունների վերանորոգման ուղղությամբ: Ավարտվել են ԳՊՀ գլխավոր մասնաշենքի շքամուտքի հիմնանորոգման աշխատանքները, տեղադրվելու է նաև հսկիչ-անցակետ: Բոլոր մասնաշենքերում փոխվել են պատուհանները, ներքին հարդարման աշխատանքներ են տարվել ԳՊՀ բոլոր մասնաշենքերում:

ԳՊՀ բնագիտական և հումանիտար մասնագիտությունների մասնաշենքերի տանիքները մասնակի վերանորոգվել են:

ԳՊՀ տրանսպորտային միջոցներով իրականացվել են բազմաթիվ ուղերթներ, միաժամանակ, ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկայի, գիտաճանաչողական էքսկուրսիաների կազմակերպման, ռազմահայրենասիրական և մշակութային միջոցառումների, ինչպես նաև արտասահմանյան հյուրերի սպասարկման ու գիտաժողովների կազմակերպման համար օգտագործվել են այլ կազմակերպությունների կողմից վարձված տրանսպորտային միջոցները:

Պահպանության ծառայության աշխատանքների արդյունավետության բարձրացման և տեսահսկման ցանցի ընդլայնման նպատակով տեղադրվել է 12 նոր տեսախցիկ, հսկիչներին տրամադրվել են ժամանակակից տեխնիկական միջոցներ, ծառայողական հագուստ, բարելավվել է համագործակցությունը ՀՀ Գեղարքունիքի մարզի ոստիկանության համապատասխան ստորաբաժանման հետ:

ԳՊՀ մասնաշենքերում ամենօրյա աշխատանքներ են կատարվել նաև սանիտարական մաքրության պահպանման առումով: Դրան օժանդակել են ձեռք բերված նոր, արդյունավետ սարքավորումները:

Համալսարանի կանաչ տարածքներում կատարվել են ծառերի խնամքի, կանաչապատման և ծաղկազարդման ծավալուն աշխատանքներ՝ համագործակցելով «Օրիոս» բարեգործական կազմակերպության հետ:

Համալսարանի տնտեսատեխնիկական ծառայությունների ուժերով իրականացվել են նաև մասնաշենքերի ջեռուցման ցանցերի և ջրագծերի մասնակի վերանորոգումներ, վերանորոգվել են բազմաթիվ հանգույցներ ինչպես ջեռուցման, այնպես էլ ջրամատակարարման ցանցերում:

Համալսարանի կաթսայատան միջոցով ջեռուցվում են բոլոր մասնաշենքերը, այդ թվում՝ հանրակացարանը: Ջեռուցման ներքին ցանցի վերանորոգման աշխատանքներ են կատարվել բոլոր մասնաշենքերում և կաթսայատանը: Վերակառուցվել և վերանորոգվել են ջրատաքացուցիչ կաթսաները, նորացվել են ինքնաաշխատ (ավտոմատ) հսկման համակարգերը:

Համալսարան էլեկտրաէներգիայի անխափան մատակարարումն ապահովելու համար կատարվել են մեծ ծավալի աշխատանքներ ինչպես տրանսֆորմատորային ենթակայաններում, այնպես էլ բուհի մասնաշենքերում՝ լսարաններում, լաբորատորիաներում ու միջանցքներում նորմալ լուսավորություն ապահովելու և լաբորատոր դասընթացների անցկացման համար անհրաժեշտ սարքերն աշխատանքային բնականոն վիճակում պահելու ուղղությամբ:

2014 թվականի գարնանը կավարտվեն համալսարանի տարածքի լուսավորությունը պատշաճ կերպով ապահովելու ուղղությամբ տարվող աշխատանքները:

Չնայած համալսարանի հեռախոսային ներքին ցանցի և ավտոմատ հեռախոսակայանի բացակայությանը տարվա ընթացքում համալսարանի հեռախոսակապն աշխատել է անխափան, որն աշխատակիցների հետևողականության արդյունք է: Համալսարանում ներքին և արտաքին որակյալ ու անխափան կապն ապահովելու նպատակով 2013 թվականի տարեվերջին «Ռոստելեկոմ» կազմակերպության կողմից կներդրվեն նոր, ժամանակակից թվային ավտոմատ հեռախոսակայան և հեռախոսացանց:

Համալսարանի փաստաթղթաշրջանառությունը ներկայումս կազմակերպվում է «Mulberry» ծրագրով, որն ապահովում են ԳՊՀ տեխնիկայի շահագործման բաժնի աշխատակիցները:

Գավառի պետական համալսարանի տնտեսատեխնիկական գործունեության հիմնական ռազմավարական խնդիրներն են՝

1. բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութա-տեխնիկական պայմանները բոլոր մասնաշենքերում.

➤ իրականացնել մասնաշենքերի տեխնիկական փուլային փորձաքննություն, ձևավորել հիմնանորոգման և վերակառուցման տարբերակված պլան և ապահովել դրա իրականացումը,

➤ պլանավորել և իրականացնել լսարանային ֆոնդի ընթացիկ վիճակի պարբերական գնահատումներ, պարբերական վերակառուցումներ և վերանորոգումներ, արդիականացում և համապատասխանեցում կրթական ծրագրերի և ուսանողական համակազմի զարգացման խնդիրներին,

➤ ապահովել ուսումնական և օժանդակ տարածքների առավել արդյունավետ օգտագործումը՝ վերաբաշխելով տարածքները զարգացման նոր գերակայություններին համապատասխան,

➤ ապահովել լսարանային ֆոնդի պատշաճ կահավորում՝ այն հնարավորինս հագեցնելով ժամանակակից գույքով և նոր կրթական տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններ ընձեռող կազմտեխնիկայով և սարքավորումներով,

➤ շարունակել գործող կաթսայատան արդիականացման փուլային գործընթացը՝ նպատակ ունենալով խնայողական նոր ջրատաքացուցիչ կաթսաների տեղադրումը,

2. ապահովել համալսարանի ուսումնական և գիտական լաբորատոր բազայի զարգացումն ու արդիականացումը՝ կրթական և հետազոտական ծրագրերի արդի պահանջներին համապատասխան.

✓ գնահատել Համալսարանի ուսումնական լաբորատոր բազայի առկա վիճակը՝ ըստ կրթության և հետազոտությունների որակի ապահովման չափորոշիչների և մշակել առկա լաբորատոր բազայի արդիականացման հեռանկարային պլան՝ ըստ ֆակուլտետների,

✓ ապահովել լաբորատոր բազայի արդիականացման պլանների իրականացումն ըստ ճյուղային զարգացման հեռանկարային առաջնահերթությունների և տարիների՝ նախատեսելով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ համալսարանի և դոնոր կազմակերպությունների ներդրումներից,

✓ զարգացնելով և ընդլայնելով արտադրական գործընկեր կազմակերպությունների հետ հաջող համագործակցության առկա փորձը՝ ստեղծել նոր համատեղ հետազոտական լաբորատորիաներ և կենտրոններ՝ դրանք առաջին հերթին նպատակաուղղելով ուսանողության կրթական պահանջումների բավարարմանը (գործնական օրինակ է ԳՊՀ էկոլոգիայի գերազանցության կենտրոնը),

✓ նպաստել միջազգային դրամաշնորհների և ծրագրերի, ինչպես նաև առանձին գործատու և նվիրատու կազմակերպությունների ու անհատների միջոցներով, կրթական ծրագրերի զարգացման և նոր մասնագիտությունների պահանջներին համապատասխան, առկա լաբորատոր բազայի վերազինման և նորերի ստեղծման նախաձեռնություններին.

3. ապահովել ուսումնական գործընթացի կազմակերպման պահանջները բավարարող նյութատեխնիկական պայմաններ համալսարանի բոլոր ֆակուլտետներում:

❖ մշակել ԳՊՀ տարածքային պայմանների բարելավման նոր իրատեսական պլան և համալսարանում առկա ներքին և արտաքին բոլոր հնարավորություններն ուղղել դրա իրականացմանը՝ այդ նպատակով օգտագործելով համալսարանի և դոնոր կազմակերպությունների, անհատների ներդրումները,

❖ ստեղծել համալսարանի նյութատեխնիկական բազայի հետագա զարգացման լրացուցիչ հնարավորություններ՝ ապահովելու ուսումնական գործունեության չափորոշիչ պահանջների լիարժեք կատարումը,

❖ կրթական ծրագրերի և ուսանողական համակազմի զարգացումներին համահունչ՝ մշակել և իրականացնել ուսումնական տարածքների արդյունավետ օգտագործման հեռանկարային պլան՝ ներառելով նաև դեռևս չվերականգնված մասնաշենքի ապագայի հարցը,

❖ օգտագործել արտաքին հնարավորությունները՝ համալսարանի մարզական բացօթյա բազան վերակարգավորման համար,

❖ շարունակել զարգացնել համալսարանի նյութատեխնիկական պայմանների բարելավման գործընթացը՝ հիմնական շեշտը դնելով հիմնական գործընկեր կազմակերպության հետ ձևավորված սերտ համագործակցային կապերի ընձեռած հնարավորությունների վրա.

4. ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության ընդլայնումն ու որակական նոր մակարդակի ձեռքբերումը համալսարանի կրթական և գիտական բոլոր գործընթացներում:

➤ ստեղծել համալսարանի Տեղեկատվական անվտանգության ապահովման և սպասարկման բաժին,

➤ ապահովել տեխնիկապես զինված և հեռաուսուցման հնարավորությամբ լսարանների համալսարանական ցանցի ստեղծման, շարունակական ընդլայնման և տեխնիկական կատարելագործման գործընթաց,

➤ խթանել տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառումը համալսարանի հետազոտական ծրագրերում, նախագծերում և մագիստրոսական ավարտական աշխատանքներում:

Նախատեսված ռազմավարական խնդիրների լուծումը հնարավորություն կտա կրթական միջավայրում առավել արդյունավետ կազմակերպելու կրթական գործընթացը համալսարանի բոլոր ֆակուլտետներում:

Ա. Գ. Ապրոյան՝

ԳՊԴ տնտեսական գծով պրոռեկտոր

**2012-2013 ՈՒՍՈՒՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԳՎԱՆՈՒԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԻՇՎՐԺԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

01.09.2012թ. 20-ՐԴ ՀՈՒՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՄԵԿԸ ԳՊՀ-ՈՒՄ

Սեպտեմբերմեկյան ղողանջների ներքո ԳՊՀ-ում մեկնարկեց 2012-2013 ուսումնական տարին:

Ավանդույթի համաձայն՝ համալսարանում կազմակերպվել էր միջոցառում՝ նվիրված Գիտելիքի, գրի և դպրության օրվան:

Գիտելիքի օրվա կապակցությամբ Գավառի պետական համալսարանն իր հարկի ներքո ընդունեց նաև Գեղարքունիքի փոխմարզպետ պարոն Անդրանիկ Հակոբյանին, մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ պարոն Գարիկ Բադալյանին, Գավառի զինկոմիսար պարոն Խաժակ Սուչյանին և ՀՀ պաշտպանության նախարարության 2-րդ բանակային կորպուսի սպաների պատվիրակությանը:

02.09.2012 թ. ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՐԻ ՀԵՏ

ԳՊՀ-ում տեղի ունեցավ հանդիպում Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի փոխնախագահ Սարգիս Ասատրյանցի հետ:

Պարոն Ասատրյանցը ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմինների անդամներին ներկայացրեց ասոցիացիայի գործունեության հիմնական ուղղություններն ու նպատակները, իրականացրած ծրագրերն ու անելիքները, ֆինանսավորման հիմնական աղբյուրները և գործընկեր կազմակերպություններին:

02.09.2012թ. ՎԵՑ ՕՐ ՍԵՎԱՆԻ ՇՈՒՐՋ

Օգոստոսի 27-ից մինչև սեպտեմբերի 2-ը Գավառի պետական համալսարանի ուսանողները մասնակցեցին «Վեց օր Սևանի շուրջ» ծրագրի շրջանակում կազմակերպված վրանային ճամբարին:

Նախաձեռնության նպատակն էր համախմբել հայ երիտասարդներին մեկ գաղափարի շուրջ ճանաչել Գեղարքունիքի մարզի պատմամշակութային վայրերը և այցելել տարբեր զորամասեր՝ ավելի մոտիկից ծանոթանալու սահմանում ծառայող զինվորի առօրյային:

08.09.2012թ. ԲԱՑ ԴԱՍ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետը հյուրընկալել էր Կարմիրոյուղի թիվ երկու միջնակարգ դպրոցի ուսուցիչներին և աշակերտներին:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը և դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները միասին ուղևորվեցին Նորատուսի պատմամշակութային տարածք, որտեղ ԳՊՀ դասախոսները հյուրերին մանրամասն ներկայացրին խաչքարերը, տեղանքի պատմությունը, ծանոթացրին այդ տարածքում գտնվող պատմական հնագույն արժեքների հետ:

14.09.2012 թ. ՈՐԱԿԻ ԱՊԱՐՈՎՈՒՄԸ՝ ԺԱՄԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Գավառի պետական համալսարանում Համաշխարհային բանկի միջոցներով ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթական ծրագրերի կենտրոնի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակում տեղի ունեցավ խորհրդաժողովը՝ «Որակի հավաստման ազգային համակարգը, կրթական ծրագրերի որակի ներքին ապահովման կառուցակարգերը» թեմայով:

Խորհրդաժողովում անցկացրեց ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Նելլի Կուտուզյանը:

15.09.2012 թ. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎՃՈՌՈՇ ԳՈՐԾՈՆ

«Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրում կամ դրա հետագա բարելավում» ծրագրի շրջանակում կազմակերպվել էր վերապատրաստում՝ «Կրթական միջավայրի արդյունավետության գնահատումը» թեմայով:

Վերապատրաստումն անցկացրեց ԳՊՀ պրոռեկտոր, իրավաբանական գիտությունների թեկնածու Արսեն Ապրոյանը:

20.09.2012 թ. ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 21-ՐԴ ՏԱՐԵԴԱՐԾԻՆ

Գավառի պետական համալսարանի մեծ դահլիճում ԳՊՀ ուսանողական խորհուրդը կազմակերպել էր միջոցառում՝ նվիրված Հայաստանի անկախության 21-րդ տարեդարձին:

Միջոցառման մասնակիցները, հետադարձ հայացք նետելով հայ ժողովրդի անցած ուղուն, հանդիսատեսին ներկայացրին Հայաստանի նախորդ երկու հանրապետությունների պատմությունը, Անկախության հռչակագրի ընդունման և անկախության հանրաքվեի պատմական նշանակությունը: Միջոցառման ժամանակ հնչեցին Հայոց աշխարհին ու հայ ժողովրդին նվիրված բանաստեղծություններ և երգեր:

22.09.2012 թ. ԴՊՐՈՑ-ԲՈՒՀ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետը հյուրընկալել էր Գավառի թիվ յոթ միջնակարգ դպրոցի ավարտական դասարանի աշակերտներին՝ դպրոց-բուհ կապի ամրապնդման ծրագրի շրջանակում: Աշակերտներն իրենք էին հանդես եկել առաջարկությամբ՝ մեկ օր անցկացնել Գավառի պետական համալսարանում, լսել դասախոսություններ իրենց նախընտրած թեմաներով:

23.09.2012 թ. «ՕՐԱՆԺԻ» ԿԱՄԱՎՈՐԸ՝ ԳՊՀ-ՈՒՄ

«Օրանժ Հայաստան» ընկերությունը «Օրանժում կամավորների շաբաթ է» ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանում կազմակերպել էր «Համացանցից օգտվելու հմտություններ» թեմայով սեմինար:

Սեմինարն անցկացրեց «Օրանժ Հայաստան» ընկերության վաճառքի և մարքեթինգի բաժնի խորհրդատու Գևորգ Գևորգյանը:

29.09.2012 թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ «ՎԻՔԻՊԵԴԻԱ» ԽՄԲԱԳՐՈՂՆԵՐ

ԳՊՀ համակարգչային թիվ 1 լսարանում տեղի ունեցավ «Վիքիպեդիայի միջավայրում աշխատանքի հմտությունների զարգացում» խորագրով դասընթաց:

Տեղեկատվական դասընթացը կազմակերպվել էր «Վիքիպեդիա» ազատ հանրագիտարանը գործարկող «Վիքիմեդիա» հիմնադրամի «Վիքիպեդիա՝ դպրոցներ և համալսարաններ» ծրագրի շրջանակում:

Դասախոսությունը վարում էին «Վիքիմեդիա» հիմնադրամի երևանյան գրասենյակի ներկայացուցիչ Սուսաննա Մկրտչյանը և էլեկտրոնային գրադարանի ակտիվ խմբագրողներ Երջանիկ Գալստյանը և Արմեն Միրզոյանը:

Դասընթացի ընթացքում ուսանողները ծանոթացան «Վիքիմեդիայի» միջավայրում աշխատելու և այն համալրելու սկզբունքներին:

29.09.2012 թ. ԿԱՐԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՍ ԳՊՀ-ՈՒՄ

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի դեկանատի, ուսանողական խորհրդի և տնտեսագետների ակումբի նախաձեռնությամբ «Վորլդ Վիժն Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության ֆինանսավորմամբ բացվեց կարի արտադրամաս:

29.09.2012 թ. ԳԱՎԱՌԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ԲԱՑՎԵՑ ՀՈՒՇ-ԱՆԿՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԵԾ ՄԱՐԴԱՍԵՐԻՆ

Գավառի երկրագիտական թանգարանում «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրի շրջանակում բացվեց նոր ցուցահանդես՝ նվիրված ՀՀ վաստակավոր մանկավարժ, Գավառի պատվավոր քաղաքացի, Գավառի պետական համալսարանի հիմնադիր ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Խաչատուրի Հակոբյանի կյանքին ու գործունեությանը: Անկյունում ցուցադրված են Հրանտ Հակոբյանի անձնական իրերը, լուսանկարները, գրքերն ու ստացած պարգևները:

03.10.2012 թ. ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ՝ ԳՊՀ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Գավառի պետական համալսարանը հյուրընկալել էր «Ծաղկունքի բաց դպրոց» հիմնադրամի ուսուցչական և աշակերտական կոլեկտիվին:

Հանդիպման նպատակը վեցից յոթերորդ դասարանի աշակերտներին թանգարանի ցուցանմուշներին ծանոթացնելն էր՝ ելնելով դպրոցական «Հայոց պատմություն» և «Ընդհանուր պատմություն» առարկաների կրթական ծրագրերի թեմաներից:

03.10.2012 թ. ԵՈԱՏՈՆ ԳՊՀ-ՈՒՄ

Հոկտեմբերի 3-ին Գավառի պետական համալսարանի մեծ դահլիճում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1650-ամյակին, Գրագիտության միջազգային օրվան և ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության գործող կազմի աշխատանքի 2-ամյակին:

04.10.2012 թ. ԳՊՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲՈՒՅԵՐՈՒՄ

Հոկտեմբերի 4-ին Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ «Erasmus Mundus. Արտաքին համագործակցության պատուհան» ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունության ծրագրի շրջանակում արտերկրի բուհերում սովորած և հետազոտական աշխատանք կատարած ԳՊՀ ուսանողների և աշխատակիցների հաշվետվությունների ներկայացումը՝ շնորհանդեսների ձևով:

05.10.2012 թ. ԺՊՏԱՑԵՔ ԿՅԱՆՔԻՆ

Հոկտեմբերի 5-ին՝ ժպիտի միջազգային օրը, ԳՊՀ Ուսանողական գիտական ընկերության անդամները, շրջելով ԳՊՀ բոլոր կուրսերով և կառուցվածքային ստորաբաժանումներով, համալսարանականներին բաժանեցին «Ժպտացող փուչիկներ»՝ կոչ անելով հաճախակի ժպտալ և ժպիտով հաղթահարել բոլոր դժվարությունները:

06.10.2012թ. ԴՊՐՈՑ-ԲՈՒՅ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետը հյուրընկալել էր Գավառի թիվ յոթ և Կարմիրգյուղի թիվ մեկ միջնակարգ դպրոցների ավարտական դասարանների աշակերտներին:

Բուհի և դպրոցների միջև նախապես ձեռքբերված պայմանավորվածության համաձայն՝ աշակերտների համար մշակվել էր հատուկ ծրագիր, որի շրջանակում վերջիններս լսեցին դասախոսություններ իրենց նախընտրած թեմաներով:

06.10.2012 թ. ԳՊՀ ՈՒՄԱՆՈՂՆԵՐԸ՝ ԴԻՋԻԹԵՔ ԷՔՍՊՈՅՈՒՄ

Հոկտեմբերի 5-ին Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի «Երևան էքսպո» կենտրոնում տեղի ունեցավ Դիջիթեք էքսպո տեղեկատվական, հեռահաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ցուցահանդես:

Դիջիթեք էքսպո ցուցահանդեսին մասնակցում էին նաև Գավառի պետական համալսարանի «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա», «հաշվապահական հաշվառում» բաժինների տարբեր կուրսերի ուսանողներ:

Ցուցահանդեսի նպատակն էր ստեղծել բարենպաստ գործարար միջավայր, գործընկերային հարաբերություններ ՏՀՏ ընկերությունների և գործարար սպառողների միջև, հասարակությանը ներգրավել ՏՀՏ ոլորտ, հաստատել փոխշահավետ կապեր՝ ընդլայնելով միջազգային համագործակցների շրջանակը:

12.10.2012 թ. ՏԻԵԳԵՐՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՏԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐԻ

Գավառի պետական համալսարանում Օքսֆորդի համալսարանից հյուրընկալվել էր աստղաֆիզիկոս, գիտությունների դոկտոր Միհրան Վարդանյանը:

Պարոն Վարդանյանը ԳՊՀ դասախոսների և ուսանողների համար կարդաց դասախոսություն՝ «Տիեզերքի պատմությունը՝ ըստ ժամանակակից գիտական հետազոտությունների» թեմայով:

13.10.2012 թ. ԽՈՍՈՒՄ ԵՆՔ ԱՆԳԼԵՐԵՆ

Գավառի պետական համալսարանի Հրաչյա Աճառյանի անվան լսարանում «Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի առաջին կուրսեցիները՝ օտար լեզուների ամբիոնի դասախոս Աննա Բալագոյանի ղեկավարությամբ, կազմակերպել էին բաց դաս՝ նվիրված Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ թագավորության պատմությանը:

Ուսանողները շնորհանդեսով ներկայացրին Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի աշխարհագրական դիրքի, կառավարման համակարգի, բնակչության, մշակույթի, եղանակի, հրատարակվող թերթերի և ամսագրերի, սովորույթների և ավանդույթների մասին հետաքրքիր տեղեկություններ՝ դրանք համեմելով գեղեցիկ և բովանդակալից տեսանյութերով:

17.10.2012 թ. ԳՊՀ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆԸ՝ «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ»

Հոկտեմբերի 16-ին «Նոյյան տապան» լրատվական կենտրոնում տեղի ունեցավ «Ազդարար» համահայկական խմբագրության կողմից կազմակերպված «Համահայկական հանդեսի մամուլի օսկար-2012» մրցանակաբաշխությունը՝ նվիրված հայկական մամուլի օրվան և «Ազդարար» ամսագրի հիմնադրման 218-ամյակին:

Լավագույնների շարքում պատվո հարթակին կանգնեց նաև Գավառի պետական համալսարանը: Հաղթանակի «դափնիներից» մեկն էլ այսուհետ կգարոյարի ԳՊՀ հանրության հետ կապերի եւ լրատվության բաժնի աշխատասենյակը: Բաժինն արժանացավ «Տարվա լավագույն ուսանողական մամուլ» անվանակարգին:

24.10.2012 թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանողները հյուրընկալվել էին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան լեզվի և Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտներում:

Ապագա բանասերները ԳԱԱ-ում հանդիպեցին գիտության անվանի նվիրյալների հետ, լսեցին դասախոսություններ հայոց լեզվի և գրականության արդի հիմնախնդիրների վերաբերյալ:

24.10.2012 թ. ԲԱՆԱՎԻՃՈՒՄ ԵՆ ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետությունում սպառողների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրներին վերաբերող բանավեճ:

Բանավեճը կազմակերպվել էր «Ձինիշյան հիշատակի հիմնադրամի» և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից՝ «Ուսանողական քաղաքացիական ընդգրկվածություն. համալսարանական բանավեճի ակումբներ» ծրագրի շրջանակում: Ծրագրի նպատակն է ուսանողների մոտ զարգացնել խոսքի մշակույթ, հաղորդակցվելու և բանավիճելու հմտություններ:

**26.10.2012 թ. ԲԱՆԱՎԵՃ՝ «ՀՀ-ՈՒՄ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ
ՊԱՀՊԱՆՎՈՒՄ Է, ԹԵ՞ ՈՉ» ԹԵՄԱՅՈՎ**

Գավառի պետական համալսարանում «Ուսանողական քաղաքացիական ընդգրկվածություն. համալսարանական բանավեճի ակունքներ» ծրագրի շրջանակում տեղի ունեցավ բանավեճի եզրափակիչ փուլը՝ «ՀՀ-ում պատմամշակութային ժառանգությունը պահպանվո՞ւմ է, թե՞ ոչ» թեմայով:

Բանավեճի արդյունքում հաղթեց «դեմ» թիմը, որի ավագն էր ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի «Կենսաբանություն» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Աստղիկ Վիրաբյանը:

27.10.2012 թ. ՀԱԼԵՊԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲԸ՝ ԳՊՀ-ՈՒՄ

Գավառի պետական համալսարանը հյուրընկալել էր Հալեպի Կոմիտասի անվան կամերային նվագախմբին: Նվագախումբը ԳՊՀ-ում էր «Ֆրիտյոֆ Նանսեն» հիմնադրամի նախագահ պարոն Ֆելիքս Բախչինյանի ուղեկցությամբ: Համերգը նվիրված էր ՀՀ վաստակավոր մանկավարժ, Գավառի պատվավոր քաղաքացի, Գավառի պետական համալսարանի հիմնադիր ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 85-ամյակին:

**31.10.2012 թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱԿՈՒՄԲԻ ԴԱՍԸՆԹԱՑ-
ՃԱՄԲԱՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ**

Հոկտեմբերի 27-30-ը Գավառի պետական համալսարանի ուսանողները մասնակցեցին Հանրային լրագրողների ակումբի (ՀԼԱ) դասընթաց-ճամբարին:

Սեմինարին մասնակցում էին նաև Գեղարքունիքի, Արարատի, Կոտայքի մարզերի և Երևան քաղաքի ուսանողներ ու լրագրողներ:

Չորս օրերի ընթացքում ուսանողները հանդիպումներ ունեցան Հանրային լրագրության ակումբի ծրագրերի պատասխանատու Սառա Խոջոյանի, Հանրային ծրագրերի աշխատանքների համակարգող Նվարդ Հովհաննիսյանի, ՀԼԱ ծրագրերի համակարգող Լուսինե Ավագյանի, «ProMedia Gender» հասարակական կազմակերպության փոխնախագահ Լիլիթ Ջաքարյանի, կանանց շահերի պաշտպանությամբ զբաղվող մի շարք հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի (ԻԱԿ) իրավաբան Գևորգ Հայրապետյանի հետ:

**31.10.2012 թ. ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ
ԳԻՏԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԱՅՐԵՐ**

Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանողները հյուրընկալվել էին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտում:

ԳՊՀ ուսանողները եղան նաև Հայաստանի ազգային գրադարանում, որտեղ գրադարանի փոխտնօրեն Ռաֆիկ Ղազարյանի ուղեկցությամբ շրջեցին գրադարանի բաժիններով, եղան ընդհանուր և գիտական ընթերցասրահներում, ծանոթացան քարտադարանի աշխատանքներին:

ԳՊՀ ուսանողներն այցելեցին նաև Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, որտեղ մեծ հետաքրքրությամբ դիտեցին հայոց ձեռագրերի և մատյանների հնագույն օրինակների ցուցադրությունը:

**03.11.2012 թ. ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ «ERASMUS MUNDUS. TEMPO» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ**

Հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 2-ը Ուկրաինայի Հանրապետության Դոնեցկ քաղաքում տեղի ունեցավ «ERASMUS MUNDUS. TEMPO» միջազգային ծրագրերի առաջին աշխատանքային հանդիպումը:

Ծրագրի համակարգողն է Պորտուգալիայի Լիսաբոնի տեխնիկական համալսարանը:

Գավառի պետական համալսարանը ներկայացնում էր ԳՊՀ պրոռեկտոր, իրավաբանական գիտությունների թեկնածու Արսեն Ապրոյանը:

04.11.2012 թ. «ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ»

Նոյեմբերի 3-ին Երևան քաղաքում մեկնարկեց Շվեյցարիայի կառավարության կողմից ֆինանսավորվող «Մարդկանց առևտուրը կանխելուն ուղղված կրթություն Հայաստանում, Վրաստանում և Ադրբեյջանում» տարածաշրջանային ծրագրի երկրորդ փուլը:

Ծրագրի նպատակն էր անդրկովկասյան երեք հանրապետություններում թրաֆիքինգի վերաբերյալ թեմայի ընդգրկումը բուհական ծրագրերում, ապագա մանկավարժների իրազեկվածության բարձրացումը և բուհերում թրաֆիքինգի դասավանդման մեթոդաբանության ուսուցումը:

Ծրագրին մասնակցեց նաև Գավառի պետական համալսարանի պատվիրակությունը՝ ԳՊՀ պրոռեկտոր Արսեն Ապրոյանը, ԳՊՀ իրավաբանական կլինիկայի դասախոս Վարդան Շանոյանը և ԳՊՀ դասախոս Արևիկ Աֆրիկյանը:

**15.11.2012 թ. ԳԻՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
15.11.2013 ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի մագիստրատուրայի և բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների համար կազմակերպվել էր գիտական սեմինար:

Սեմինարը վարում էր ՀՀ ֆինանսների նախարարության մակրոտնտեսական քաղաքականության վարչության դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների կորդինացման բաժնի պետ, ԳՊՀ դասախոս, տնտեսագիտության թեկնածու Վահրամ Ջանվելյանը:

Սեմինարի նպատակն էր ուսանողներին ներկայացնել մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պատրաստման սկզբունքները, գիտական հետազոտության մեթոդները:

17.11.2012 թ. ՄԱՍՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍ ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԵՏ

Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի նիստերի դահլիճում կազմակերպվեց մամուլի ասուլիս ՀՀ սփյուռքի նախարար, ԳՊՀ խորհրդի նախագահ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանուշ Հակոբյանի հետ:

Ասուլիսին մասնակցում էին ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, «Տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի հիմունքներ» դասընթացի մասնակիցներ և «Իրավագիտություն» բաժնի մագիստրատուրայի ուսանողներ:

17.11.2012 թ. ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՍԻՔԻՐԱԽՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետում տեղի ունեցավ գիտական սեմինար՝ «Սիբիրյան խոց կամ սիբիրախտ» թեմայով:

Սեմինարը վարում էր ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դասախոս, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Անահիտ Մարգարյանը: Վերջինս բովանդակալից շնորհանդեսով ուսանողներին ներկայացրեց սիբիրախտով վարակվելու հնարավոր ճանապարհները, սիբիրախտի դեմ պայքարի միջոցներն ու ախտանշանները: Դասը հեռարձակվեց Գեղարքունիքի մարզի «Գեղամա» հեռուստաընկերությամբ՝ «Համալսարանական ժամ» ծրագրի շրջանակում:

17.11.2012 թ. ՍՈՑԻՈԼՈԳԻԱՆ՝ ՈՐՊԵՍ ԶԱՐԳԱՑՈՂ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողների համար դասախոսություն կարդացին Ռուսաստանի Դաշնության Սանկտ Պետերբուրգի պետական ինժեներա-տնտեսագիտական համալսարանի սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ Ալեքսանդր Հակոբյանը և նույն ամբիոնի ասպիրանտ Եվգենի Հակոբյանը:

Բանախոսներն ապագա տնտեսագետների համար կարդացին «Սոցիոլոգիան՝ որպես առաջադեմ և զարգացող գիտություն» և «Ժողովրդագրական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում» թեմաներով դասախոսություն:

18.11.2012 թ. ԾԱՌԸ՝ ԿՅԱՆՔԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

ԳՊՀ աշխատակիցները և ուսանողները համախմբվել էին մեկ գործի շուրջ՝ տնկել հնարավորինս շատ ծառեր և ամբողջ տարվա ընթացքում խնամել կյանքի խորհրդանիշ հանդիսացող ծառերը:

Համալսարանի բնագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների հարակից տարածքում տնկվեցին «Օրիոս» բնապահպանական տեղեկատվական կենտրոնի կողմից տրված 100 հացենի և բոխի:

21.11.2012 թ. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գավառի պետական համալսարանի ուսանողները «Միգրացիա և թրաֆիքինգ. ռեսուրս կենտրոն» ծրագրի իրավաբան Նոննա Մարգարյանի և ծրագրի համակարգող Եվա Գալստյանի հետ համատեղ քննարկեցին դարի վտանգներից մեկի՝ թրաֆիքինգի վերաբերյալ հարցեր:

Սեմինարը կազմակերպվել էր «Հայկական Կարիտաս» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Միգրացիա և թրաֆիքինգ. ռեսուրս կենտրոն» ծրագրի շրջանակում:

22.11.2012 թ. ԳՊՀ-Ն ԱՆԴԱՄԱԳՐՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻՆ

Նոյեմբերի 20-21-ը Երևանի պետական տնտեսագիտական համալսարանում տեղի ունեցավ Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի 6-րդ ընդհանուր ժողովի լիազումար նիստը:

Նիստին մասնակցում էր նաև Գավառի պետական համալսարանի Ռեսանողական խորհրդի նախագահ Պայծառ Քոչարյանը: Նա լսարանին ներկայացրեց ԳՊՀ ՈւԽ գործունեության վերաբերյալ շնորհանդես:

Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի փոխնախագահ Սարգիս Ասատրյանցը քվեարկման ներկայացրեց Գավառի պետական համալսարանի՝ Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիային անդամակցության հայտը:

Համաժողովականների միաձայն որոշմամբ ԳՊՀ-ն դարձավ ասոցիացիայի անդամ:

23.11.2012 թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՐԻՆ ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ՏԵՂ

Նոյեմբերի 20-21-ը Գավառի պետական համալսարանի բանավեճի թիմի ուսանողները «Քաղաքացիական ներգրավվածություն. համալսարանական բանավեճի ակունքներ» ծրագրի շրջանակում կազմակերպել էին բանավեճ՝ «Հայաստանը պետք է ինտեգրվի Եվրամիությանը» թեմայով:

Գավառի պետական համալսարանի ուսանողական թիմը, որի կազմում էին ԳՊՀ ուսանողներ Աստղիկ Վիրաբյանը, Ռիմա Կոտուկյանը, Շողիկ Վիրաբյանը, Լևոն Արզումանյանը, Անի Հովեյանը և Գառնիկ Գափոյանը, հանդես եկավ «կողմ» դիրքորոշմամբ:

ԳՊՀ թիմը բանավեճերի հանրապետական եզրափակիչ փուլում զբաղեցրեց 2-րդ մրցանակային տեղը: Մասնակից համալսարանների ուսանողներին շնորհվեցին պատվոգրեր, իսկ առաջին և երկրորդ մրցանակային տեղ գրաված ուսանողները պարգևատրվեցին պատվոգրերով և մեդալներով:

25.11.2012 թ. ԳՊՀ «ՏԱՂԱՆԴԱՎՈՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ»

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի «ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» բաժնի ուսանողները մասնակցեցին «ՎիվաՍել-USU» ընկերության հայտարարած «Տաղանդավոր ուսանողներ» մրցույթին:

Նախագծի շրջանակում ընտրվել էին ՀՀ տարբեր բուհերի բակալավրիատի 4-րդ կուրսի և մագիստրատուրայի ուսանողներ, որոնք լրացրել էին «ՎիվաՍել-USU»-ի կողմից պատրաստված ինտելեկտուալ և մասնագիտական թեստեր, մասնակցել ընկերության Տեխնիկական և Տեղեկատվական համակարգերի վարչությունների մասնագետների հետ հարցազրույցներին:

Արդյունքում հայտ ներկայացրած ավելի քան 400 ուսանողներից ընտրվեցին 13 լավագույնները, որոնց թվում էին ԳՊՀ 3 ուսանողներ՝ Բնագիտական ֆակուլտետի «ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Վարազդատ Ավետիսյանը, նույն բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողներ Ռուստամ Նավոյանը և Արշակ Կոռյանը:

28.11.2012 թ. ԳՊՀ-Ն «TEMPUS IV. LaMANCHE» ԾՐԱԳՐԻ ԱՆՂԱՍ

ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանը նոյեմբերի 19-ից 23-ը Բուլղարիայի Հանրապետության Դոբրիչ քաղաքում մասնակցեց «Tempus IV. LaMANCHE» ծրագրի աշխատաժողովին, որի ընթացքում տեղի ունեցավ ծրագրի պաշտոնական բացումը և շնորհանդեսը: Քննարկվեցին ծրագրի իրականացման սկզբունքները, բարձրագույն կրթության համակարգում բարեփոխումների խթանման և իրականացման կառուցակարգերը, հաստատվեց ծրագրում նախա-

տեսված գործողությունների իրականացման ժամանակացույցը, որոշվեցին պատասխանատուները:

Միաժամանակ Բուլղարիայի Միջազգային համալսարանական քոլեջի ղեկավարության հետ բանակցության արդյունքում կնքվեց փոխըմբռնման հուշագիր Գավառի պետական համալսարանի և Միջազգային համալսարանական քոլեջի միջև, ձեռք բերվեց պայմանավորվածություն դասախոսների և ուսանողների փոխանակման, գիտաժողովների անցկացման, համատեղ այլ ծրագրերի իրականացման վերաբերյալ:

29.11.2012 թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂԸ՝ ՍԵՄԻՆԱՐԱՎԱՐ

Գավառի պետական համալսարանի Ուսանողական գիտական ընկերությունը ԳՊՀ ուսանողների համար կազմակերպել էր սեմինար՝ «Ծրագրի նախագծում և կառավարում» թեմայով:

Սեմինարը վարում էր ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի «ֆինանսներ» բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Գեղամ Աթեյանը:

Սեմինարին ներկա էին նաև «Նախաձեռնությունների և գործողությունների դաշտավայր» հասարակական կազմակերպության համայնքային սոցիալական աշխատակիցներ:

Ուսանող-սեմինարավարը լսարանին ներկայացրեց ծրագրի էությունը, աշխատանքների կազմակերպման ընթացակարգը, «Պակա»-ի մեթոդը, ծրագիրն իրականացնող խմբի անդամներից յուրաքանչյուրի անելիքներն ու պարտականությունները՝ ըստ նախապես մշակված ժամանակացույցի, ինչպես նաև անդրադարձավ բյուջե կազմելու գործընթացին:

30.11.2012 թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՈՒՅԻՆ՝ ԵՐՐՈՐԴ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

Նոյեմբերի 29-ին Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահում կայացավ «Մենք երգում ենք Առնո Բաբաջանյան» երրորդ հանրապետական ուսանողական երգի մրցույթ-փառատոնի հաղթողների շքահաներգը:

Մրցույթին մասնակցության հայտ էին ներկայացրել Հայաստանի Հանրապետության 22 բուհերի և քոլեջների ուսանողներ: Մրցույթն ընթացավ երեք ընտրական փուլով, որոնց շրջանակում 60 հայտատուներ երգեցին Առնո Բաբաջանյանի և հայ կոմպոզիտորների էստրադային երգերը:

Ժյուրիի կազմում էին ՀՀ ժողովրդական արտիստներ, կոմպոզիտորներ Երվանդ Երզնկյանը, Մարտին Վարդազարյանը, կոմպոզիտոր Սելիք Մավիսակալյանը, ՀՀ ժողովրդական արտիստ Ռաիսա Մկրտչյանը, որոնց անաչառ ընտրությամբ եզրափակիչ փուլ անցան 22 մասնակիցներ: Վերջիններիս թվում էր նաև Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Արփինե Խանդանյանը:

ԳՊՀ ուսանողուհին հանդես եկավ Առնո Բաբաջանյանի «Позави меня» երգով, որն արժանացավ լսարանի ջերմ ընդունելությանը:

Մրցույթ-փառատոնում Արփինե Խանդանյանը զբաղեցրեց երրորդ պատվավոր հորիզոնականը:

30.11.2012 թ. «ԶՐՀՈՐԻ ՄՈՏ» ԳՐՔԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ՖԻԼՄԻ ԴԻՏՈՒՄ

Գավառի պետական համալսարանի Ուսանողական գիտական ընկերությունը ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի «հայոց լեզու և գրականություն» բաժնի առաջին կուրսի ուսանողների համար նախաձեռնել էր գրքի քննարկում և ֆիլմի դիտում:

Քննարկման էր դրված հայ արձակագիր Ստեփան Զորյանի «Ջրհորի մոտ» պատմը-վածքը:

Քննարկման ժամանակ մասնակիցներն անդրադարձան գրվածքի պատմական հիմքին, հարցերի միջոցով բացահայտեցին նրանում արժարժված խնդիրները, հիմնական գաղա-փարները:

Գրքի քննարկմանը հաջորդեց «Ջրհորի մոտ» գրվածքի հիման վրա նկարահանված համանուն ֆիլմի դիտումը:

01.12.2012 թ. ԱՐԴԻ ՊՈՆԶԻԱՅԻ ՇՈՒՆՉԸ

Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի «հայոց լեզու և գրա-կանություն» բաժնի 4-րդ կուրսի ուսանողները՝ ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի շրջա-նավարտների միության նախագահ Արմինե Պետրոսյանի նախաձեռնությամբ, կազմակերպել էին արդի հայ և արտասահմանյան պոեզիայի քննարկում:

Ավարտական կուրսի ուսանողները լսարանին ներկայացրին ժամանակակից հայ և ար-տասահմանյան բանաստեղծներ Զենրիկ Էդոյանի, Զակրբ Մովսեսի, Դավիթ Զովհաննեսի, Զովհաննես Գրիգորյանի, Գրիշ Դավթյանի, Էդուարդ Զարենցի, Նշան Աբասյանի, Դենիզա Լևերտովի, Էմիլ Սիրոանի, Վյաչեսլավ Կուլպրիյանովի, Թոնի Քուրթսի, Վահե Գողելի, Ահմադ Շամլուի և այլոց ստեղծագործությունները:

01.12.2012 թ. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆՔ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը՝ տնտեսա-գիտական ֆակուլտետի դեկանատի հետ համատեղ, կազմակերպել էր ուսուցողական միջոցառում:

Նմանօրինակ նախաձեռնության նպատակն էր ուսանողներին նախապատրաստել ամ-փոփիչ ատեստավորման քննություններին, ինչպես նաև նրանց մոտ զարգացնել թիմային աշխատանքի հմտություններ:

Տնտեսագիտական ֆակուլտետի «ֆինանսներ» բաժնի 4-րդ կուրսի ուսանողները բա-ժանվել էին 4 խմբի: Բոլոր թիմերին նախապես տրվել էր մասնագիտական թեմաներով հար-ցաշար և որոշակի ժամանակահատված՝ քննարկմանը նախապատրաստվելու համար: Յուրաքանչյուր թիմի տրվեցին 6-ական հարցեր, որոնց ուսանողները նախապատրաստվեցին և պատասխանեցին 1 րոպեի ընթացքում: Միջոցառումն ունեցավ ուսուցողական նշա-նակություն:

09.12.2012 թ. ԳՊՀ-Ն ԱՆԴԱՍԱԿՑՈՒՄ Է «TEMPUS.ATHENA» ԾՐԱԳՐԻՆ

Գավառի պետական համալսարանն անդամակցում է Եվրոպական միության «TEMPUS.ATHENA. Կայուն և ինքնավար բարձրագույն կրթական համակարգերի խթանումը Արևելյան հարևանության տարածքում» ծրագրին:

Ծրագրի համակարգողն է Բրյուսելում գործող Եվրոպական համալսարանական ասո-ցիացիան:

«TEMPUS.ATHENA» ծրագրին անդամակցում են գործընկերներ Զայաստանից, Ուկրաինայից, Մոլդովայից, Պորտուգալիայից, Ֆինլանդիայից և Նիդեռլանդներից:

Դեկտեմբերի 6-8-ը ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանը մեկնեց գործուղման Բրյուսել՝ մասնակցելու ծրագրի մեկնարկային ժողովին:

Աշխատաժողովի ընթացքում տեղի ունեցավ ծրագրի պաշտոնական բացումը և շնորհանդեսը: Մասնակիցները ներկայացրին բուհերի կայունության և ինքնավարության ապահովման հիմքերն ու կառուցակարգերը, անդրադարձան նորմատիվ իրավական, ֆինանսական, կազմակերպական հիմնախնդիրներին:

Քննարկվեցին մինչև 2015 թվականը «TEMPUS.ATHENA» ծրագրի իրականացման սկզբունքներն ու փուլերը, հաստատվեցին ծրագրում նախատեսված գործողությունների իրականացման ժամանակացույցն ու պատասխանատուները:

12.12.2012 թ. ԳՊՀ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՆ ԻՆՆ ՏԱՐԵԿԱՆ Է

Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկան դարձավ 9-ը տարեկան:

Տարեդարձի կապակցությամբ ԳՊՀ իրավաբանական կլինիկան ԳՊՀ նիստերի դահլիճում կազմակերպել էր հաշվետու միջոցառում:

2012 թվականին ԳՊՀ իրավաբանական կլինիկա անդամագրված ուսանողները ներկայացրին իրենց երկամսյա գործունեության հաշվետվությունը:

12.12.2012 թ. LUDI LATINI

Գավառի պետական համալսարանում լատիներենի տոն էր:

ԳՊՀ Հրաչյա Աճառյանի անվան լսարանում «Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի առաջին կուրսեցիները՝ օտար լեզուների ամբիոնի դասախոս Նանա Ռափյանի ղեկավարությամբ, կազմակերպել էին բաց դաս՝ նվիրված լատիներենին:

Ուսանողները շնորհանդեսով ներկայացրին լատիներենի «կյանքի» պատմական համառոտ նկարագիրը՝ իրենց խոսքը համեմելով Ցիցերոնի, Լուցիուս Աննեոս Սենեկայի փիլիսոփայական մտքերով և ուսանելի ասույթներով: Լատիներեն և անգլերեն լեզուներով հնչեցին Գայուս Վալերիուս Կատալուսի բանաստեղծություններից:

Միջոցառման երկրորդ մասում ուսանողների միջև անցկացվեց մրցույթ-վիկտորինա:

13.12.2012 թ. ՆՈՐ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՆՈՐ ԴՊՐՈՑԻ ՀԱՍԱՐ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում տեղի ունեցավ հոբելյանական գիտաժողով՝ «Նոր ուսուցիչ՝ նոր դպրոցի համար, մանկավարժական կրթության բարեփոխման հեռանկարներ. տեսություն և պրակտիկա» խորագրով:

Գիտաժողովը նվիրված էր համալսարանի հիմնադրման 90-ամյակին:

Գիտաժողովին մասնակցեց և գիտական զեկուցումով հանդես եկավ Գավառի պետական համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր Ռուզաննա Հակոբյանը:

Տիկին Հակոբյանին շնորհվեց Մանկավարժական համալսարանի 90-ամյակի հոբելյանական մեդալ:

16.12.2012 թ. ՄԵԿՆԱՐԿԵՑ «ԱՐԱՐԱՏ» ԾՐԱԳԻՐԸ

Դեկտեմբերի 13-14-ը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում տեղի ունեցավ Տեմպուսի «Համալսարան - գործատու հայկական համակարգող գործակալու-

թյուն» («Արարատ») ծրագրի մեկնարկը, որին մասնակցում էին գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ Գերմանիայի, Իսպանիայի, Լատվիայի, Իտալիայի Սիցիլիայի և Պալերմոյի կրթական հաստատություններից, ինչպես նաև հայաստանյան բուհերից:

«Արարատը» ազգային եռամյա ծրագիր է՝ նպատակաուղղված համալսարան-գործատու կապերի ստեղծմանն ու ամրապնդմանը:

Գավառի պետական համալսարանը ներկայացնում էին ԳՊՀ պրոռեկտոր Արսեն Ապրոյանը և Բանասիրական ֆակուլտետի փոխդեկան, ԳՊՀ արտաքին կապերի պատասխանատու Մարինե Բադալյանը:

19.12.2012 թ. ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ. ԵՎՐՈՊԱՆ ՍԿՍՎՈՒՄ Է ԱՅՍՏԵՂԻՑ

Գավառի պետական համալսարանում հայտարարված էր եվրոպական ծրագրերի տեղեկատվական օր:

ԳՊՀ պրոռեկտոր, միջազգային ծրագրերի համակարգող, իրավաբանական գիտությունների թեկնածու Արսեն Ապրոյանը ներկայացրեց եվրոպական բուհերի համագործակցության ծրագրերի շնորհանդես:

20.12.2012 թ. ԳՊՀ-ՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑ ՈՒՄԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ ուսանողական հանրապետական գիտաժողով՝ նվիրված Գավառի պետական համալսարանի հիմնադիր ռեկտոր, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ, Գավառի պատվավոր քաղաքացի, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 85-ամյակին:

Գիտաժողովը նախաձեռնել էր Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը:

Գիտաժողովի աշխատանքները կազմակերպվեցին 6 բաժանմունքներում: ԳՊՀ ուսանողական հանրապետական գիտաժողովի աշխատանքներին մասնակցեցին Երևանի պետական, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական, Հայաստանի պետական տնտեսագիտական և Հայաստանի ագրարային համալսարանների ուսանողներ:

21.12.2012 թ. ԿԱՅԱՑԱՎ 15-ՐԴ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Գավառի պետական համալսարանում մեկնարկեցին 15-րդ հոբելյանական գիտաժողովի աշխատանքները:

Գիտաժողովը նվիրված էր Գավառի պետական համալսարանի հիմնադիր ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ, Գավառի պատվավոր քաղաքացի Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 85-ամյակին:

Լիագումար նիստում ելույթ ունեցան ԳՊՀ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Համլետ Ղաջոյանը և Բանասիրական ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Վիկտոր Կատվայանը՝ ներկայացնելով զեկուցումներ համապատասխանաբար «Հրանտ Խաչատուրի Հակոբյանի տեսական ժառանգության հարցի շուրջ» և «Տարբերակայնությունը՝ իբրև բարբառների կարևորագույն հատկանիշ» թեմաներով:

Գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին 5 բաժանմունքներում: ԳՊՀ հորեյանական գիտաժողովի աշխատանքներին մասնակցեցին Հայաստանի և Վրաստանի Հանրապետությունների գործընկեր բուհերի դասախոսներ և ուսանողներ:

22.12.2012 թ. ԳՊՐԾՆ Է ԱՆՄԱՐ...

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ համալսարանի հիմնադիր ռեկտոր Հրանտ Խաչատուրի Հակոբյանի կիսանդրու բացման արարողությունը՝ նվիրված պարոն Հակոբյանի ծննդյան 85-ամյակին:

Կիսանդրու բացման արարողությանը ներկա էին ՀՀ սփյուռքի նախարար, ԳՊՀ խորհրդի նախագահ Հրանուշ Հակոբյանը, ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը, Ազգային ժողովի պատգամավորներ, ռեկտորներ, Գեղարքունիքի մարզպետն ու մարզի մտավորականության ներկայացուցիչներ:

Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տեր Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը կատարեց կիսանդրու բացման արարողությունը:

Կիսանդրու բացման արարողությունից հետո ներկաները դիտեցին Հրանտ Հակոբյանի կյանքին ու գործունեությանը նվիրված տեսաֆիլմ: Հայաստանի Հանրապետության գիտական, կրթական ու մշակութային ոլորտի ներկայացուցիչները, նրա գործընկերները, հարազատներն ու ուսանողները հուշեր ներկայացրին բացառիկ անհատ, վաստակաշատ մանկավարժ, մարդկային բարձր արժանիքներով օժտված գիտնական ու դասախոս, ընտանիքի սիրող հայր ու հավատարիմ ընկեր Հրանտ Հակոբյանի մասին:

Գավառ քաղաքի ավագանու որոշմամբ համալսարանի հարակից փողոցն անվանակոչվեց Հրանտ Հակոբյանի անվամբ:

23.12.2012 թ. ԳՊՀ-ՈՒՄ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ...

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետն ունի գեղեցիկ ավանդույթներ: Մասնավորապես, ֆակուլտետի առաջին կուրսեցիները ուսանողական տոմսերը և ստուգման գրքույկները ստանում են հանդիսավոր կերպով՝ երդման արարողությամբ:

Այս անգամ նրանք իրենց ուսանողական կարգավիճակն հավաստող փաստաթղթերը ստացան ԳՊՀ հիմնադիր ռեկտոր Հրանտ Հակոբյանի նորաբաց կիսանդրու առջև:

23.01.2013 թ. ՁԻԱՐ՝ ՄԱՐԴԿԱՆՑ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՉԱՐԻՔ

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի (ՁԻԱՐ) վերաբերյալ սեմինար-քննարկում:

Սեմինարը կազմակերպվել էր «Հարավային Կովկասի երկրներում Ռուսաստանի Դաշնության ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ու ազդեցության նվազեցմանն ուղղված երկրների համագործակցություն» ծրագրի շրջանակում «Իրական աշխարհ, իրական մարդիկ» հասարակական կազմակերպության և «Վորլդ Վիժն Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից:

ՁԻԱՐ-ի կանխարգելման հասարակական կենտրոնի հոգեբանա-սոցիալական բաժնի վարիչ Մարինե Ասրյանը լսարանին ներկայացրեց ՄԻԱՎ-ՁԻԱՐ-ի փոխանցման ուղիների, կլինիկական ընթացքի, կանխարգելման, բուժման սկզբունքների վերաբերյալ տեղեկատվություն:

23.01.2013 թ. ՍԵՄԻՆԱՐ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ԳՊՀ-ՈՒՄ

Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկայում տեղի ունեցավ սեմինար-քննարկում՝ «Ընտրական իրավունքը ՀՀ-ում» թեմայով:

Սեմինարը կազմակերպվել էր Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA ROLI) հայաստանյան գրասենյակի և ԳՊՀ իրավաբանական կլինիկայի կողմից:

06.02.2013 թ. ԼԱՎԱԳՈՒՅՆԸ ՃԱՆԱԶՎԵՑ «ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ՎԱԽՃԱՆԸ»

Գավառի պետական համալսարանի ուսանողական ծրագրային թիմը «Քաղաքացիական երկխոսություն և գործնական քայլեր՝ հանուն փոփոխության» ծրագրի շրջանակում կազմակերպել էր ծրագրային թիմի անդամների կողմից մշակած ծրագրերի քննարկում:

Քննարկման էր դրված երեք ծրագիր՝ «Կարծրատիպերի վախճանը», «Բացահայտենք մեր ազգային դիմագիծն արտահայտող ավանդույթները, բացահայտենք ինքներս մեզ» և «Աղմկում է գետը, աղմկում է ներկան» խորագրերով, որոնք վերաբերում էին կարծրատիպերի հաղթահարմանը, Գավառագետի և շրջակա միջավայրի մաքրմանը և ավանդույթների պահպանմանը:

Ծրագրերի նախաձեռնող խմբերից յուրաքանչյուրը ներկայացրեց իր ծրագրի էությունը, իրականացման փուլերը, նպատակներն ու խնդիրները, դրանց լուծման հնարավոր ուղիները և ծրագրից ակնկալվող արդյունքները:

Ժյուրիի միաձայն որոշմամբ լավագույնը ճանաչվեց «Կարծրատիպերի վախճանը» ծրագիրը:

16.02.2013 թ. ԿԱՅԱՑԱՎ ԳՊՀ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի դահլիճում տեղի ունեցավ ԳՊՀ կառավարման բարձրագույն մարմնի՝ խորհրդի նիստը:

Խորհուրդը լսեց ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի հաշվետվությունը 2011-2012 ուսումնական տարվա ԳՊՀ գործունեության վերաբերյալ: Հաշվետվությունը ներկայացվեց ըստ Հարինգտոն Էմերսոնի «Արտադրողականության 12 սկզբունքները» աշխատության հիմնադրույթների:

Ներկայացվեցին 2011-2012 ուսումնական տարվա ընթացքում ԳՊՀ գործունեության հիմնական ուղղությունները:

Քննարկվեցին ուսումնական, մեթոդական, գիտահետազոտական, դաստիարակչական ոլորտներում բուհի հիմնական ձեռքբերումները, հանրապետական և միջազգային համագործակցության ծրագրերը, համալսարանի սոցիալական քաղաքականությունը, ուսանողների, շրջանավարտների և հանրության հետ տարվող աշխատանքները, ինչպես նաև տնտեսական գործունեությունը և կրթական ենթակառուցվածքների զարգացմանը միտված ձեռնարկները:

ԳՊՀ խորհուրդը հաստատեց ԳՊՀ գործունեության տարեկան հաշվետվությունը, ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի 2012թ.-ի կատարման հաշվետվությունը, ԳՊՀ 2012 թ. բյուջեի կատարման հաշվետվությունը և ԳՊՀ 2013 թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվը, ինչպես նաև ԳՊՀ 2013 թվականի հակակոռուպցիոն ծրագիրը:

16.02.2013 թ. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Գավառի պետական համալսարանում ակնարկային դասախոսություն կարդաց Գերմանիայի Բոխումի Ռուր համալսարանի պրոֆեսոր, ցեղասպանագետ Միհրան Դաբաղը: Պրոֆեսորն անդրադարձավ ցեղասպանության ծանր հետևանքներին, մշակութային ցեղասպանությանը, դրանց ճանաչման, դատապարտման ու կանխման ուղիներին:

21.02.2013 թ. ՍԵՄԻՆԱՐ-ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՆԻԱՅԻ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գավառի պետական համալսարանի «որակի ապահովման» բաժնի մասնագետ Արմինե Գրիգորյանը փետրվարի 20-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում մասնակցեց «Բոլոնիայի բարեփոխումները և ազգային որակավորումների շրջանակը» թեմայով սեմինար-խորհրդակցությանը:

21.02.2012 թ. ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՈՒՆ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆ Է

Մայրենի լեզվի տոնի առթիվ Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը հանդես եկավ գեղեցիկ նախաձեռնությամբ. ուսանողները պատրաստել էին խորհրդանշական փոքրիկ «մագաղաթներ»՝ պարուրված եռագույն թելերով, որոնք բովանդակում էին հայոց լեզվի մասին հայ և արտասահմանյան արվեստագետների, գրողների, լեզվաբանների խոսքեր, մայրենի լեզվի վերաբերյալ ասույթներ:

ԳՊՀ-ականները երթ կազմակերպեցին դեպի Գավառի կրթական, մշակութային հաստատություններ, Գեղարքունիքի մարզպետարան, որտեղ բաժանեցին «մագաղաթները»՝ հորդորելով նրանց անաղարտ պահել մայրենին և խոսել գրական հայերենով:

02.03.2013 թ. ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԸ՝ ՄԱՐԴ, ՔԱՂԱՔԱՑԻ, ԲԱՆԱՍՏԵՂԾ

Գավառի պետական համալսարանում կազմակերպվել էր ցերեկույթ՝ «Պարույր Սևակը՝ մարդ, քաղաքացի, բանաստեղծ» խորագրով:

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի «հայոց լեզու և գրականություն» բաժնի 4-րդ կուրսի ուսանողները ներկայացրին Պարույր Սևակի կյանքը, ստեղծագործությունները, հանդես եկան գեղեցիկ բանաստեղծական կատարումներով:

07.03.2013 թ. ՁՈՆ ՀԱՅ ՄԱՅՐԵՐԻՆ

Գավառի պետական համալսարանի կենտրոնական մասնաշենքի առաջին հարկում բացվեց ուսանողների ձեռարվեստի աշխատանքների ցուցահանդես՝ նվիրված Մայրության և գեղեցկության տոնին՝ «Ձոն հայ մայրերին» խորագրով:

Ցուցահանդեսը կազմակերպվել էր ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի «մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)» բաժնի առկա և հեռակա ուսուցման համակարգում սովորող առաջին և երկրորդ կուրսի ուսանողների և ԳՊՀ Նկարչական ստուդիայի ղեկավար, ԳՊՀ դասախոս Թամարա Կոտուկյանի ջանքերով:

09.03.2013 թ. ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության անդամները ռադիոհանգույցով շնորհավորեցին ԳՊՀ աշխատակցուհիներին և ուսանողուհիներին՝ Մայրության և գեղեցկության տոնի առթիվ, ապա շրջեցին ԳՊՀ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներով և կուրսերով՝ համալսարանականներին բաժանելով խորհրդանշական «ծաղիկներ», որոնց վրա գրված էին բարեմաղթանքներ:

Համալսարանում մեկնարկեց միջոցառումների շարք՝ նվիրված կանանց ու մայրերին:

15.03.2013 թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՍԸ

Այսօր Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ հերթական հաշվետու հանդիպումը Հայ օգնության ֆոնդի կրթական-գիտական ծրագրերի համակարգող Էդիկ Կարապետյանի և հիշյալ ծրագրերի համակարգողի օգնական Մանե Խաչատրյանի հետ:

Հանդիպման ընթացքում ամփոփվեցին ժիրայր Նիշանյանի անվան կրթաթոշակառուների 2012-2013 ուսումնական տարվա առաջին կիսամյակի առաջադիմության արդյունքները, և գերազանց առաջադիմություն ունեցող ուսանողներին հանձնվեցին շնորհակալագրեր:

16.03.2013 թ. ՀԱՐՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԸ՝ ՄԱՐԴ ԵՎ ԳԻՏՆԱԿԱՆ

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի «հայոց լեզու և գրականություն» բաժնի չորրորդ կուրսի ուսանողները՝ ԳՊՀ հայոց լեզվի ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Վարսիկ Ներսիսյանի ղեկավարությամբ, կազմակերպել էին հայ մեծանուն լեզվաբան Հրաչյա Աճառյանին նվիրված բաց դաս՝ «Աճառյանը՝ մարդ և գիտնական» խորագրով: Բաց դասը հետաքրքիր էր և ուսուցողական:

21.03.2013 թ. ԲԱՆԱԿԻՃՈՒՄ ԵՆՔ ՀԱՆՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկայի իրավերով և «Միավորված ազգերի կազմակերպության հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ մեկնարկեց «Բանավիճում ենք հանուն մարդու իրավունքների զարգացման» ծրագիրը, որն իրականացվում է Հայաստանում Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից՝ Հայաստանում Բրիտանական դեսպանատան ֆինանսական աջակցությամբ:

21.03.2013 թ. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ 21-ՐԴ ԴԱՐԻ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆ

Գավառի պետական համալսարանում կազմակերպվել էր բաց դաս-քննարկում՝ «Ապահովագրությունը՝ 21-րդ դարի հրամայական» թեմայով, որը վարում էր «Գարանտ Ինշուրանս» ապահովագրական ընկերության ներկայացուցիչ Մնացական Սարգսյանը:

Պարոն Սարգսյանը բովանդակալից շնորհանդեսի ձևով լսարանին ներկայացրեց ապահովագրական գործընթացի էությունը, Հայաստանի Հանրապետությունում դրա կայացման պատմությունը, ՀՀ ապահովագրական շուկայում «Գարանտ Ինշուրանսի» և, առհասարակ, ապահովագրական գործակալների դերը, ապահովագրության տեսակները, օրենսդրական և կազմակերպատիրավական հիմքերը:

23.03.2013 թ. ԱՇԽԱՐՀԻ ԽԻՂՃՐ

ԳՊՀ-ում հյուրընկալվել էր Հայաստանի Ֆրիտյոֆ Նանսենի հիմնադրամի հիմնադիր նախագահ Ֆելիքս Բախչինյանը, որի մասնակցությամբ էլ տեղի ունեցավ «Աշխարհի խիղճը» խորագիրը կրող ֆիլմի դիտում և քննարկում:

ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը պարզատրվեց Ֆրիտյոֆ Նանսենի ոսկե մեդալով:

30.03.2013 թ. «ԼԻՐ ԱՐՔԱՆ»՝ ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱԶՔԵՐՈՎ

Գավառի պետական համալսարանի բանասիրական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների համատեղ ջանքերի շնորհիվ կազմակերպվել էր ապագա բանասերների և իրավաբանների գրական հանդիպում:

Քննարկման առարկան Վիլյամ Շեքսպիրի «Լիր արքա» ողբերգությունն էր:

Գրական ցերեկույթը հեռարձակվեց ՀՀ Գեղարքունիքի մարզի «Գեղամա» հեռուստաընկերությամբ՝ «Համալսարանական ժամ» ծրագրի շրջանակում:

30.03.2013 թ. ՄԻԱՎ-Ը ԴԱՏԱՎԵՒՈՒ ԶԷ

Գավառի պետական համալսարանը հյուրընկալել էր «Ապագայի մանդատ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչներին:

Նրանք հանդես էին եկել նախաձեռնությամբ՝ կազմակերպելու սեմինար-քննարկում դարի չարիքներից մեկը համարվող հիվանդության՝ ՁԻԱՀ-ի վերաբերյալ, որը կրում էր «ՄԻԱՎ-ի կանխարգելումը միգրանտ ընտանիքների, երիտասարդների շրջանում» խորագիրը:

31.03.2013 թ. ՓՈՐՁԻ ՎՐԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դասախոսներ Աստղիկ Հովեյանը և Նարինե Թադևոսյանը «ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» բաժնի երրորդ կուրսում կազմակերպել էին բաց դաս՝ «Փորձի վրա ուսուցում» թեմայով:

Դասախոսությունն անցկացվեց գերմանական CEFE-ի՝ «Գիտելիքահեն տնտեսության կառուցում՝ ձեռնարկությունների ձևավորման ճանապարհով» մեթոդի կիրառմամբ:

05.04.2013 թ. ԳՊՀ-ՈՒՄ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Գավառի պետական համալսարանում ծառատունկ կազմակերպելը գեղեցիկ ավանդույթ է դարձել:

ԳՊՀ աշխատակիցները և ուսանողները համախմբվել էին մեկ գործի շուրջ՝ տնկել հնարավորինս շատ ծառեր:

Համալսարանի երեք մասնաշենքերի հարակից տարածքում տնկվեցին «Օրիուս» բնապահպանական տեղեկատվական կենտրոնի կողմից տրված 160 տնկիներ:

06.04.2013 թ. ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԸ ԳԱՎԱՌՈՒՄ

Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական, վարչական, ուսանողական համակազմի ներկայացուցիչները երթ կազմակերպեցին դեպի Գավառի Սուրբ Կարապետ եկեղեցի, որտեղ կատարվեց կանանց օրհնության կարգ:

Օրը խորհրդանշական էր այն առումով, որ ապրիլի 6-ը Սուրբ Կարապետի գլխատման օրն է: Այդ կապակցությամբ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հատուկ թույլտվությամբ Գավառի Սուրբ Կարապետ եկեղեցի էին տեղափոխվել Սուրբ Կարապետի մասունքները: Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տեր Մարկոս Եպիսկոպոս Հովհաննիսյանի ձեռամբ մատուցվեց սուրբ պատարագ:

06.04.2013 թ. ՍԻՐՈ ԹԵՎԵՐՈՎ

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի ուսանողները կազմակերպել էին ցերեկույթ՝ նվիրված հավերժական զգացման՝ սիրո գովերգմանը:

Միջոցառման ընթացքում կարևորվեց սիրո դերը յուրաքանչյուրի կյանքում, ընդգծվեց նրա ապրեցնող ուժը, արարչագործ էությունը: Հնչեցին գեղեցիկ, հուզիչ և հոգեպարար բանաստեղծություններ սիրո մասին:

06.04.2013 թ. ՁՈՆ ՀԱՅ ԿՆՈՋՐ, ՁՈՆ ՀԱՅ ՄԱՅՐԵՐԻՆ

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ուսանողական խորհուրդը նախաձեռնել էր հերթական գեղեցիկ ցերեկույթ՝ «Ձոն հայ կնոջը, ձոն հայ մայրերին» խորագրով:

Ուսանողները խորին հպարտությամբ հիշեցին հայոց պատմության մեջ դերակատարություն ունեցած և անջնջելի հետք թողած արի հայ կանանց՝ Փառանձեմ թագուհուն, Սոսե մայրիկին, մեջբերեցին Մայր Թերեզայի խոսքերից:

07.04.2013 թ. ԼՍԱՐԱՆԻՑ ԴՈՒՐՍ

ԳՊՀ Հրաչյա Աճառյանի անվան լսարանը վերածվել էր հեռուստատեսային յուրօրինակ տաղավարի:

Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպել էր հաղորդում-ցերեկույթ՝ «Լսարանից դուրս» խորագրով՝ նվիրված կանանց, մայրության և գեղեցկության տոնին:

10.04.2013 թ. ԳՊՀ ՈՒՄԱՆՈՂՆԵՐԸ՝ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ

Գավառի պետական համալսարանում կարևորվում է ուսանողների համար արտահամալսարանական միջոցառումների կազմակերպումը, ինչի վառ օրինակ է ԳՊՀ Տնտեսագիտական ֆակուլտետի «ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» և «Ֆինանսներ» բաժինների 3-րդ, նույն բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների այցը Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ:

Ուսանողները եղան բանկի թանգարանում, նրանց համար բանկի աշխատակիցները կարդացին դասախոսություն, կազմակերպվեց քննարկում:

13.04.2013 թ. ՎԵՐԱՊՍՏՐԱՍՏԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

Գավառի պետական համալսարանի Ակադեմիական քաղաքականության վարչության մասնագետներ Սաթենիկ Սարգսյանը և Լիլիթ Թոռչյանը ապրիլի 7-ից 13-ը Եվրոպական միության «TEMPUS. Ararat» ծրագրի շրջանակում մասնակցեցին Իտալիայի Պալերմո քաղաքում կայացած վերապատրաստման դասընթացին:

**17.04.2013 թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ «TEMPUS. HEN-GEAR»
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ**

Գավառի պետական համալսարանի պրոռեկտոր, միջազգային կապերի պատասխանատու Արսեն Ապրոյանը և ԳՊՀ համակարգչային տեխնիկայի սպասարկման մասնագետ, ԳՊՀ շրջանավարտ Սիփան Արևշատյանը ապրիլի 16-ին Եվրոպական միության «TEMPUS. HEN-GEAR» ծրագրի շրջանակում մասնակցեցին Հայաստանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում կայացած հանդիպմանը:

19.04.2013 թ. 20-ԱՄՅԱ ԳՊՀ-ՈՒՄ ԲՈՒՀՕՐՀՆԵՔ Է

Գավառի պետական համալսարանի համար օրը խորին խորհուրդ ուներ. կատարվեց 20-ամյա բուհի օրհնության կարգ՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տնօրհնեքի կարգի համաձայն:

Գավառի պետական համալսարանի օրհնության կարգն անցկացրին Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տեր Սարկոս Եպիսկոպոս Հովհաննիսյանը, Հայկական Եկեղեցու երիտասարդական միավորման հոգևոր պատասխանատու Հայր Եղիշեն, Գավառի հոգևոր հովիվ Տեր Գնեւը և բուհերի հոգևոր պատասխանատու Գեղամ սարկավազը:

20.04.2013 թ. «ՈՃԻՐ ԵՎ ՊԱՏԻԺ»

ԳՊՀ բանասիրական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների ուսանողների համատեղ ջանքերով կազմակերպվել էր Ֆյոդոր Դոստոևսկու «Ոճիր և պատիժ» վեպի քննարկում:

Միջոցառման ընթացքում գեղարվեստական, գրականագիտական և իրավական տեսանկյուններից ներկայացվեցին վեպի առանձնահատկությունները, հերոսների հոգեբանությունն ու գործողությունների դրդապատճառները:

Միջոցառումը հեռարձակվեց ՀՀ Գեղարքունիքի մարզի «Գեղամա» հեռուստաընկերությանը՝ «Համալսարանական ժամ» ծրագրի շրջանակում:

20.04.2013 թ. ՄԵՆՔ ԵՂԵԼ ԵՆՔ, ԿԱՆՔ ՈՒ ՊԻ՛Տ ՇԱՏԱՆԱՆՔ...

Հայոց ցեղասպանության 98-րդ տարելիցին էր նվիրված Գավառի պետական համալսարանի Բնագիտական ֆակուլտետի կողմից կազմակերպված ցերեկույթը:

Բեմականացվեց Հայոց մեծ եղեռնի ոճրագործներից մեկին՝ Թալեաթ փաշային, զնդակահարած Սողոմոն Թեհլերյանի դատավարության տեսարանը:

21.04.2013 թ. «ԱՐԻԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ»

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնը կազմակերպել էր ուսանողական գիտաժողով՝ «Արիեստական բանականության համակարգերի հիմնահարցերը» թեմայով:

Գիտաժողովը նվիրված էր Գավառի պետական համալսարանի հիմնադրման 20-ամյակին:

21.04.2013 թ. «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ»

Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը Հայոց մեծ եղեռնի 98-րդ տարելիցին ընդառաջ կազմակերպել էր սեմինար-քննարկում՝ «Մշակութային ցեղասպանություն» թեմայով:

Սեմինարը վարում էր Գավառի պետական համալսարանի դասախոս, համալսարանի պատմագիտական թանգարանի գիտաշխատող Մերի Քեչիշյանը:

Սեմինարավարը լսարանին ներկայացրեց Հայոց եղեռնին նախորդող և հաջորդող ժամանակահատվածում Արևմտյան Հայաստանում եկեղեցիների, վանքերի և եկեղեցական համալիրների կործանման, ավերման և պղծման վերաբերյալ փաստացի տվյալներ, որոնց վերլուծությունը և թվային համեմատական արդյունքներն ապացուցում են տեղի ունեցած մշակութային սպանդի ողջ եղելությունը և սահմնկեցուցիչ բնույթը:

26.04.2013 թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Գյումրու Միքայել Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում տեղի ունեցավ ուսանողական հանրապետական հերթական գիտաժողովը:

Գիտաժողովին մասնակցեցին նաև Գավառի պետական համալսարանի ուսանողները:

02.05.2013 թ. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՇԱԽՄԱՏ ԵՆ ԽԱՂՈՒՄ

Գավառի թիվ 1 միջնակարգ դպրոցի դասարաններից մեկը վերածվել էր յուրօրինակ «շախմատային խաղատախտակի»:

3-րդ դասարանի դասվար, Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի «մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)» բաժնի 1-ին կուրսի ուսանողուհի Մարինե Զախարյանի և իր դասեր՝ ԳՊՀ ՀՈՒՖ «հաշվապահական հաշվառում» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Իռեն Պետրոսյանի ջանքերով անցկացվեց շախմատին նվիրված բաց-դաս:

05.05.2013 թ. ՄԵՆՔ ՍԻՐՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

1993 թվականի մայիսի 5-ի ՀՀ կառավարության թիվ 208 որոշումը Գավառի պետական համալսարանի ծննդյան վկայականն է:

Այդ օրը բուհում տոնական տրամադրություն էր տիրում. Գավառի պետական համալսարան կոչվող մեծ ընտանիքի բոլոր անդամները սիրով և ջերմությամբ ողջունում էին միմյանց՝ շնորհավորելով համալսարանի ծննդյան 20-ամյակը:

Հոբելյանի առթիվ համալսարանում կազմակերպվել էր գեղեցիկ ցերեկույթ:

Միջոցառման ընթացքում ներկայացվեցին բուհի 20-ամյա պատմությունը, նրա ձեռքբերումներն ու հաջողությունները:

Հնչեցին բազմաթիվ շնորհավորանքներ ու բարեմաղթանքներ:

09.05.2013 թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ «HEN GEAR» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Ս. թ. մայիսի 7-8-ը Երևանի պետական համալսարանում Եվրոպական միության «TEMPUS. HEN GEAR» ծրագրի շրջանակում տեղի ունեցավ երկօրյա դասընթաց, որին

մասնակցում էին նաև Գավառի պետական համալսարանի ներկայացուցիչները՝ ԳՊՀ պրո-
ռեկտոր Արսեն Ապրոյանը, ԳՊՀ Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի
ծրագրավորող Վարազդատ Ավետիսյանը և ԳՊՀ Համակարգչային տեխնիկայի սպասարկման
բաժնի մասնագետ Սիփան Արևշատյանը:

**10.05.2013 թ. ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԵՐՈ**

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի մագիստրատու-
րայի առաջին կուրսի ուսանողների համար «Ձեռներեցություն և նորարարություն. ստեղ-
ծագործական աշխատանքի դերը» թեմայով դասախոսություն կարդաց Ռուսաստանի Դաշ-
նության ազգային հումանիտար համալսարանի դասախոս, սոցիոլոգիական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր, բուհի գիտական խորհրդի քարտուղար Նադեժդա Պոկրովսկայան:

10.05.2013 թ. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ՝ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՅԱՆՁ

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ «E-learning GSU» ԳՊՀ էլեկտրո-
նային ուսուցման համակարգի վերաբերյալ սեմինար-խորհրդատվություն:

Սեմինարը վարում էր «E-learning GSU» համակարգի մշակող, ԳՊՀ հանրության հետ
կապերի և լրատվության բաժնի ծրագրավորող Վարազդատ Ավետիսյանը:

Սեմինարի ընթացքում ներկայացվեցին համակարգին դիմելու, կառավարելու, ուսում-
նական նյութերի տեղադրման գործընթացի կազմակերպման համար նախատեսված
ծրագրագործիքային միջոցները և մեթոդները:

15.03.2013 թ. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՆՔ ՍՈՎՈՐՈՒՄ ԱՆԳԼԵՐԵՆՈՎ

Գավառի պետական համալսարանի օտար լեզուների ամբիոնի դասախոս Աննա
Բալազոզյանի նախաձեռնությամբ ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի «ֆինանսներ»
բաժնի առաջին կուրսում կազմակերպվել էր բաց դաս, որի ընթացքում ուսանողներն անգլե-
րենով խոսեցին տնտեսական միջավայրի, տնտեսական համակարգերի, տնտեսագիտական
«երեք հարցերի»՝ «Ի՞նչ արտադրել», «Ի՞նչպե՞ս արտադրել» և «Ո՞ւմ համար արտադրել»,
շուկայական, պլանային և խառը տնտեսությունների, տնտեսագիտական այլ ինստիտուտ-
ների մասին:

15.03.2013 թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ

Մայիսի 14-ին Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի
դեկան Սամվել Ամիրխանյանի նախաձեռնությամբ ՀՀ կենտրոնական բանկում ԳՊՀ նույն ֆա-
կուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների համար կազմակերպվել էր
սեմինար՝ «Բազել 2 և Բազել 3» թեմայով:

Սեմինարը վարում էր ՀՀ կենտրոնական բանկի Ֆինանսական վերահսկողության
վարչության մասնագետ Աննա Թորոսյանը:

17.05.2013 թ. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆԻ ԴԵՐՈ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Գավառի պետական համալսարանում անցկացվեց սեմինար՝ «Հայաստանի մարզե-
րում համայնքային ոստիկանության կայացմանը նպաստող ոստիկանություն-ուսանող
գործակցությունը» թեմայով:

Սեմինարը կազմակերպվել էր ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության և «Իրավական հետազոտությունների ազգային կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ: Սեմինարին մասնակցում էին Գավառի պետական համալսարանի ուսանողները և ՀՀ ոստիկանության մարզային վարչության ներկայացուցիչներ:

17.05.2013 թ. ԳՊՀ ԲԱՆԱՎԵՃԻ ԱԿՈՒՄԲԸ ՄԵԿ ՏԱՐԵԿԱՆ Է

Գավառի պետական համալսարանի էկոլոգիական գերազանցության կենտրոնում տեղի ունեցավ ԳՊՀ բանավեճի ակումբի անդամների հաշվետու հանդիպումը ԳՊՀ պրոֆեսորադասախոսական և ուսանողական համակազմի հետ:

Նրանք լսարանին ներկայացրին 2012-2013 ուսումնական տարվա ընթացքում իրենց կատարած աշխատանքները, խոսեցին ձեռքբերումների և ունեցած հաղթանակների մասին՝ այդ ամենը մատուցելով հեռուստահաղորդման ձևաչափով:

18.05.2013 թ. ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

Գավառի պետական համալսարանը և Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի կրթական բարեփոխումների հանձնաժողովը, Որակի ապահովման ազգային կենտրոնի աջակցությամբ կազմակերպել էր սեմինար՝ «Որակյալ կրթություն բոլորի համար: Որակի ապահովման համակարգ: Ուսանողի մոդել» թեմայով:

Միջոցառման կազմակերպման նպատակն էր բացահայտել ուսանողների մոտեցումները ՀՀ որակի ապահովման համակարգի, դրանում ուսանողների ներգրավվածության, այնտեղ առկա խնդիրների և առավելությունների վերաբերյալ:

20.05.2013 թ. ԲԱՑ ԴԱՍ՝ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ

Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի «իրավագիտություն» բաժնի առաջին կուրսի ուսանողները՝ ֆակուլտետի դեկան Հանլետ Ղաջոյանի և փոխդեկան Գոհար Գևորգյանի նախաձեռնությամբ, կազմակերպել էին ճանաչողական էքսկուրսիա՝ դեպի Հաղարծին և Գոշավանք:

Պատմամշակութային վայրերում տեղի ունեցավ յուրօրինակ և անմոռաց բաց դաս:

24.05.2013 թ. ՄԱՅԻՍԻ 24-Ը՝ ՍԼԱՎՈՆԱԿԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆ ՕՐ

Գավառի պետական համալսարանի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել էր Սլավոնական գրչության 1150-ամյակին նվիրված ուսանողական գիտաժողով:

Ռուսաց լեզվի և գրականության բաժնի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները հանդես եկան գիտական զեկուցումներով՝ նվիրված սլավոնական գրի սկզբնավորմանը, ռուս պատմությանն ու գրականությանը, ժամանակակից ռուսաց լեզվի քերականությանը և հիմնախնդիրներին: Ծավալվեց հետաքրքիր քննարկում:

**25.05.2013 թ. ՄԻԶԲՈՒՅԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍԼԱՎՈՆԱԿԱՆ
25.05.2014 ԳՐԶՈՒԹՅԱՆ 1150-ԱՄՅԱԿԻՆ**

Մայիսի 24-ին Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում կազմակերպվել էր Սլավոնական գրչության 1150-ամյակին նվիրված միջբուհական մրցույթ-վիկտորինա, որին մասնակցում էին նաև Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի Ռուսաց լեզու և գրականություն բաժնի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները:

Գավառի պետական համալսարանի «ռուսաց լեզու և գրականություն» բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհիներ Սոֆյա Թովմասյանը, Ջուլիետա Շահինյանը և նույն բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Սաթենիկ Մելքոնյանը զբաղեցրին համապատասխանաբար երկրորդ և երրորդ մրցանակային տեղերը և արժանացան պատվոգրերի ու խրախուսական նվերների:

26.05.2013 թ. ԵՎՐՈՊԱՅԻ ՕՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մայիսի 25-ին Երևանի Զյուսիսային պողոտայում կազմակերպվել էր Եվրոպայի օրվան նվիրված տեղեկատվական ցուցահանդես, որին մասնակցում էր Գավառի պետական համալսարանի պատվիրակությունը:

Գավառի պետական համալսարանին հատկացված տաղավարում ուսանողները՝ ԳՊՀ պրոռեկտոր Արսեն Ապրոյանի ղեկավարությամբ, ներկայացնում էին Եվրոպական միության «Erasmus Mundus» և «Tempus»՝ ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունության ծրագրերը, մասնավորապես այդ ծրագրերի շրջանակում արտերկրի բուհերում սովորած և հետազոտական աշխատանք կատարած ԳՊՀ ուսանողների և աշխատակիցների փորձը, ինչպես նաև Եվրոպական համալսարաններ մեկնել պատրաստվող ուսանողների օրինակը:

**30.05.2013 թ. ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄՊԱՆԸ
ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**

Գավառի պետական համալսարանում հյուրընկալվել էր Հայաստանի Հանրապետությունում Արգենտինայի Հանրապետության դեսպան Դիեգո Ալվարես Ռիվերան:

Արգենտինայի պատվիրակությունը՝ Գեղարքունիքի փոխմարզպետ Անդրանիկ Հակոբյանի ուղեկցությամբ, հանդիպեց Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին համագործակցության հնարավոր ուղղությունները:

**01.06.2013 թ. ՈՐԱԿԻ ԱՊԱՅՈՎՄԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐ-
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

Մայիսի 27-31-ը Գավառի պետական համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը և «որակի ապահովման» բաժնի մասնագետներ Մարիամ Նախրատյանը, Արմինե Գրիգորյանը և Մանանե Հակոբյանը Ջերմուկում մասնակցեցին Համաշխարհային բանկի՝ «Միջազգային խորհրդատվական ծառայություն. Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրում կամ դրանց հետագա բարելավում» դրամաշնորհային

ծրագրի շրջանակում կազմակերպված որակի ապահովման աշխատանքային խմբի միջազգային սեմինար-խորհրդակցությանը:

02.06.2013 թ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲՈՒՀՈՒՄ ՈՒՍԱՆԵԼՈՒ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ Եվրոպական միության «Erasmus Mundus. Արտաքին համագործակցության պատուհան» ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունության ծրագրի շրջանակում Մեծ Բրիտանիայի Շեֆիլդի համալսարանի Հունաստանի մասնաճյուղի բիզնեսի կառավարման և տնտեսագիտության ֆակուլտետի «մենեջմենթ» բաժնում սովորած և հետազոտական աշխատանք կատարած ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի «ֆինանսներ» բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Անի Մազմանյանի հաշվետվության ներկայացումը՝ շնորհանդեսի ձևով:

05.06.2013 թ. ԳԱՎԱՐ, ԹԵ՞ ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏ

Գավառի պետական համալսարանում «Ջինիշյան հիշատակի հիմնադրամի» և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից՝ «Ուսանողական քաղաքացիական ընդգրկվածություն. համալսարանական բանավեճի ակումբներ» ծրագրի շրջանակում տեղի ունեցավ հերթական բանավեճը:

Քննարկման էր դրված Գավառ քաղաքի անվանափոխության հարցը: Ուսանողները կողմ էին անվանափոխությանը:

06.06.2013 թ. ՀՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅԾ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՐԱՉՅԱ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻՆ

Հունիսի 5-ին Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Հրաչյա Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտում ակադեմիայի հիմնադրման 70-ամյակի հոբելյանական միջոցառումների շրջանակում տեղի ունեցավ ակադեմիայի գիտնական ու մանկավարժ, ակադեմիայի հիմնադիր անդամ Հրաչյա Խաչատուրի Բունիաթյանին նվիրված հուշ-ցերեկույթ:

Միջոցառումների կազմակերպիչներն էին ՀՀ ԳԱԱ Հրաչյա Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտը և Գավառի պետական համալսարանը:

Միջոցառմանը մասնակցեց ԳՊՀ պատվիրակությունը՝ ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի գլխավորությամբ:

06.06.2013 թ. ՕՁՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆԸ

Գավառի պետական համալսարանում, Շրջակա միջավայրի պահպանության միջազգային օրվա խորհրդին հետևելով, Միավորված Ազգերի Կազմակերպության «Ինստիտուցիոնալ հզորացում» ծրագրի շրջանակում կազմակերպվել էր սեմինար՝ «Օզոնային շերտի պահպանությունը» թեմայով:

Սեմինարն իրականացվեց ՀՀ բնապահպանության նախարարության և ՄԱԿ-ի «Օզոնային շերտը քայքայող նյութերի ազգային ծրագրի» կողմից:

**07.06.2013 թ. ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄՊԱՆԸ՝ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**

Գավառի պետական համալսարանը հյուրընկալել էր Հայաստանի Հանրապետությունում Ղազախստանի Հանրապետության դեսպանության պատվիրակությանը՝ արտակարգ և լիազոր դեսպան Աիմդոս Բոզժիգիտովի գլխավորությամբ:

ՀՀ-ում Ղազախստանի Հանրապետության դեսպանատան և «Եվրոպական ինտեգրում» հասարակական կազմակերպության համատեղ ջանքերով ԳՊՀ-ում կազմակերպվել էր սեմինար-քննարկում՝ «Ղազախստանի կրթական համակարգի զարգացումը և գիտական ձեռքբերումները» թեմայով:

Ներկայացվեցին նաև ՀՀ-ում կրթական բարեփոխումների հիմնական ուղղությունները:

**15.06.2013 թ. ԳՊՀ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ 7–ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑ**

Հունիսի 11-13-ը Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում տեղի ունեցավ Հայաստանի Ուսանողական ազգային ասոցիացիայի 7–րդ ընդհանուր ժողովը, որին որպես լիիրավ անդամ մասնակցեց նաև Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհրդի պատվիրակությունը:

16.06.2013 թ. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԽԱԶԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻՆ

Հունիսի 15-ին Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանում Երևանի և Տարտուի պետական համալսարանների կողմից կազմակերպվել էր «Խաչատուր Աբովյան: Քաղաքակրթությունների խաչմերուկում» խորագիրը կրող միջազգային գիտաժողով, որին մասնակցում էր նաև Գավառի պետական համալսարանի ընդհանուր գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Նորայր Ղազարյանը:

ԳՊՀ դասախոսը հանդես եկավ ««Վերք Հայաստանին»՝ հեղաշրջող իրողություն հայ գրականության մեջ» թեմայով զեկուցմամբ:

19.06.2013 թ. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ Միավորված ազգերի կազմակերպության հայկական ասոցիացիայի «Վստահության կառուցումը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում կազմակերպվել էր սեմինար-դասընթաց՝ «Մարդու իրավունքները Հայաստանում» թեմայով:

**21.06.2013 թ. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՄՇԱԿՈՒՄ**

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ «Էլեկտրոնային հարցումների կազմակերպման և արդյունքների մշակման» (www.gsu.am/elquery) համակարգչային ծրագրի շնորհանդեսը:

ԳՊՀ համակարգչային տեխնիկայի սպասարկման բաժնի մասնագետ Սիփան Արևշատյանը, ով նախագծել և մշակել է համակարգը, ներկայացրեց համակարգից օգտվելու,

այն կառավարելու, հարցաթերթերի տեղադրման գործընթացի կազմակերպման համար նախատեսված գործիքային միջոցները և մեթոդները:

25.06.2013 թ. ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՖՐԱՆՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ՇԱՔԱԹՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հունիսի 17-24-ը Ֆրանսիայի Հանրապետությունում կայացավ Ֆրանս-հայկական գերազանցության շաբաթը: Շաբաթը կազմակերպել էին ՀՀ սփյուռքի նախարարությունը, Ֆրանսիայում ՀՀ դեսպանությունը, «Terre d' Armenie» կազմակերպությունը:

Այն անցկացվեց Եվրոպայի մշակութային մայրաքաղաք հռչակված Մարսել քաղաքում՝ Մարսելի քաղաքապետարանի հովանավորությամբ:

Ֆրանս-հայկական գերազանցության շաբաթվա շրջանակում ՀՀ Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունները ներկայացրեց մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը:

Ցուցադրվեց Գեղարքունիքի մասին պատմող տեսաֆիլմ, որն անդրադարձավ մարզի քաղաքային և գյուղական համայնքներին, պատմամշակութային հուշարձաններին, զարգացման առկա ներուժին, Գավառի պետական համալսարանի գործունեությանը, մարզի մյուս հաստատություններին:

Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը ներկայացրեց համալսարանի՝ որպես Գեղարքունիքի մարզի կրթական, գիտական, մշակութային կենտրոնի հիմնական առաքելությունը, քսանամյա բուհի գործունեության առանցքային ուղղությունները, Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Erasmus Mundus» և «Tempus» արտաքին համագործակցության ծրագրերին համալսարանի մասնակցության արդյունքները:

26.06.2013 թ. ԳՊՀ ՀԱՎԱԿՈՈՒՊՑԻՈՆ ՓՈՐՁԸ

Հունիսի 24-25-ը ՀՀ կրթության և գիտության նախարարության և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի նախաձեռնությամբ Երևանում տեղի ունեցավ սեմինար-քննարկում՝ «Հայաստանում բարձրագույն կրթության կարիքներն ու մարտահրավերները» թեմայով:

Սեմինարի նպատակն էր բացահայտել ՀՀ կրթական համակարգի խնդիրները, նախանշել դրանց լուծման հնարավոր ուղիներ, քննարկել կրթության որակի ապահովման, ուսումնական գործընթացում ուսանողների ակտիվ մասնակցության, ինչպես նաև բարձրագույն կրթության թափանցիկության և բուհերի կողմից հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման վերաբերյալ մի շարք հարցեր:

Սեմինարին մասնակցում էր Գավառի պետական համալսարանի հանրության հետ կապերի և լրատվության բաժնի վարիչ Պապին Մուրադյանը: Վերջինս լսարանին ներկայացրեց ԳՊՀ հաջողված հակակոռուպցիոն փորձը:

29.06.2013 թ. ԳԵՐՄԱՆԱԲՆԱԿ ՀԱՅԵՐԸ ԳՊՀ-ՈՒՄ

Գավառի պետական համալսարան էին այցելել Գերմանիայի Բոխումի Ռուր համալսարանի պրոֆեսոր, հայտնի ցեղասպանագետ Միհրան Դաբաղը և գերմանաբնակ հայորդի Սուրեն Օհանյանը՝ ընտանիքի անդամների հետ:

ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը գերմանաբնակ հայերին ներկայացրեց Գավառի պետական համալսարանի ստեղծման պատմությունը, խոսեց բուհի հիմնական ձեռքբերում-

ների, 20 տարիների ընթացքում գրանցած հաջողությունների և առկա խնդիրների, հանրապետական և միջազգային համագործակցության ծրագրերի մասին:

Ներկաները դիտեցին Գավառի պետական համալսարանի մասին պատմող տեսանյութ:

03.07.2013 թ. ՀԱՇՎԵՏՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում կազմակերպվել էր հաշվետու հանդիպում ֆակուլտետի առաջին կուրսեցիների ծնողների հետ: Ներկայացվեցին ուսանողների առաջադիմության արդյունքները, խոսվեց ուսանողների ինքնուրույն աշխատանքի կարևորության, նոր ուսումնական տարվա անելիքների ու ակնկալիքների մասին:

04.07.2013 թ. ԳՊՀ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Հուլիսի 3-ին «Երկիր մեդիա» հեռուստաընկերության ուղիղ եթերում «Ջինիշյան հիշատակի հիմնադրամի» և ԱՄՆ դեսպանատան կողմից՝ «Ուսանողական բանավեճի ակումբներ» ծրագրի շրջանակում կազմակերպվել էր հեռուստաբանավեճ՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտում պետական պատվերը ծառայում է իր նպատակին» թեմայով:

Բանավիճում էին Գավառի և Գորիսի պետական համալսարանների բանավեճի ակումբների թիմերը:

Գավառի պետական համալսարանի թիմը հանդես էր գալիս «կողմ» դիրքորոշմամբ: Ներկայացված փաստարկների հիման վրա ապացուցելով իր դիրքորոշման ճշմարտացիությունը՝ Գավառի պետական համալսարանի բանավեճի ակումբի ուսանողները հաղթող ճանաչվեցին:

05.07.2013 թ. ԳՊՀ-Ն ԿՅԱՆՔ ՃԱՆԱՊԱՐՀԵՑ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ 16-ՐԴ ՍԵՐՆԴԻՆ

Գավառի պետական համալսարանում տոնական տրամադրություն էր տիրում: 20-ամյա բուհը կյանք ճանապարհեց շրջանավարտների 16-րդ սերնդին:

ԳՊՀ 662 ուսանողներից 2013 թվականին բուհն հաջողությամբ ավարտեցին և դիպլոմներ ստացան 602-ը:

06.07.2013թ. ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ՍՈՂԵԼԸ ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԻՑ Է

Հունիսի 24-ին հրապարակվեցին «Ինթերգրիթի էքշն» կազմակերպության կողմից հայտարարած «Բարեխղճությունը բիզնեսում» թեմայով ուսումնական օրինակների մրցույթի հաղթողների անունները:

Մրցույթին մասնակցելու հայտ էին ներկայացրել Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության համալսարանների և բիզնես կազմակերպությունների 12 ներկայացուցիչներ:

ԳՊՀ դասախոսներ Նարինե Թադևոսյանի և Աստղիկ Հովեյանի ներկայացրած «Բիզնեսը և նրա միջավայրը» վերտառությամբ ուսումնական օրինակը զբաղեցրեց մրցանակային 2-րդ տեղը:

**21.07.2013 թ. ՀԵՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԸ «TEMPUS. HEN-GEAR»
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ**

Հուլիսի 14-19-ը Գավառի պետական համալսարանի պրոռեկտոր, միջազգային կապերի պատասխանատու Արսեն Ապրոյանը և ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի ծրագրավորող, ԳՊՀ շրջանավարտ Վարազդատ Ավետիսյանը եվրոպական միության «TEMPUS. HEN-GEAR» ծրագրի շրջանակում մասնակցեցին Իտալիայի Բոլոնիա քաղաքում կայացած աշխատաժողովին:

18.08.2013 թ. ԳՊՀ ԹԻՍԸ՝ «ԲԱՁԵ-2013-Ի » ՀՆԳԱԿԻ ՍԵՂԱԼԱԿԻՐ

Օգոստոսի 12-ից 18-ը Ծաղկաձոր քաղաքի Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հանգստյան տանն անցկացվեց «Բազե-2013» համահայկական երիտասարդական հավաքը:

Հավաքի ընթացքում Հայաստանի, Արցախի և Սփյուռքի 18-30 տարեկան շուրջ 500 երիտասարդներ, համախմբվելով ՀՀ պետական դրոշի գույները խորհրդանշող ճակատներում, ուժերը չափեցին մարզական տարբեր խաղերում, ինտելեկտուալ և մշակութային մրցույթներում, հանդիպումներ ունեցան ՀՀ պետական, քաղաքական, հասարակական և մշակութային գործիչների հետ, սովորեցին ազգային երգեր ու պարեր:

Հավաքին մասնակցեց Գավառի պետական համալսարանի ջոկատը՝ անդամակցությամբ Պայծառ Քոչարյանի, Տարոն Ավետիսյանի, Վանիկ Կլեկչյանի, Արփինե Խանդանյանի, Արեգ Սինանյանի, Ջեյրան Հարությունյանի, Անի Մազմանյանի, Վանիկ Ջանգիզորյանի, Դավիթ Զիրոյանի:

ԳՊՀ թիմը Գավառ վերադարձավ մեկ ոսկե, երեք արծաթե և մեկ բրոնզե մեդալներով:

22.08.2013 թ. ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՀՆԱԳԵՏԻ ԶԱՎԱԿՆԵՐԸ՝ ԳՊՀ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Գավառի պետական համալսարան էին այցելել ԳՊՀ պատմագիտական թանգարանի հիմնադիր, պատմական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր, երջանկահիշատակ Վարչամ Ավետյանի զավակները:

Վահան, Նայիրե և Տաթևիկ Ավետյանները թանգարանի գիտաշխատող և Վարչամ Ավետյանի թոռնուհի Մերի Քեչիշյանի ուղեկցությամբ շրջեցին Վարչամ Ավետյանի անվան թանգարանում, ծանոթացան ցուցանմուշներին, արտահայտեցին իրենց տպավորություններով իրենց հուշերով ու տպավորություններով:

Ն. Վ. Մուրադյան, Հ. Է. Մկրտչյան՝

ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժնի մասնագետներ

Վ. Կ. Ավետիսյան՝

ԳՊՀ www.gsu.am կայքի ծրագրավորող

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

Ազգանուն, անուն, հայրանուն	Ժառայողական 0-264	Էլեկտրոնային փոստի հասցե
ԳՊՀ-ի կառավարման խորհրդի նախագահ Հակոբյան Զրանուշ Զրանտի	0-60-46-02-01 0264-2-57-75	minister@mindiaspora.am
ԳՊՀ ղեկավար Հակոբյան Ռուզաննա Խաչիկի	0-60-46-02-01	rector@gsu.am
Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Կուտուզյան Նելլի Ալբերտի	0-60-46-04-03	nkutuzyan@gsu.am
Տնտեսական գծով պրոռեկտոր Ապրոյան Արսեն Զրաչիկի	0-60-46-12-64	aproyan@gsu.am
Բանասիրական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Ասոյան Թաթուլ Արտիկի	0-60-46-12-44	fphilology@gsu.am
Բնագիտական ֆակուլտետի դեկան Ավագյան Մարտին Պատվականի	0-60-46-12-55	fnsociences@gsu.am
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Ղաջոյան Համլետ Գիրշայի	0-60-46-12-70	fhumanities@gsu.am
Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ամիրխանյան Սամվել Գրիգորի	0-60-46-12-66	feconomics@gsu.am
Հեռակա ուսուցման ֆակուլտետի դեկանատ	0-60-46-12-90	fptedu@gsu.am
Ակադեմիական քաղաքականության վարչություն Ղարիբյան Ալինա Ամբիկի	0-60-46-12-42	academicpolicy@gsu.am
Ուսանողական խորհրդի նախագահ Քոչարյան Պայծառ Հովհաննեսի	0-60-46-12-70	scouncil@gsu.am
Բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալ Բաղայան Մարինե Միքայելի	0-60-46-12-40	fphilology@gsu.am
Տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ Հերգոյան Մարիամ Նորիկի	0-60-46-12-60	feconomics@gsu.am
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկանի տեղակալ Գևորգյան Գոհար Վոլոդյայի	0-60-46-12-70	fhumanities@gsu.am
Բնագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ Գարեյան Մելանյա Վոլոդյայի	0-60-46-12-50	fnsociences@gsu.am
Գլխավոր հաշվապահ Մուրադյան Գուրգեն Գևորգի	0-60-46-12-46	gnumner@gsu.am
Ռեկտորի օգնական Մայիլյան Անուշ Տոլիկի	0-60-46-12-45	rectorassist@gsu.am
Կադրերի և հատուկ բաժնի պետ Սաֆարյան Խաչատուր Ժորայի	0-60-46-12-41	hr@gsu.am
Արհմիության նախագահ Սիրունյան Լյովա Գուրգենի	0-60-46-12-49	union@gsu.am
Ավագ պարետ Զաքոյան Տարիել Զրաչիկի	0-60-46-12-86	commandant@gsu.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ծրագրեր, զարգացումներ, արդյունքներ.....	3
Ընդհանուր տեղեկություններ համալսարանի մասին	9
Միջազգային համագործակցություն	38
Դասախոսների գործուղումներ	51
Ուսումնագիտական աշխատանքներ	60
Բանասիրական ֆակուլտետ.....	81
Բնագիտական ֆակուլտետ	100
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ.....	129
Տնտեսագիտական ֆակուլտետ.....	152
Հեռակա ուսուցման ֆակուլտետ	182
Ակադեմիական քաղաքականության վարչություն	190
ԳՊՀ գրադարան	196
ԳՊՀ Վ. Ավետյանի անվան պատության թանգարան	201
ԳՊՀ հանրության հետ կապերի և լրատվության բաժին.....	205
ԳՊՀ համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոն	221
ԳՊՀ արհեստակցական կազմակերպություն	223
Ուսանողական խորհուրդ և ուսանողական գիտական ընկերություն	224
ԳՊՀ իրավաբանական կլինիկա	228
ԳՊՀ տնտեսատեխնիկական գործունեություն.....	231
ԳՊՀ հիշարժան միջոցառումներ	236
Տեղեկատու	265

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2012-2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՊՀ
Գեղարքունիքի մարզ,
քաղաք Գավառ, Հրանտ Հակոբյան 1,
հեռ. (3760) 46-02-01
կայք. www.gsu.am
Էլ. փոստ` info@gsu.am